OL
41564
23

Digitized by Google
Original from
HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-15 05:32 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

OL 41564.23

Harvard College Library

FROM

S. C. Kebabian
Cambridge

Digitized by Google

Original from
HARVARD UNIVERSITY

Generated on 2016-06-15 05:33 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Generated on 2016-06-15 05:34 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from
HARVARD UNIVERSITY

Generated on 2016-06-15 05:34 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from
HARVARD UNIVERSITY

Generated on 2016-06-15 05:34 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from
HARVARD UNIVERSITY

Generated on 2016-06-15 05:34 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from
HARVARD UNIVERSITY

Bound in cloth
IV 10056

ՆՈՐ

ԵՐԳԱՐԱՆ ԱԶԳԱՅԻՆ

Հրատարակիչ
ՀԱՅԿԱԿ Ց. ԷԿԻՆԵԱՆ

ՆԻՒ ԵՈՐՔ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Հ. ԷԿԻՆԵԱՆ
1892

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-15 05:34 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Generated on 2016-06-15 05:35 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from
HARVARD UNIVERSITY

Selections from

Armenian

Lyric Poems and National Son

By

Contemporary Writers,

With Portraits

of

His Beatitude Nersès Varjabe

(Late Patriarch of Constantinople;

Leo Margar Alishan,

(Distinguished poet, historian etc.,

and

His Holiness Mgrditch Khrimia

(Poet and patriot; Ex-Armenia Patriarch of Constantinople; Catholic Elect of All Armenians.)

Digitized by Google

Original from HARVARD UNIVERSITY

Generated on 2016-06-15 05:35 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Azgiman Hayoc' Tsayn [illegible]

ԳՈՐ

New Book of National Songs

Published by Highgug H. Azgiman

New York

Azgiman Press

1892.

Generated on 2016-06-15 05:35 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY

gs

Generated on 2016-06-15 05:36 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from
HARVARD UNIVERSITY

ՆՈՐ

Հրատարակիչ
ՀԱՅԿԱԿ Ց. ԷԿԻՆԵԱՆ

ՆԻՒ ԵՈՐՔ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Հ. ԷԿԻՆԵԱՆ
1892

Generated on 2016-06-15 05:36 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY

~~OL 40707.7~~
~~IV. 10056~~
OL 41564.23
~~OL 41564.23~~
HARVARD COLLEGE
OCT 18 1892
LIBRARY.

S. C. Kebabian

Cambridge

Generated on 2016-06-15 05:36 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from
HARVARD UNIVERSITY

Generated on 2016-06-15 05:36 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from
HARVARD UNIVERSITY

ՆԵՐՍԷՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ

Generated on 2016-06-15 05:37 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from
HARVARD UNIVERSITY

ՆՈՐ

ԵՐԳ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ

Ազատն Աստուած այն օրից՝
Երբ հաճեցաւ չունչ փըչել.
Իմ հոգանիւթ շինուածքին,
Կենդանութիւն պարգևել։

Ես անբարբառ մի մանուկ՝
Երկու ձեռքս պարզեցի.
Եւ իմ անզօր թեւերով,
Ազատութիւնս գրկեցի։

Մինչ գիշերը անհանգիստ՝
Օրորոցում կապկապած.
Լալիս էի անդադար,
Մօրս քունը խանգարած։

Խնդրում էի նորանից՝
Բազուկներս արձակել.
Ես այն օրից ուխտեցի,
Ազատութիւնը սիրել։

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-15 05:42 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Թոթով լեզուիս մինչ կապերն՝
Արձակուեցան բացուեցան.
Մինչ ծնողքս իմ ձայնից,
Խնդացին ու բերկրեցան։

Նախկին խօսքն որ ասացի՝
Զէր հայր կամ մայր, կամ այլ ինչ.
Ազատութի՛ւն դուրս թռաւ,
Իմ մանկական բերանից։

«Ազատութի՛ւն, ինձ կրկնեց՝
Ճակատագիրը վերեւից.
«Ազատութեան դու գինուոր,
Կամի՞ս գրվիլ այս օրից»։

«Ո՛հ, փչոտ է ճանապարհդ՝
Քեզ չատ փորձանք կ՝սպասէ.
Ազատութիւն սիրողին,
Այս աշխարհը խիստ նեղ է»։

—Ազատութի՛ւն,—գոչեցի՝—
Թո՛ղ որոտայ իմ գլխին.
Փայլակ, կայծակ, հուր, երկաթ,
Թո՛ղ դաւ դընէ թշնամին։

Ես մինչ ի մահ կախախան՝
Մինչեւ անարգ մահու սիւն,
Պիտի գոռամ պիտ՝ կրկնեմ,
Անդադար՝ Ազատութի՛ւն։

Մ. ՆԱԼԲԱՆԴԵԱՆՑ



Generated on 2016-06-15 05:43 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY

ՀԱՑ ԱՊՐԻՆՔ

Հա՛յ ապրինք, եղբա՛ր, մարդկութեան մէջը,
Հայ կնքեր է մեզ Պատմութեան էջը.
Հայ անուամբ զմեզ կ'ողջունեն երկինք. —
Եղբա՛ր, Հա՛յ ապրինք։

Հա՛յ ապրինք. — մեր հայրն է այն Դիւցազուն,
Որ զազատութիւն ւովրեցուց մարդուն.
Ու մեզ վեհ Անուն մը տուաւ բաժինք. —
Եղբա՛ր, Հա՛յ ապրինք։

Մեր աշխարհն է սո՛ւրբ, — Մեր հողուն վրան,
Աստուա՛ծ է քալեր, հանելով զԱդամ։
Մեր լեզուն ստեղծեր ու խօսեր նախ ինք. —
Եղբա՛ր, Հա՛յ ապրինք։

Հայն ու մարդկութիւն՝ նո՛յն ունին օրրան,
Երկիր փրկութեան է մերս Հայաստան.
Կըրօնից նախկին սեղան է Մասիք. —
Եղբա՛ր, Հա՛յ ապրինք։

Հայուն պերճ անուն՝ ոչ միայն յերկիր,
Այլ և յեթե՛ր մէջ շողայ լուսալիր.
Քաջ Հայկին աստեղք անմա՛հ են յերկինք. —
Եղբա՛ր, Հա՛յ ապրինք։

Հա՛յ ապրինք. — ո՞ր ազգ կայ Հայուն նման,
Որ ունենայ հին պարծանքներ ա՛յսքան,
Ո՞ր ազգ Հայուն պէս չքեղ Հայրենիք. —
Եղբա՛ր, Հա՛յ ապրինք։

Generated on 2016-06-15 05:43 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY

Ըսէ՛ք, ո՞ր ազգին չորս առաքեալներ,
Երկնից թագաւորն է դեսպան ղրկեր,
Ո՞ր թագաւորին հետ թղթակցեր ինք։—
Եղբա՛ր ք, Հա՛յ ապրինք։

Ո՞վ կրնայ համրել սրբոց մեր զանուանք,
Մեր պատմութիւնն է նահատակա՛ց ցանկ։
Մեր եկեղեցին յերկրի է Երկի՛ն ք։—
Եղբա՛ր ք, Հա՛յ ապրինք։

Քրիստոսի ունիմք անդրանիկ օրհնեանք,
Հաւատոց եղանք միշտ ախոյեան մենք։
Հայը զարմացոյց զերկիր և զերկինք։—
Եղբա՛ր ք, Հա՛յ ապրինք։

Մեր ազգ հետևող է միշտ Յիսուսի,
Որ Խաչն ա՛յսչափ դար առած է յուսի։
Ո՛չ, չը խոնարհիր չըլլար դասալիք։—
Եղբա՛ր ք, Հա՛յ ապրինք։

Այո՛, Խաչին կեանք՝ կեանք է վշտալից,
Այո՛, Հայուն կեանք՝ կեանք է ցաւալից։
Բայց Խաչն՝ յաղթութի՛ւն ունի վեհ կընիք։—
Եղբա՛ր ք, Հայ ապրինք։

Ո՛չ, ճակատագիր մեր չէ՛ միշտ տխուր,
Ըզթշուառութեան ուտել հացն ու ջուր։
Նոր երջանկութեան ապագա՛յ մ՛ունինք...
Եղբա՛ր ք, Հա՛յ ապրինք։

Հա՛յ ապրինք, որ մեր որդիք ալ, եղբարք,
Կարենան պարծիլ որ զմեզ ունին հարք։
Ջըլլա՛նք Հայ անուան չըլլանք նախատինք։—
Եղբա՛ր ք, Հա՛յ ապրինք։

Խ. ԵՊԻՍԿ. ՆԱՐ ՊԷԶ

Generated on 2016-06-15 05:44 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY

ԵՐԳ ԶԻՆՈՒՈՐԱՑ

Զինուոր էի Հայոց ազգին մըտերիմ,
Երբ Հայաստան քարքանդ արեց Թշնամին.
Գինդ պինդ ցաւեց սիրտը արի Հայերուն,
Այն օր նոքա Թափել տուին գետ արիւն։

Շատ շատ քաջեր ընկան ասդից ու անդից,
Ես էլ ընկայ Թշնամիի սուր նետից.
Իմ մարմինը դաշտի մէջին է ինկած,
Քրիստոնէի սուրբ օրէնքով չէ՛ Թաղուած։

Դու մի՛ մընար աչքըդ արցունք օրՀ ի բուն,
Սիրականդ իմ, սիրական, մըտի՛ր ի քուն.
Առտուն կուգայ չարագուշակ գուժկանը,
Սուգ, ողբ, կըսկիծ նա կը նիւԹէ իմ տանը։

Երբ որ լըսես վաղաժամիկ իմ մահը,
Ա՛ռ երկու Թի ու կրկաԹէ սուր բահը.
Ա՛ռ քու հետը մի ըսպիտակ մեծ տապան,
Փորէ՛ խորին ինծի համար գերեզման։

Գերեզմանիս վրայ բըսնի վարդենին,
Վարդը բացուի, աչքը գրաւէ ամենին։
Սոխակին էլ Թո՛ղ գրաւէ նա հոգին,
Քաղցր տաղեր Թո՛ղ ներշնչէ սոխակին.

Թո՛ղ սոխակը անցքըս պատմէ ամենուն,
Թո՛ղ լըսողը ողորմիս տայ իմ հոգուն։

Ռ. Տ.—Գ. ՊԱՏԿԱՆԵԱՆ

Generated on 2016-06-15 05:44 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY

ՄԱՀԱՄԵՐՁ ՀԱՑՐԵՆԱՍԷՐ

Ազնիւ ընկեր, մեռանում եմ,
Բայց հանգիստ եմ ես հոգւով.
Իմ թշնամիքս ես օրհնում եմ,—
Օրհնո՛ւմ եմ քեզ Աստուծով։

Հեռանում եմ, անգին ընկեր,
Զրգնահատած ոչ ոքից.
Բայց հաւաստեաւ անձնանուէր,
Ազգիս մըշակ կը հաշուիմ։

Ազնիւ ընկեր, չը մոռանաս,
Անդաւաճան ջերմ սիրով.
Ես սիրել եմ իմ Հայրենիք,—
Դրնա՛ և դու նոյն շաւղով։

Խեղճութիւնը Հայոց ազգի,
Կարեկցաբար մըտածի՛ր.
Ոսկէ գրքոյկն Եղիշէի,
Քաջ առաջնորդ քեզ ընտրի՛ր։

Այն տեղ սուրբ կրօն, ազգ միաբան,
Ազատ կամքով ու խըղճով.
Այն տեղ Վարդան, անմա՛հ Վարդան,
Իւր խնկելի քաջերով։

Հայրենի՛ք,—սեղան սրբութեան,—
Ես՝ Աստուծոյ առաջև.
Շատ կաղաչեմ, շատ կարտասուեմ,
Որ ծագէ քեզ նոր արեւ։

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-15 05:45 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Իմ մըտերիմ, մահըս մօտ է,
Բայց հանգիստ եմ ես հոգւով.
Որովհետև խիղճս արդար է,
Ճշմարտութեան ջատագով։

Ս. ՇԱՀԱԶԻԶԵԱՆՑ

ԱՐԱՔՍԻ ԱՐՏԱՍՈՒՔԸ

Մայր—Արաքսի ափերով,
Քայլամոլոր գընում եմ.
Հին հին դարուց յիշատակ,
Ալեաց մէջը պըտրում եմ։

Բայց նոքա միշտ յեղյեղուկ,
Պըղտոր ջըրով եզերքին.
Դարիւ դարիւ խըփելով,
Փախչ·ում էին լալագին։

—Արա՛քս, ինչո՞ւ ձըկանց հետ,
Պար չես բըռնում մանկական.
Դու դեռ ծովը չըհասած,
Սգաւոր ես ինձ նըման։

Ինչո՞ւ արցունք ցայտում են,
Քու սէդ, հըպարտ աչերից.
Ինչո՞ւ արագ փախչում ես,
Այդ հարազատ ափերից։

Մի՛ պըղտորիլ յատակըդ,
Հանդարտ հոսէ՛ խայտալով.
Մանկութիւնը քու կարճ է,
Շուտ կը հասնիս դէպ ի ծով։

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-15 05:45 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Վարդի թըփեր թող բուսնին,
Քու հիւրընկալ ափի մօտ.
Սոխակները նոցա մէջ,
Երգեն մինչեւ առաւօտ։

Մըշտադալար ուռիներ,
Սառ ծոցի մէջ քու ջրին.
Ճըկուն ոստըն ու տերեւ,
Թո՛ղ թաց անեն տապ օրին։

Ափերիդ մօտ երգելու,
Հովիւք թո՛ղ գան հաւարձակ.
Գառն ու ուլը քու վրձիտ,
Ջուրը մըտնեն միշտ արձակ։—

Մէջքը ուռցուց Արաքսը,
Փըրփուր հանեց իր տակից.
Ամպի նըման գոռալով,
Էսպէս խօսեց յառակից։

*

* *

«Խիգա՛ին, անմի՛տ պատանի,
Նիրհըս ինչո՞ւ դարեւոր,
Վըրդովում ես, նորոգում
Իմ ցաւերը բիւրաւոր»։

«Սիրելիի՞մահից յետ,
Ե՞րբ ես տեսել, որ այրին՝
Ոտքից գլուխ պըճնուի,
Իր զարդերով թանկագին»։

«Որի՞ համար զարդարուիմ,
Որի՞ աչքը հրապուրեմ.
Շատերն ինձ են ատելի,
Շատերին ես օտար եմ»։

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-15 05:45 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

«Կար ժամանակ որ ես էլ,
Շըքեղազարդ հարսի պէս.
Հազար ու բիւր պըչրանքով,
Փախչում էի ափերէս։»

«Ցատակըս պարզ ու վըճիտ,
Կոհակներս ոլորուն.
Լուսաբերը մինչեւ այգ,
Ջըրիս միջին էր լողում»։

«Ի՞նչըս մնաց այն օրից,
Ո՞ր ջըրամօտ գեղերըս.
Ո՞րը իմ չէն քաղաքից,
Ո՞ր բերկրալի տեղերըս»։

«Տուրքը ջըրի ամեն օր,
Իր սուրբ ծոցէն Արարատ.
Մայրախընամ ինձ սընունդ,
Պարգեւում է լի առատ»։

«Բայց ես այն սուրբ ջըրերով,
Սուրբ Ակոբի աղբիւրին.
Պիտի ցօղեմ արտոր՞այք,
Իմ ատելի օտարին»։

«Կամ կենսատու իմ ջըրով,
Ափերիս մօտ կըկըզած.
Իւր նամա՞զը կատարէ,
Թուրք կամ Պարսիկը հոտած»։

«Մինչ իմ որդիք —ո՞վ գիտէ—
Ծարաւ, նօթի, անտէրունչ.
Օտար աշխարհ ածում են,
Թոյլ ոտքերով կիսաչունչ....»

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-15 05:45 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

«Հեռո՛ւ, հեռո՛ւ քըշեցին,
Բընիկ ազգը իմ Հայկեան.
Նորա տեղը ինձ տուին,
Անգութ խուժան տաճկական»։

«Դոցա համա՞ր զարդարեմ,
Իմ հիւրընկալ ափերը.
Եւ կամ դո՞ցա հրապուրեմ,
Ճըպռօտ, պըլշած աչերը»։

«Քանի որ իմ զաւակունք,
Էսպէս կու մընան պանդուխտ.
Ինձ միշտ սըգւոր կը տեսնէք,
Այս է անխաբ իմ սուրբ ուխտ»։

*
* *

Էլ չը խօսեց Արաքսը,
Ցորձանք տուեց ահագին.
Օղակ օղակ օձի պէս,
Առաջ սողաց մոլոգին։

Ռ. Տ.—Գ. ՊԱՏԿԱՆԵԱՆ

ՊԼՊՈՒԼՆ ԱՒԱՐԱՑՐԻ

Ո՛Հ դու բարեկամ այրած սրտերու,
Խօսնակ գիշերոյ, հոգեակ վարդերու.
Երգէ՛ պըլպուլիկըդ, երգէ՛ ի սարէդ,
Զանմահ քաջքն Հայոց երգէ՛ հոգւոյս հետ։

Թադէի վանուց ձէնիկդ ինձ դիպաւ,
Սըրտիկս՝ որ ի խաչն էր կիպ՝ թունտ առաւ.
Ի խաչին Թեւէն Թըռայ ու հասայ,
Գըտայ գքեզ ի դաշտ քաջին Վարդանայ։

Generated on 2016-06-15 05:46 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY

Գըլպուլ, քեզ համար մեր հարքն ասացին,
Թէ չէ հաւ՝ պըլպուլ մեր Աւարայրին.
Եղիշեայ հոգեակն է քաղցրագրուցիկ,
Որ զՎարդան ի վարդն տեսնու կարմրիկ։

Զըմեռն յանապատ կու գնա կայ ի լաց,
Գարունն յԱրտազ գայ ի թուփ վարդենեաց.
Երգել ու կանչել յեղիշէին ձայն,
Թէ պատասխանիկ մ՚արդեօք տա՞ Վարդան։

Հ. Ղ. Վ. ԱԼԻՇԱՆ

ԳԱՐՈՒՆ

Ո՛հ, ինչ անուշ և ինչպէս զով,
Առաւօտուց փըչես հովիկ.
Ծաղկանց վըրայ գուրգուրալով,
Եւ մազերուն կուսին փափկիկ։

Բայց չես հովիկ իմ Հայրենեաց,
Գընա՛, անցի՛ր սըրտէս ի բաց։

Ո՛հ, ինչ աղու և սրտագին,
Ծառոց մէջէն երգես թըռչնիկ.
Սիրոյ ժամերն ի յանտառին,
Ըզմայլեցան ի քո ձայնիկ։

Բայց չես թըռչնիկ իմ Հայրենեաց,
Գընա՛, երգէ՛ սրտէս ի բաց։

Ո՛հ, ինչ մըրմունջ հանես, վըտակ,
Ականակիտ և հանդարտիկ.

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-15 05:46 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Քու հայելւոյդ մէջ անապակ,
Նային զիրենք վարդն ու աղջիկ։

Բայց չես վրտակ իմ Հայրենեաց,
Գընա՛, հոսէ՛ սըրտէս ի բաց։

Թէպէտ թըռչնիկն ու հոգին Հայոց,
Աւերակաց չըրջին վերայ.
Թէպէտ պըղտոր վրտակն Հայոց,
Նոճիներու մէջ կը սողայ.

Նոքա հառա՛չք են Հայրենեաց,
Նոքա չերթա՞ն սըրտէս ի բաց։

Մ. ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ

ՀԱՅՐԵՆԻՔ

Իմ Հայրենիքս գիս կը կանչէ,
Հեռու եմ Հայաստանէն.
Հայու որդւոյն կը վայելէ՞,
Հեռանալ Հայաստանէն։

Միթէ արծաթ, ոսկի, գոհար,
Կըսփոփէ՞ Հայաստանը.
Այն որ կ'ողբայ որդւոց համար,
Խըղճալի Հայաստանը։

Խոր տըխրութեան մէջ է թաղուեր,
Թագուհի Հայաստանը.
Բոպիկ ոտքով, ազատ մազով,
Կ'արտասուէ Հայաստանը։

Անգութ երկինք ալ չը յիշեր,
Մոռցեր է Հայաստանը.

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-15 05:46 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Անսիրտ Հայերն ալ չեն յիշեր,
Անուշիկ Հայաստանը։

Ո՛հ, թողէ՛ք գիս խօսիմ ազատ,
Երգեմ միշտ Հայաստանը.
Անուշ երկիր, կոյս անարատ,
Աննըման Հայաստանը։

Արև ծածկեր է իւր դէմքը,
Խաւար է Հայաստանը.
Հայոց արևն ալ մարեր է,
Սեւ հագեր Հայաստանը։

Թշուառ սըրտիս ձայն կըկըտրէ,
Ողբալով Հայաստանը.
Ո՛հ, չի կայ Հայ որ. սփոփէ,
Նուաղեալ Հայաստանը։

Մինչև կըտրի իմ վերջին շունչս,
Պիտի կանչեմ Հայաստան.
Պըլլուիմ մէյ մ'իմ Հայրենեացս,
Հապա մըտնեմ գերեզման։

Անդորրութիւն ես կը խնդրեմ,
Սիրելի Հայաստանին.
Կըտրել այս ձայնս չէ՛ չէ՛ կարող,
Սոսկումըն գերեզմանին։

Ա. ՀԱՑԿՈՒՆԻ

ՍՈՒԳ ՄՕՐՆ ՀԱՑԱՍՏԱՆԻ

Իմ սիրելի զաւակունքըս,
Կը թափառին օտար աշխարհ.

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-15 05:46 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Ես ո՞ւր դիմեմ, ո՞ւր փընտրեմ,
Կը ծառայեն այլոց խոնարհ։

Եկա՛յք որդեակք իմ,
Ձեր մօրն այցելութեան։

Դարեր անցան լուր մը չառի,
Իմ քաջերքս մեռան կորան.
Կուլա՛մ արիւնքս կը սառի....
Մէկը չունիմ տայ ինձ դարման։

Եկա՛յք որդեակք իմ. ևն.

Արիւնս ցամքած, սիրտքս մաշած,
Դէմքս է տխուր մինչ յաւիտեան.
Եւ կարօտոյն իմ որդեկաց,
Գիտի իջնեմ սեւ գերեզման։

Եկա՛յք որդեակք իմ. ևն.

Եւ դու հովիւ թափառական,
Կ'երգես տըխուր ի մէջ հովտաց.
Ե՛կ արտասուենք թանկ կորըստեան,
Տըխուր մահուան մեր որդեկաց։

Եկա՛յք որդեակք իմ. ևն.

Իսկ դու կըռունկ իմ Հայրենեաց,
Գնա՛ հեռու աչքէս ի բաց....
Ցետին ողջոյնս տա՛ր գաւակացս.
Զի կեանքիս մէջ յոյսս է մեռած։

Եկա՛յք որդեակք իմ. ևն։

* * *

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-15 05:46 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ՏԵՍԻԼ ՀԱՑԱՍՏԱՆԻ

Թէ իմ Հայրենեաց քընար սրգաւոր,
Հեծէ տխրագին՝ իմ հոգիս է այն.
Թէ նորա բեկբեկ թելեր վշտաւոր,
Խօսք սղբաձայն՝ իմ սրտիկս է այն։

Թէ Հայ մուսային սրրտառուչ նուագ,
Դեռ կեղերերգէ՝ հառաչանքս է այն.
Թէ Հայաստանիս սեւ բաղդին հագագ,
Լայ աղեկտուր՝ հեծեծանքս է այն։

Թէ իմս Հայրենեաց կիսամեռիկ չունչ,
Դեռ լքսի տխուր՝ իմ ողբերս է այն.
Թէ լռիկ մընջիկ հեծէ անշըշունջ,
Ո՛հ, անկարեկիր՝ իմ լալիքս է այն։

Եւ Հայկայ փառաց յօժար ողբերգուն,
Հարազատ լացողն՝ իմ ձայնիկս է այն.
Զորս հազար տարուան պարծանաց դարուն,
Արձագանք տուողն՝ աղաղակս է այն։

Եւ Հայաստանիս ցաւերուն հատոր,
Ահա այս մաշած իմ կուրծքս է այն.
Սեւ սեւ թերթերուն մէջ սրրտակոտոր,
Արտասուօք գրուած՝ իմ աղիքս է այն։

Թէ բանաս կարդաս արիւնոտ դաշտեր,
Վարդագոյն ներկուած՝ իմ կողերս է այն.
Թ՝ աչքէ անցընես շամփրած նիզակներ.
Մահահոտ ցըցուած՝ իմ թիկունքս է այն։

Թէ Հայկ և Արամ, Վարդան, Վահաններ,
Ինկած տեսանես՝ իմ ուժըս է այն.

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-15 05:47 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Թէ զէնք, թէ գրահ, թէ սուր, թէ սուսեր,
Փըշրած կոտորած՝ ոսկորներս է այն։

Թէ արեամբ ներկեն ակունք Եդեմին,
Նըշխար քաջերուն՝ իմ բիբերս է այն.
Թէ քաղցր ու անբիծ ալիք Եփրատին,
Լեղի են դարձեր՝ արտասուքս է այն։

Թէ վըճիտ գետերն աղբերքն արծաթի,
Լալիք առուակին՝ երակներս է այն.
Թէ Տիգրիս, Գեհոն, Փիսոն մըռընչեն,
Թէ պըղտոր գընան՝ իմ արիւնս է այն։

Թէ սառնամանիք ձըմրան բըքաբեր,
Լեռներն է պատեր՝ իմ գագաթս է այն.
Եւ քաղցրիկ գետիւռն անուշակ հովեր,
Ցըրտագին փըչեն՝ իմ շընչիկս է այն։

Թէ վըտակ վըտակ ցօղէ գյիշատակ,
Ջայս տըրտմավաստակ՝ աչքերս է այն.
Թէ սըրտաձայնիկ երգէ զՀայաստան,
Կ'անչէ զՀայաստան՝ անկեղծ սէրս է այն։

Թէ մըթին խորշերն ու ձորեր լըռին,
Սեւերով ծածկին՝ մենաստանս է այն.
Թէ ողբ կը կարդան վայրերն Եդեմին,
Ճնշած լերդերուս արձագանքն է այն։

Եւ Հայաստանիս հողերը ուխտիւ,
Պինդ սիրով գըրկողն՝ իմ ձեռքերս է այն.
Թէ կը համբուրեն կաթոգին սըրտիւ,
Ո՜հ, մայրակարօտ շրթունքներս է այն։

Եւ Հայոց լերանց ցուրտ շուքերուն տակ,
Ընկած ապաբաղդ՝ իմ ճակատս է այն.

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-15 05:47 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Մասեաց սուրբ քարերն իւր բարձն ու պըսակ,
Դըրած սըգաւոր՝ գլուխիկս է այն։

Թէ կիսակործան տաճարն Հայրենի,
Սեւ սուգ է պատեր՝ տաղաւարս է այն.
Ուր չիջելավառ կանթեղ դեռ հիւծէ,
Նուաղ առ նուաղ՝ իմ յոյսըս է այն։

Ուր տըխուր նըստեր մազերն են ծածկեր,
Իւր սեւուկ աչքեր՝ սիրականս է այն.
Ձեռքերն ի ճակատ՝ կըռնակն ի հողեր,
Ցուսով կըռթըներ՝ Հայաստանս է այն։
— Գերեզմանս է այն։

Ուր երբ տեսանեմ զիմ հէգն Հայաստան,
Ի գահ իւր փառաց՝ իմ բաղձանքս է այն.
Ցայնժամ թող մեռնիմ՝ յիւր ծոց մայրական,
Զիմ վերջին շընչոյս միակ ուխտն է այն։

Ս. Հ. ՖԷԼԷԿԵԱՆ

ԼԵՒՈՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

Ս.

Բա՛ց իմ առջև, ո՛վ պահապան, այդ հոյակապ շէնքի դուռ,
Հայոց վերջի թագաւորին գերեզմանը ցոյց ինձ տուր։

Ես եկեր եմ Հայոց երկրէն յուխտ Լեւոնին ի տապան,
Ջերմարտասուօք թրջելնորա ցամքած անտէր գերեզման.
Ես եկեր եմ Հայ Աշխարհէն, Հայ Եդեմէն ի նուէր,
Փունջ մը ծաղիկ, քաջ Լեւոնիս, կաթ մը ցողիկ եմ բերեր։

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-15 05:48 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Ես եկեր եմ լուրեր պատմել քաջ արքայիս արքայից,
Ըսել նմա իւր զաւակաց վիճակ տխուր ցաւալից.
Ես եկեր եմ երես դնել այն հողերուն ոյց ներքեւ,
Ննջէ Հայոց վերջին արքայ, դժբաղդ Լեւոնն անարեւ։

Օ՛ն, պահապան, մի՛ դանդաղիր, ի սէր
Փրկչին բա՛ց այդ դուռ,
Հայոց վերջի թագաւորին գերեզմանը
ցոյց ինձ տուր։

Բ.

Եւ ես գնացի դողդոջ քայլերով,
Հասայ դիւցազնիս ցամաք շիրմին քով.
Շիրիմ որ կարծես լեզու էր առած,
Խօսէր այցելող սրտի մ՛իսկ սառած։

Կարծես թէ Լեւոն կեցած էր այն տեղ,
Երեսներն կարմիր ունին Հայկեան գեղ.
Աչքերէն ցայտեն հուր ու բարկութիւն,
Արտցունք յորդառատ, ցաւ ու տրտմութիւն։

Չկան զէնք նիզակ, սուսերք Հայկական,
Չկան գահ ու թագ, ոչ փառք ոչ մական.
Սեւ չղթայք պատեն դաստակք Հայ քաջին,
Տխուր է Լեւոն, փառքն Հայոց վերջին։

Հոն ծունգի գալով դիւցազնիս առջեւ,
Պատմեցի Հայուն վիճակն անարեւ.
Ըսի թէ որդիքդ աստ ու անդ ցրուած,
Մոռցան իրենց ազգ, անունն Հայրենեաց։

Ըսի թէ Հայերն կերթան կորսուիլ,
Օտար տարրի մէջ այլոց հետ ցուլուիլ.

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-15 05:48 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Ըսի թէ Հայ մարդն աղքատ ու անտուն,
Թշուառ գերի է չար Քրդի սրոյն։

Ըսի թէ որդիքդ Հայրենեաց մոռցան
Պէտքերն ու խնդրանք, և քեզ ուրացան.
Ըսի և մի խումբ դեռ կապրի յանուն,
Մեր երկրին և սուրբ Հայրենեաց Հայուն...։

Գ.

Անտես եղաւ պատկեր քաջիս անկենդան,
Ցուրտ իմ առջեւ կար Լեւոնին գերեզման.
Ես զիս գտայ այդ տեղ մինակ տխրադէմ,
Պատկառանօք կեցած քաջիս չիրմին դէմ։

Զարթի՛ր, ո՛վ քաջ, մէյ մը ելիր այդ տեղէն,
Զարդերդ հագիր, ա՛ռ քո մականն ոսկեղէն.
Կոչէ որդիքդ թափառականք յայլ երկիրս,
Ժողվէ զանոնք, տար հոն ուր կայ մեր Մասիս։

Հոն ուր մեռան մեր նախահարք, մեր պապեր,
Հոն ուր կենան փառաց բեկորք ազգին մեր.
Հոն ուր կապրի դեռ հայ սոխակն սեւ հագած,
Լռիկ մնջիկ կողբայ բունին մէջ փակած։

Ելի՛ր, ո՛վ քաջ, տար մեզ հասցուր հայրենիք,
Պաշտպան եղի՛ր տկար Հայուն զոր մարդիկ
Կը չարչարեն, իսկ նա չունի տեղ մը որ,
Դնէ գլուխն, անվախ ննջէ ու անդորր։

Ելի՛ր, ով Հայր, քեզ քո որդիք ունին պէտք,
Ունին իրենց սրտի վրայ անթիւ վէրք.
Ունին վիշտեր, անհուն վիշտեր, չեն կրնար,
Դոցա խնդրել օտարներէն դեղ մը ճար։

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-15 05:49 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Զարթի՛ր, Հայրիկ, վեր գլուխդ առ, տե՛ս Մասիս,
Տե՛ս Արարատ, տե՛ս Հայ դաշտերն Հայ որդիս.
Սեւով պատած Հայոց կոյսերն անկենդան,
Ամպոց ետեւ մ'եր ծածկեալ աստղ Հայկական։

Բայց դո՛ւ, Լեւոն, լռիկ ննջես, բայց գիտեմ
Թէ քո հոգին չրջի յերկիրն Հայ, եդեմ.
Ես քաջ գիտեմ որ գիտակից ցաւոց մեր,
Հոգւոց հանես, ողբաս թշուառ քո Հայեր։

Դ.

Տեսէ՛ք, Հայե՛ր, ունինք այսօր բայց ոչինչ,
Մեր տուն ու տեղ փլատակ են, ունինք ի՞նչ.
Ո՛չ հանգիստ օր, ո՛չ ջուր, ո՛չ կեանք, ո՛չ հող, հաց,
Մեր եղբայրներն ունին յերկիրն մեր փառաց։

Մեր քաղաքներն տակնիվրայ են քարքանդ,
Փլատակներ դիզուած կենան աստ և անդ.
Մեր սուրբ տուներ անասնոց են օթեւան,
Մեր նախահարց ոսկերք ոտից են կոխան։

Օտարք առին մեր հնութիւնս, մեր գոհարք,
Հայ թարգմանչաց ինքնագիր թուղթք ու նշխարք.
Առին մեզմէ մեր նախահարց ոսկորներն,
Զորս գնալ դիւրին տեսնելն չէ իսկ մերն.

Օտարին են այսօր վերջնոյն Լեւոնի,
Ցամաք ոսկերքն յեկեղեցին Սէն Տընի.
Դորա դռներ գոց են Հայու զաւկին դէմ,
Երբ նա գնայ յուխտ ի տապանն՝ տխրադէմ։

Ճէրզի Սիթի, 1885 Հ. ԷԿԻՆԵԱՆ

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-15 05:55 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ՄԵԾՆ ՎԱՐԴԱՆԻ ԵՐԳԸ

Հիմի է՞լ լռենք, եղբարք, հիմի՞ էլ,
Երբ մեր թշնամին իր սուրն է դըրել.
Իր օրհասական սուրը մեր կըրծին,
Ականջ չի գընում մեր լաց ու կոծին.
Ասացէ՛ք, եղբարք, Հայեր, ի՞նչ անենք,

Հիմի է՞լ լռենք։

Հիմի է՞լ լռենք, երբ մեր թշնամին,
Դաւով, հրապուրքով տիրեց մեր երկրին.
Ջընջեց աշխարհքից Հայկայ անունը,
Հիմքից կործանեց Թորգոմայ տունը.
Խլեց մեզանից թագ, և՛ խօսք, և՛ զէնք,

Հիմի է՞լ լռենք։

Հիմի է՞լ լռենք, երբ մեր թշնամին,
Խըլեց մեր սուրը — պաշտպան մեր անձին.
Մշակի ձեռքիցն էլ խոփը խըլեց,
Այդ սուր ու խոփից մեր շըղթան կըռեց.
Վա՜յ մեզ, շըղթայով կապուած գերի ենք,

Հիմի է՞լ լռենք։

Հիմի է՞լ լռենք, երբ մեր թշնամին,
Սոսկալի զէնքը բռնած մեր գըլխին.
Կուլ տալէ տալիս արտասունք առատ,
Աղէխարշ բողոք վարուց ապիրատ.
Մեր գլուխը լալու Եփրատ ո՞ւր պըտռենք,

Հիմի է՞լ լռենք։

Հիմի է՞լ լռենք, երբ մեր թշնամին,
Լիրբ գոռոզութեամբ լըցրած իր հոգին.

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-15 05:55 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Արդարութեան ձայնն հանած իր սրտից,
Արտաքսում է մեզ մեր բնիկ երկրից.
Պանդո՛ւխտ, հալածեա՛լ, եղբարք, ո՞ւր դիմենք,
Հիմի է՞լ լռենք։

Հիմի է՞լ լռենք, երբ մեր թշնամին,
Անգոհ՝ մեր բերած ծանրը զոհերին.
Իւր լիրբ, նզոված ձեռքը կարկառեց,
Ազգութեանս վերջին կապը պատառեց.
Հայի կորուստը մօտ է, ի՞նչ անենք,
Հիմի է՞լ լռենք։

Հիմի է՞լ լռենք, երբ մեր թշնամին,
Արհամարհելով մեր փառքն ազգային.
Մեր եկեղեցուն ձեռնամերձ եղաւ,
Գայլազգեստ գառին մեզ գլուխ դրաւ.
Սուրբ խորան չունինք, արդ ո՞ւր աղօթենք,
Հիմի է՞լ լռենք։

Հիմի է՞լ լռենք, մարդիկ ի՞նչ կասեն,
Երբ մեր տեղ քարինք, ապառաժք խօսեն.
Ջե՞ն ասիլ որ Հայք արժանի էին,
Այդ ըստրկական անարգ վիճակին.
Մեր սուրբ քաջ նախնեաց գործերը գիտենք,
Մինչեւ ե՞րբ լռենք։

Թո՛ղ լռէ մունջը, անդամալոյծը,
Կամ՝ որոց քաղցր է թշնամու լուծը.
Բայց մենք, որ ունինք հոգի ու սիրտ քաջ,
Ե՛կ անվախ ելնենք թշնամու առաջ.
Գոնէ մեր փառքը մահով յետ խլենք,
Ու այնպէ՛ս լռենք։

Ռ. Տ. — Գ. ՊԱՏԿԱՆԵԱՆ

Generated on 2016-06-15 05:56 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY

ՄԱՆԿՈՒԹԵԱՆ ՕՐԵՐ

Մանկութեա՛ն օրեր, երազի նման,
Անցաք գնացիք, այլ չէք դառնալու.
Ո՛հ դուք երջանիկ, ո՛հ անհոգ օրեր,
Ընդունակ միայն ուրախացնելու։

Ձեզանից յետոյ եկաւ գիտութիւն,
Իւր ծանր հայացքով աշխարհի վերայ.
Ամեն բան ընկաւ մըտածութեան տակ,
Որպէ՛ չը մնաց ազատ կամ ունայն։

Գիտակցութիւնը յաջորդեց սորան,
Ազգի վիճակը ծանրացաւ սրտիս.
Ապողոն տուեց ինձ իւր քնարը,
Որպէս փարատիչ տրտում ցաւերիս։

Աւա՛ղ, այդ քնարը իմ ձեռքում հնչեց,
Նոյնպէս լալագին, նոյնպէս վըշտահար.
Ինչպէս իմ սիրտն էր, իմ զգացմունքը,
Ուրախացուցիչ չըգտայ մի լար։

Ես այն ժամանակ միայն զգացի,
Որ այդ ցաւերից ազատվելու չեմ.
Որչափ իմ ազգս կը մնայ ստրուկ,
Օտարների ձեռք, անխօս, տխրադէմ։

Մանկութեան օրեր, ինչո՞ւ այդպէս շուտ,
Թռաք գնացիք, անդարձ յաւիտեան.
Ես այն ժամանակ անհոգ ու ազատ,
Կարծումէի ինձ աշխարհի իշխան։

Գերութեան չղթան ինձ զգալի չէր,
Եւ ոչ բռնութեան անգութ ճանկերը.

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-15 05:57 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Զեզանից յետոյ ծանրացան նոքա,
Ո՛հ, անիծումեմ ես այս օրերը։

Լո՛ւռ կաց դու քնար, այլ մի հնչեր ինձ,
Ապողոն, յետ ա՛ռ դարձեալ դու նորան.
Տո՛ւր մի այլ մարդու, որ ընդունակ է,
Զոհ բերել կեանքը սիրած աղջկան։

Ես պիտի դուրս գամ դէպ ի հրապարակ,
Առանց քնարի անզարդ խօսքերով.
Ես պիտի գոչեմ, պիտի բողոքեմ,
Խաւարի ընդդէմ պատերազմելով։

Ներկայ օրերում այլ ի՞նչ սեւ քնար,
Սուր է հարկաւոր կըտրիճի ձեռքին.
Արիւն ու կրա՛կ թշնամու վրայ,
Այս պիտի լինի խորհուրդ մեր կեանքին։

Թո՛ղ պատկամախօսը՝ հնացած Դելփի,
Իւր եռոտանու վերայ փըրփըրի.
Թո՛ղ վերջին դարու գաղափարներով,
Ամբոխը խաբել ճգնի աշխատի։

Թո՛ղ նա թարգմանէ գրպարտութիւնը,
Թո՛ղ մխիթարուի ծովի ափերում.
Մեք ազատութեան ենք միայն թարգման,
Միայն այս խօսքս ունինք բերանում։

Ո՛վ Հայր, ո՛վ դու Հայր որ երկնքումն ես,
Խնայի՛ր թըշուառ մեր անտէր ազգին.
Մի՛ տար զոհ գնալ թշնամիների,
Նա այլ չէ՛ լսում Դելփեան հարցուկին։

Մ. ՆԱԼԲԱՆԴԵԱՆՑ

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-15 05:57 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ԵՐԳ ԻՏԱԼԱՑԻ ԱՂՋԿԱՆ

«Մեր Հայրենիք թշուառ, անտէր,
Ցեր թշնամեաց ոտնակոխ.
Իւր որդիքը արդ կանչումէ,
Հանել իւր վրէժ, քէն ու ոխ»։

«Մեր Հայրենիք չղթայներով,
Այսքան տարի կապկապած.
Իւր քաջ որդւոց սուրբ արիւնով,
Պիտի լինի ազատված»։

«Ահա՛, եղբայր, քեզ մի դրօշ,
Որ իմ ձեռքով գործեցի.
Գիշերները ես քուն չեղայ,
Արտասուքով լուացի»։

«Նայի՛ր նորան, երեք գոյնով,
Նուիրական մեր նշան.
Թող փողփոդի թշնամւոյն դէմ,
Թող կործանվի սէգ հսկան»։

«Ինչքան կին մարդ, մի թոյլ էակ,
Պատերազմի գործերում։
Կարէ օգնել իւր եղբօրը,
Զանց չարեցի քո սիրոյն»։

«Ահա՛ իմ գործ, ահա դրօշ,
Շուտ ձի հեծի՛ր քաջի պէս.
Գընա՛ փրկել մեր Հայրենիք,
Պատերազմի վառ հանդէս»։

«Ամենայն տեղ մահը մի է,
Մարդ մի անգամ պիտ՝ մեռնի.

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-15 05:57 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Բայց երանի՛, որ իւր Ազգի,
Ազատութեան կը զոհվի»։

«Գընա՛, եղբայր, Աստուած քեզ յոյս,
Ազգի սէրը քաջալեր.
Գընա՛, թէեւ չեմ կարող գալ,
Բայց իմ հոգին քեզ ընկեր»։

«Գընա՛ մեռիր դու քաջի պէս,
Թող չըտեսնէ թշնամին.
Քու թիկունքը, թող նա չասէ,
Թէ վատ է Իտալացին»։

Ասաց, տուեց օրհորդը,
Իւր եղբօրը մի դրօշ.
Մետաքսից էր ազնիւ գործած,
Ուր երեք գոյն կար որոշ։

Եղբայրն առաւ ու ողջունեց,
Իւր սիրական քնքուշ քոյր.
Առաւ զէնքը, սուր, հրացան,
Հեծաւ իւր ձին սեւաթոյր։

— Քուրիկ, — կանչեց քաջ պատանին, —
Մնաս բարեաւ, սիրական.
Այս դրօշակին պիտի նայի,
Ամբողջ բանակն Իտալեան։

Նա սուրբ է ինձ, երբ մկրտուած,
Արտասունքով ու կնքած.
Դու յանձնեցիր ինձ յիշատակ,
Հայրենիքի նուիրած.

Թէ մեռանիմ, դու մի՛ սըգար,
Իմացի՛ր որ տարեցի.

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-15 05:58 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Դէպ ի մահու արքայութիւն,
Իմ հետ քանի թշնամի։

Ապաց, վազեց դէպի հանդէս,
Աւստրիացւոց յանդիման.
Իւր արիւնով գնել յաւէժ,
Ազատութիւն Իտալեան։

Ո՛հ, իմ սիրտը կըտրատվումէ,
Տեսանելով այսպէս սէր.
Դէպ ի թշուառ մի հայրենիք,
Որ ոտնակոխ եղած էր։

Սորա կէսը, կէսի կէսը,
Գէթ երեւէր մեր ազգում.
Բայց մեր կանայք.... ո՛ւր, եղիշէ,
Ո՞ւր մեր տիկնայք փափկասուն։

Ո՛հ.... արտասուք ինձ խեղդումեն,
Այլ չեմ կարող բան խօսել.
Զէ՛.... թշուառ չէ Իտալիան,
Եթէ կանայք այսպէս են։

(Թարգ.) Մ. ՆԱԼԲԱՆԴԵԱՆՑ

ԽԱՋ, ՕԳՆԵԱ՛ ԻՆՁ

Օրորանիս մօտը նստած,
Մայրս անուշ երգելով.
Ինձ շատ անգամ քուն էր արած,
Խաչանշան կնքելով։

Աչն ու խաչը քեզ պահապան,
Անթիւ անգամ կրկնել էր.

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-15 05:58 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Խաչն իւր սիրոյն միշտ ապաստան,
Ամեն ժամում կանչել էր։

Երբոր թոթով լեզուս բացաւ,
Խաչի դասն աւանդեց։
(Խաչ օգնեա՛ ինձ), կրկնի՛ր, ասաց,
Գրթոտ սիրով պատուիրեց։

Քանի՛ տարի էս սիրուն դասն,
Ես շարունակ կրկնեցի։
Մօրս հետը ժամ գնացի,
Խաչելութիւն սիրեցի։

Ուխտատեղի թէ մատուռներ,
Ուր որ ես ուխտ գնացի։
Համբուրեցի ես խաչքարեր,
(Խաչ օգնեա՛ ինձ), կրկնեցի։

Երբոր փոքր ինչ ես մեծացայ,
Մայրս տուաւ քերական։
(Խաչ օգնեա՛ ինձ), կրկնի՛ր, ասաց,
Խաչն է ուսման օգնական։

Խաչն օգնական ինձ կանչելով,
Այբուբենէն ըսկըսայ։
Ամեն դասում միշտ կրկնելով,
Շուտով կարդալ սովրեցայ։

Քերականըն աւարտեցի,
Յետոյ մտայ վարժարան։
Եօթը տարի ես կարդացի,
Ուսմունք առի զանազան։

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-15 05:58 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Քանի՛ քանի՛ չարադրածներ,
Որ ես ինձէն գրեցի.
Դեռ չբսկբսած՝ ճակատներն,
(Խաչ օգնեա՛ ինչ) դրոշմեցի.

Աստուածաշունչ՝ Աւետարան,
Որչափ սիրով կարդացի.
Այնքան Խաչին սիրոյ նշան,
Սրտիս մէջը զգացի։

Զգացի որ, Խաչի ճառն,
Մեծ ուսմունք է մարդկութեան.
Մեր փրկութեան դրօշն է նա,
Ճշմարտութեան սուրբ նշան։

Զգացի որ, նախատանքով,
Գողգոթայում տնկուեցաւ.
Բայց և յետոյ անհուն փառքով,
Գմբէթներում փայլեցաւ։

Զգացի որ, նա է բաժին,
Ազատութիւն գոչողին.
Նա է կենաց անձուկ ուղին,
Ճշմարտութիւն սիրողին։

Ազատութիւն, Ճշմարտութիւն,
Նրան ծնունդ երկուորեակ.
Խաչն է նրանց՝ ոյժ, զօրութիւն,
Ամելութեան մայր դայեակ։

Զգացի որ, երկունք Խաչին,
Թանր է քան ցաւ՝ ծնող մարդ,
Բայց և ծնունդքն արի, ուժգին
Եւ ոչ երբէք հէգ կանանց։

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-15 05:58 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Զգացի որ, առանց Խաչի,
Չկայ վչտաց սփոփանք.
Ո՛չ աճումն ազատ մտքի,
Եւ ո՛չ պսակ յաղթանակ։

Զգացի որ, առանց Խաչի,
Ճշմարտութեան սէր չը կայ,
Եւ ոչ կանգնումն ընկած ազգի,
Ո՛չ կեանք, ո՛չ լոյս մշտակայ։

Զգացի որ, խաչեալն Աստուած,
Սիրոյ համար Խաչ չալկեց,
Մարդկանց սիրով Խաչը գրկած,
Խաչ վերառնուլ քարոզեց։

Զգացի որ, խաչ կայ պատրաստ,
Ամեն մարդու առաջին.
Ո՛վ կը ցանկայ լինիլ զգաստ,
Գնալ զհետ մեր Փրկչին։

Զգացի որ, ես էլ ունիմ,
Իմ յատուկ խաչն աշխարհքում.
Որ անտրտունջ պիտի տանեմ,
Սիրով ամեն դիպուածքում։

Խաչ կայ մարդուն իր կրքերից,
Խաչ ամեն տեղ, ամեն ժամ.
Խաչ կայ անքուն ոսոխներից,
Դաւ, հալածանք յարաժամ։

Խաչ կայ կենաց աղէտներից,
Խաչ՝ բնական դիւրատար.
Խաչ կայ մատնիչ յուդաներից,
Խաչ՝ դժուարին, ծանրատար։

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-15 05:58 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Խաչ կայ անմիտ տգէտներից,
Իմաստասէր հանճարին.
Խաչ կայ աշխարհ պաշտողներից,
Աշխարհի հետ մրցողին։

Խաչ կայ խաւար յամառներից,
Լոյս որոնող մտքերին,
Խաչ՝ բարբարոս իշխողներից,
Գերութեան լուծ ատողին։

Խաչ կայ անշարժ թոյլ վասերից,
Ցառաջադէմ ձգտողին.
Խաչ կայ մոլար կարծիքներից,
Ճշմարտասէր դիւցազին։

Խաչ կայ նենգժոտ խարդախներից,
Պարզ և ուղիղ սրտերին.
Խաչ կայ ստրուկ ոգիներից,
Պարտք իրաւունք խնդրողին։

Զգացի որ, էսքան խաչերն,
Էն Խաչի մօտ ոչինչ են.
Որ մարդասէր գթոտ Տէրն,
Բարձաւ իր ուսն հեզօրէն։

Նա է սիրոյ անհուն նշան,
Խաչեալն Սէր գլխովին.
Սփոփանաց մեծ ապաստան,
Սիրով իր խաչ բարձողին։

Զգացի որ, Փրկչի Խաչն էր,
Որ օգնական ինձ կոչեց.
Երբոր մայրս, հեզ, որդեսէր,
(Խաչ օգնեա՛ ինձ), դաս տուեց։

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-15 05:58 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Քանի՛ քանի նեղութիւններ,
Որ իմ հանդէպ դուրս եկան.
Միտքս բերի մօրս պատուէր,
Կոչեցի Խաչն օգնական։

Քանի՛ քանի՛ հեշտութիւններ,
Որ ես ինձէն գրկեցի.
Թափեցի յորդ արտասուքներ,
(Խաչ օգնեա՛ ինձ) գոչեցի։

Վիշտ ու վտանգ փարատեցան,
Զգացի մեծ սփոփանք.
Փուք փոթորիկ կուտակեցան,
Անցի մէջէն անվտանգ։

Օրհնուի՛ քո գերեզմանը,
Որդէխնամ մա՛յր գթոտ.
Որ դու Խաչի փրկարար դասն,
Ուսուցիր ինձ համառոտ։

Թէ որ մանուկ թարմ հասակէս,
Զազդէիր ինձ Խաչին սէր.
Ի՞նչպէս պիտի լինէի ես,
Մրրկաց մէջ անվեհեր։

Թէ որ Խաչի անյաղթ ոյժը,
Ինձ յարաժամ չսփոփէր.
Ի՞նչպէս պիտի տանէի ես,
Սուտ, անիրաւ զրկանքներ։

Մա՛յր իմ դասդ չեմ մոռանալ,
Քանի որ ես կենդան եմ.
Նեղութեանց մէջ չեմ թուլանալ,
Խաչն ինձ պարծանք կանուանեմ։

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-15 05:58 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Ուրախութեամբ ես կը տանեմ,
Ամեն գրկանք, ամեն խաչ.
Քանի՛ սիրով՝ ես կը տեսնեմ,
Փրկիչն ի Խաչ բարձրացած։

Գ. ՄՈՒՐԱՏԵԱՆՑ

ԵՐԳ ՎԱՆԵՑԻ ԱՂՋԿԱՆ

Աղօթարանը բացուեցաւ, ժամանակ է զարթնելու,
Երթամ ախոռ, գոմշուկներս լծեմ գութան վարելու.
Դէ՛հ գոմշուկներ ելէք, ելէք արտը երթանք աշխատինք,
Հարկ ու խարճի վատէն մօտէ, վօթենք արիւն ու քրտինք.
Հայի գութա՛ն, Հայի գութան, ո՞րի համար կը ջանաս,
Ո՞վ քեզիմով կը տանջուի, որի՞ն դու կուշտ հաց կուտաս.
Այն օր, երբ քեզ ձեռքս առի ազատ օրս կորուսի,
Անվախ սիրտս վհատեցաւ, հոգիս թուրքին մատնեցի.
Բաւ է, գութան, մեր տանջանքը, համբերութիւնն վերջ ունի,
Դուն տեսար որ մեր տուշմանն ամօթ, խելք ու գութ չունի.
Արի՛ փչրեմ ես քու խօփը, տանք դարբինին կռելու,
Կռենք, կոփենք սուր ու սուսեր դուշմանի դէմ կըռուելու.
Եղբարք Հայե՛ր, առէք խոփը, տուէք դարբնին կռելու,
Կռել, կոփել սուր ու սուսեր՝ Հայաստանը փրկելու։

ՔԱՄԱՌ-ՔԱԹԻՊԱ

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-15 05:59 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ԻՂՁ ԱՌ ՀԱՅԱՍՏԱՆ

Առընկա՛լ ի գիրկդ, մայրդ Հայաստան,
Զորդիս քո սիրուն ցրուեալ աստ և անդ.
Տե՛ս, ի՞նչպէս սիրովդ և քու կարօտովդ,
Վառուած բորբոքած՝ քու տեսոյդ ցանկան։

ՑՈՐԴՈՐԱԿ

Արի՛, կա՛ց ուրեմն, ո՛վ մայր Հայաստան,
Նոր ոգի զգեցիր փառօք անվախճան։

Օ՛ն զրահաւորիմք, ո՛վ որդիք Հայկեան,
Մեր մօր արցունքներն ջնջել յաւիտեան,
Զօրանանք սիրով և սուրբ միութեան,
Ընդդէմ թշնամեաց ըլլամք ախոյեան։

ՑՈՐԴՈՐԱԿ

Հապա գործելու ժամանակն հասաւ,
Հայրենասիրին կայ փառք անզըրաւ։

Ս. Պ. Պ. ՓԱՓԱԶԵԱՆ

ԱԿՈՌԻԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Ակոռիին մեծ կարասին,
Բոլորտիքն են բազմեր.
Աւագ իշխանք մեծ պարոնայք,
Ժողովք են հոն կազմեր.

Այո՛, այո՛, ժողովք են հոն կազմեր։ (կրկ.)

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-15 05:59 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Սաստիկ է վէճ, մեծ է խնդիր,
Զոր հոն տեղ կը խորհին.
Թէ ի՞նչ կերպով դարման մ'ընեն,
Հիւանդ մեր աշխարհին.

Այո՛, այո՛, հիւանդ մեր աշխարհին։

Մէկն այս կըսէ, մէկն այն կըսէ,
Կը ծագի լոյսն առտուն.
Ինձ լսեցէ՛ք, տեարք, կը գոչէ,
Աւանին պետն արթուն.

Այո՛, այո՛, աւանին պետն արթուն։

Թող թագ առնու, կըսէ, Բագոս,
Եւ փառօք ապրի շատ.
Իսկ ցնծութիւնն ըլլայ դըշխոյ,
Եւ գահն ալ Արտաշատ.

Այո՛, այո՛, և գահն ալ Արտաշատ։

Այսպէս մեզի նոր ցնծութեան,
Արեւներ կը ծագին.
Ուրախ ըլլայ մեր ժամանակ,
Եւ փառք մեր աշխարհին.

Այո՛, այո՛, և փառք մեր աշխարհին։

Հ. Վ. ՉԱԳԸՃԵԱՆ

ՏԱՐԱԳԻՐՆ

Ընդ աստեղօք օտար ափանց,
Տարագրելոյս չի՛ք բերկրանք.

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-15 05:59 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Լքքեալ հոգւոյս, յոյս Հայրենեաց,
Դու ես միայն ըսփոփանք։

Օտար աստղեր լոյս չունին,
Օտար երկիր ինձ մրթին։

Օտար բոյսեր դառն ու անհամ,
Ջրեր պղտոր ու լեղի.
Դաշտք անապատք հովիտք արտեր,
Ու պարտէզներն անբերրի։

Օտար ծառեր շուք չունին,
Օտար ծաղիկք հոտ չունին։

Օտար երկիր երջանկաբեր՝
Ծանր այդ պայման ինձ համար.
Զիւն ձմեռ են իւր գարուններ,
Զունի երբէք ինձ ամառ։

Օտար երկինք ամպոտ են,
Օտար սրտեր անգութ են։

Օտար թէեւ չնչեմ ես օդ,
Ցաւօք սահին իմ օրեր.
Քեզ, Հայաստան սիրակարօտ,
Սիրտս համայն քեզ նուէր։

Օտարութիւն, դու փուչ ես,
Այլ, Հայրենիք, դու վարդ ես։

* * *



Generated on 2016-06-15 05:59 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY

ԻՄ ԵՐԳԸ

Հեռացել եմ իմ մայրենի աշխարհից,
Սերտ բարեկամք անջատած են ինձանից.
Թառամում եմ ես այս օտար երկրումը,
Մինակ բըսած ծաղկի նման դաշտումը։

Կամաց կամաց տարիները անցնում են,
Մեզ նորոգած գարուն, ամառ դարձնում են.
Միայն իմ խեղճ կեանքը չունի ոչինչ նոր,
Ինձ երեկը կրկնըւում է միշտ այսօր։

Ասպարիզիս նեղ է ճամբան ու փշոտ,
Խեղճութիւնս համարում են ինձ ամօթ.
Իմ վիճակին կարեկցութիւն մարդ չունի,
«Դա, ասում են, իր կեանքումը «դարդ» չունի»։

— Ես «դարդ» ունիմ, «դարդ»ըս մեծ է ու պէսպէս,
Բայց չեն տեսնում ձեր աչքերը կարճատես. —
Երբ ես մտայ անհիւրընկալ այս աշխարհ,
Քանի բոպէ բաղդը ժըպտեց ինձ պայծառ։

Հա՛ ասացի դարձել է իմ անիւը,
Լրացեր է իմ վատ բաղդի չար թիւը.
Ցանկարծ փչեց անտուժելի հիւսիսին,
Թառամեցուց վարդ, մանուշակ մայիսին։

Այսպէս չորցուց իմ նազելի հասակը,
Իմ անողորմ, անագորոյն վիճակը.
Ա՜խ, մօտեցի՛ր, օրհասական օր մահուան,
Բե՛ր քու հետը սեւ հող ու նեղ գերեզման։

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-15 06:04 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Թող սառ լինի իմ նոր տանը յատակը,
Ծանր քարէ վրէն ծածկած վերմակը.
Բայց, ա՜խ, երբոր կանցնի ամիս ու տարի,
Կը մամռոտի գերեզմանը այն քարի։

Հետքը անգամ չի մնալու իմ խաչին,
Իմ անունը իմ յիշատակ — կը կորչին.
Բայց կուզէի թողնել այս տեղ մի արձան,
Որ դարէ դար մնար ամուր անկործան։

Ես երգեցի երգ ոլորուն ու անուշ,
Իմ քնարի ձայնն էր մեղմիկ ու քնքոյշ.
Միթէ այնքան անգութ կ'լինի Լետա գետ,
Որ անունս անգամ կանէ նա անհետ։

Ռ. Տ. — Գ. ՊԱՏԿԱՆԵԱՆ

ԵՐԳ ՀԱՑՐԵՆԻ

Մինչդեռ յուսով խայտայ բնութիւն,
Ցետ դառնաշունչ ձմերայնոյն.
Եւ ի գաւառն իմ հայրենի
Գեղածիծաղ դառնայ գարուն։

Մինչ բոյր ի բոյր փըթթին ծաղկունք։
Եւ ճռուողեն նորեկ ծիծառունք.
Ի քեզ ես դարձ առնեմ յայնժամ,
Ո՜վ ցանկալիդ իմ Հայաստան։

Ո՛չ հելուետեան ինձ դաշտավայրք,
Եւ կամ զուարթ մարգագետինք.

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-15 06:05 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Ո՛չ քան զքեզ չքնաղագեղ,
Իտալական պայծառ երկինք.

Հեռի ի քէն պանդուխտ գոլով,
Քոյովդ յար կիզում անձկով.
Ի խանձարուրդ իմոց կենաց,
Ո՛վ Հայաստան, առնեմ ես դարձ։

Գայցեն աւուրք ուր մանկութեան,
Անկցի տիոցս իմ գեղ դալար.
Եւ յինէն խոյս տացեն վայելք,
Կենաց՝ թեթեւ ի գարշապար։

Ուր հէք մուսայս մատն ի յերեր,
Մոռանայցէ երգել զսէր.
Ըզնինջ ի ծոցդ առնում յայնժամ,
Ո՛վ ցանկալիդ իմ Հայաստան։

Մ. ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ

Շ Ո Ի Շ Ա Ն Ի Կ

Է՞ր հեռանաս քո մայրենի աշխարհից,
Կարօտ թողուս սերտ բարեկամք քեզանից.
Մեր ամենուս դու մայր էիր գթառատ,
Արդ հեռանաս՝ մեզ մութ պատէ անփարատ.

Քո սուրբ ձեռօք մեր վէրքերը շատ անգամ,
Լուանայիր՝ դեղ դնէիր ամեն ժամ.
Քո մազերից ոլորէիր վիրակապ,
Քո բոլոր կեանք ազգիդ համար էր անկապ։

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-15 06:05 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Ուր որ երթաս, ուր որ լինիս, տիրուհի,
Մեր սիրտն, հոգին քեզ հետ տանիս, մաքրուհի.
Գընաս բարեաւ, մեր յոյս, հաւատ քեզ ընկեր.
Աջն ու Խաչը քեզ պահապան զօր գիշեր։

* * *

ԿԻԼԻԿԻԱ

Երբոր բացուին դռներն յուսոյ,
Եւ մեր երկրէն փախ տայ ձմեռն.
Զքնաղ երկիրս մերս Արմենիոյ,
Երբ փայլէ իւր քաղցրիկ օդեր։

Երբոր ծիծառն ի բոյն դառնայ,
Երբոր ծառերն հագնին տերեւ.
Ցանկամ տեսնել զիմ Կիլիկիա,
Աշխարհ որ ինձ ետուր արեւ։

Տեսի դաշտերն Սիւրիոյ,
Լեառն Լիբանան և իւր մայրեր.
Տեսի զերկիրն Իդալիոյ,
Վենետիկ և իւր կոնտոլներ։

Կղզի նման չիք մեր Կիպրայ,
Եւ ոչ մէկ վայր է արդարեւ.
Գեղեցիկ քան զիմ Կիլիկիա,
Աշխարհ որ ինձ ետուր արեւ։

Հասակ մը կայ մեր կենաց մէջ,
Ուր ամենայն իղձ կաւարտի.
Հասակ մը ուր հոգին ի տենչ,
Ցիշատակաց իւր կարօտի։

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-15 06:05 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Ցորժամ քնարս իմ ցրտանայ,
Սիրոյն տալով վերջին բարեւ.
Երթամ ննջել յիմ Կիլիկիա,
Աշխարհ որ ինձ ետուր արեւ։

Ն. ՌՈՒՍԻՆԵԱՆ

ԵՐԳ ՊԱՆԴԽՏԻՆ

Կռունկ, ուստի՞ կուգաս, ծառայ եմ ձայնիդ,
Կռունկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունի՞ս.
Մի՛ վազեր, երամիտ, շուտով կու հասնիս,
Կռունկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունի՞ս։

Թողեր եմ ա՛ւ՝ եկեր եմ մըլքերս ու այգիս,
Քանի որ ա՛խ կանեմ, կու քաղուի հոգիս.
Կռունկ, պահ մի կացի՛ր, ձէնիկդ ի հոգիս,
Կռունկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունի՞ս։

Քեզ խապար հարցնողին չես աներ տալապ,
Ձէնիկդ անուշ կուգայ քանց ջրի տոլապ.
Կռունկ, Պաղտա՞տ իջնուս կամ թէ ի Հալապ,
Կռունկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունի՞ս։

Սրտերնիս կամեցաւ, ելանք գնացանք,
Այս սուտ աստընուորիս տարտերն իմացանք.
Աղուհացկեր մարդկանց կարօտ մնացանք,
Կռունկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունի՞ս։

Աստընուորիս բաներն կամաց կամաց է,
Եթէ Աստուած լսէ, դռնակն բացցէ.
Ղարիպին սիրտն ի սուգ, աչերն ի լաց է,
Կռունկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունի՞ս։

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-15 06:05 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Աստուած, քեզնէ կուզեմ մուրվէթ ու ջէրէմ,
Ղարիպին սիրտն է խոց, ճիկէրն է վէրէմ.
Խմած ջուրն է լեղի, ու հացը հարամ,
Կռունկ, մեր աշխարհէն խապրիկ մը չունի՞ս։

Ո՛չ լուր օրն գիտեմ, ո՛չ գկիրակին,
Զարկած եմ ի չամփուրն՝ բռնած կրակին,
Այրիլս չեմ հոգար, ղարիպ կու մեռնիմ,
Կռունկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունի՞ս։

Ի Պաղտատու կուգաս, կերթաս ի սահրաթ,
Թղթիկ մի գրեր եմ, տամ քեզ էմանաթ.
Աստուած ալ թող վկայ լինի քո վերադ,
Որ տարեալ հասուցես զայդ իմ սիրելեաց։

Գրեր եմ մէջ թղթիս՝ թէ հոս մնացի,
Օրիկ մը օրերուս՝ զաշերս չի բացի.
Սիրելիք, ձեզանէ կարօտ մնացի,
Կռունկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունի՞ս։

Աչունն է մօտեցեր՝ գնալու ես թէպտիր,
Երամներ ես ժողվեր՝ հազարներ ու բիւր.
Ինձ պատասխան չի տուիր՝ ելար գնացիր,
Կռունկ, մեր աշխարհէն գնա՛, հեռացի՛ր։

* * *

ԵՐԳ ՊԱՆԴՈՒԽՏ ՊԱՏԱՆԵԿԻ

Ծիծեռնակ, ծիծեռնակ,
Դու գարնան սիրուն թռչնակ.
Դէպ ի ո՞ւր, ինձ ասա՛,
Թռչում ես այդպէս արագ։

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-15 06:05 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Ա՛խ, թռի՛ր, ծիծեռնակ,
Ծնած տեղս Աշտարակ.
Անդ չինի՛ր քո բոյնը,
Հայրենի կտուրի տակ։

Անդ հեռու՝ ալեւոր,
Հայր ունիմ սգաւոր.
Որ միակ իւր որդուն,
Սպասում է օրէ օր։

Երբ տեսնես դու նարա,
Ինձնից շատ բարեւ արա՛.
Ասա՛, թող նստի լայ,
Իւր անբաղդ որդու վրայ։

Դու պատմէ՛, թէ ինչպէս,
Աստ անտէր ու խեղճ եմ ես.
Միշտ լալով, ողբալով,
Կեանքս մաշուել, եղել կէս։

Ինձ համար ցերեկը,
Մութ է չրջում արեգը.
Գիշերը թաց աչքիս,
Քունը մօտ չէ գալիս։

Ասի՛ր, որ չի բացուած,
Թառամեցայ միացած.
Ես ծաղիկ գեղեցիկ,
Հայրենի հողից զրկած։

Դէ՛հ, սիրուն ծիծեռնակ,
Հեռացի՛ր, թռի՛ր արագ.
Դէպ՝ Հայոց երկիրը,
Ծնած տեղս — Աշտարակ։

Գ. Ա. ԴՈԴՈԽԵԱՆՑ

Generated on 2016-06-15 06:05 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY

ԱՌ ԱՍՏՂՆ ՀԱՑՐԵՆԵԱՑ

Մեր սիրուն հայրենեաց
Բեւեռը շողշողող,
Մեր սիրուն քաչազանց
Ահիւններն ցարդ հսկող՝
Պայծա՛ռ աստղ որ այժմիկ
Լոյս կընես թափանցիկ,
Մինչեւ Հայ պանդխտոց
Սրտերուն կուտաս բոց։

Ո՛վ քաղցր Ցոյս, դու մխիթար,
Տարագիր Հայոցս թշուառ.
Ի՞նչ աչխոյժ նոր ի նոր,
Ի՞նչ աչխոյժ ոգեւոր
Կարծարծես սրրտերնուս,
Ո՛վ Հայոցս միակ Ցոյս։

Զէ՛, ալ չվհատինք բնաւ, ո՛վ Հայեր,
Մեզ քաջալեր են Ցոյս և ժամանակ.
Զէ՛, ալ չվհատինք բնաւ, ո՛վ Հայեր,
Ժամանակին հետ յառաջ ընթանանք.
Ցառա՛ջ ընթանանք, հոն ուր հրաւէր,
Հրաւէ՛ր կարդան մեզ նախահարց աստղեր։

Թէ Հայկայ որդիք եմք,
Թէ Հայկայ արիւն կրեմք,
Ամենքս ի սուրբ սէր,
Հայրենեաց ի նուէր,
Քաջ որդիք պանծալի,
Ըլլամք միշտ արժանի։

Ս. Պ. Պ. ՓԱՓԱԶԵԱՆ

Generated on 2016-06-15 06:05 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY

ԵՂԲԱՑՐ ԵՄՔ ՄԵՔ

Ի բիւր ձայնից բնութեան շքեղ,
Թէ երգք թռչին սիրողաբար.
Մատունք կուսին ամենագեղ,
Թէ որ զարնեն փափուկ քնար։

Զունին ձայն մի այնքան սիրուն,
Քան զանձկալի եղբայր անուն։

Տո՛ւր ինձ քու ձեռքդ եղբայր եմք մեք,
Որ մրրրրկաւ էինք զատուած.
Բաղդին ամեն ոխ չարանենդ,
Ի մի համբոյր ցրուին ի բաց։

Ընդ աստեղօք ի՞նչ կայ սիրուն,
Քան զանձկալի եղբայր անուն։

Երբ ալեւոր մայրն Հայաստան,
Տեսնէ զորդիս իւր քովէքով.
Սրբոյին խորունկ վէրքն դաժան,
Քաղցր արտասուաց բուժին ցօղով։

Ընդ աստեղօք ի՞նչ կայ սիրուն, ևլն.

Մէկտեղ լացինք մենք ի հնում,
Եկէ՛ք դարձեալ յար անբաժան.
Խառնենք զարտասր և զինդում,
Որ բազմածնունդ ըլլայ մեր ջան։

Ընդ աստեղօք ի՞նչ կայ սիրուն, ևլն.

Մէկտեղ հոգնինք, մէկտեղ ցանենք,
Մէկտեղ թափին մեր քրտինքներ.

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-15 06:06 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Ըզհունձ բարեաց յերկինս հանենք,
Որ կեանք առնուն Հայոց դաշտեր։

Ընդ աստեղօք ի՞նչ կայ սիրուն, ևլն

Մ. ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ

ՄԱՂԹԱՆՔ

Տէր՝ կեցո՛ դու զՀայս
Եւ արա՛ զնոսա պայծառս.

Կեցո՛ զՀայս.

Զողորմութիւնդ վերին
Հաճեա՛ ճօնել նոցին,
Զի նովաւ մարթասցին

Ապրել յաստիս։

Ո՛վ Տէր մեր, Տէր փութա,
Զազգ մեր համայն փրկեա՛

Ի թշնամեաց.

Կափո՛ զաչս նոցուն,
Հա՛տ զարմատոցն զբուն,
Եւ զազգ մեր պարտ՝ասուն

Արա՛ հզօր։

Ի՛ քո իջեալ տեղի
Զաթոռ Հայրապետի

Մեր հաստատեա՛.

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-15 06:06 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Զերկարութիւն կենաց
Հօր մեր աստուածազգեաց,
Շնորհեա՛ պետին մեր հարց
Որ զմեզ հովուէ։

Աջովդ համատարած
Զազգ մեր արտահալած
Փոյթ գումարեա՛

Աչխարհ Արարատեան
Ի վայր մեր ծննդեան
Որ այժմ է սեպհական
Օտար ազգաց։

Առաքեա՛ ի բարձանց
Զհամակցութիւն կամաց
Ի մերազնեայս.
Զոմն ի մէնջ յարո՛
Պաշտպան ազգի մերոյ,
Տուր նմա ցուպ հուժկու։
Հովուել զմեզ։

Մ. Դ. ԹԱՂԻԱԴԵԱՆՑ

ԻՄ ՍՈԽԱԿԻՆ

Սոխակ՝ ինչո՞ւ դադրեցար քու անուշ երգն երգելից,
Որ քամում էր արտասուք շատ իմ էրված աչերից.
Մի՞տըդ է երբ ծագում էր արշալոյսը գարնային,
Քանի՞ դու միտս բերիր իմ առարկան ցանկալին։

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-15 06:06 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Այն յիշատակն անոյշ էր ինչպէս երազ վաղանցիկ,
Որ գէթ վայրկեան թշուառին դարձնում էր նա երջանիկ.
Համակ աշխարհ մոռացած, քո ձէնին ունկս յառած,
Մտքով թռչում էի ես իմ հայրենին կարօտած։

Գիտեմ, դու էլ ես կարօտ մշտագարուն այն դը-
բախտին,
Որից հեռու մեզ չիկայ քաղցր ժպիտ մեր բաղդին.
Ո՞վ կը տայ ինձ թեւ թռչնի որ խոյանան, սլանան,
Օդն ու ամպերը ճեղքեն ու տանին ինձ Հայաստան։

Թէ նորա օդը չնչեմ, այն կենսատու սուրբ օդից, —
Գիտեմ, փրկուելու եմ իմ անբուժելի ցաւերից....
Գարունն անցաւ, ա՜խ սոխակ, խօսուն լեզուիդ կապ
դրաւ,
Ու խեղճ վարդի թերթկի հետ շարականդ էլ տարաւ։

Կ'բանամ դուռը վանդակիդ, ազատութիւն քեզ կը
տամ,
Բայց աղաչում եմ քեզի, թռի՛ր դէպի Հայաստան.
Վարդ ես ուզում՝ այն տեղ է, անամպ երկինք, մեղմ
հովեր,
Ճանանչափայլ արեգակ, կարկաջասահ առուներ։

Ես էլ քեզ պէս կարօտ եմ բնութեան պայծառ օրերին,
Մէգ, մառախուղ, հեղձուկ օդն հալեց, մաշեց իմ հոգին.
Փչեց հողմը Հիւսիսին՝ փոշին երկինք բարձրացուց.
Կտուրի վրայից ագռաւը խռպոտ ձէնը հնչեցուց։

Ահա՛ Հիւսիսի սոխակն, ահա՛ Հիւսիսի այեր....
Ի՞նչ էք կորցրել Հիւսիսումն, ա՛յ խելացնոր խեղճ Հայեր.
Ա՜խ, ես ատել եմ նորա կեանք ու վայելքը պատիր,
Տուէ՛ք օդը իմ երկրին, դալար դաշտն ու վարդ կարմիր։

ՔԱՄԱՌ—ՔԱԹԻՊԱ

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-15 06:06 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Generated on 2016-06-15 06:06 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from
HARVARD UNIVERSITY



Հ· Ղ· Վ· ԱԼԻՇԱՆ

Generated on 2016-06-15 06:06 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from
HARVARD UNIVERSITY

ՄԱԾՐԵՆԻ ԼԵԶՈՒ

Ո՛վ մեծասքանչ դու լեզու,
Ո՛վ հեշտ բարբառ մայրական.
Փափկահնչիւն բառերուդ,
Նման արդեօք այլ տեղ կա՞ն։

Դու որ նախ ինձ հնչեցիր,
Նախ սիրոյ, ո՛հ, հեշտ խօսքեր,
Այն նախ զքեզ թոթովելս,
Դեռ իմ մտքէն չէ ելեր։

Իմ մայրենի քաղցր լեզու,
Կեա՛ց անսասան, կեա՛ց յաւէտ.
Կեա՛ց միշտ լեզուդ հայկարժան,
Կեա՛ց ծաղկալից ծաղկաւէտ։

Ի՞նչ դառըն վիշտ է սրտիս,
Երբ օտար տեղ ու լեզու.
Բռնի իրեն գիս քաշէ,
Սրտէս արիւն կը հեղու։

Ո՛հ, զայն օտարն ես սիրել,
Բնաւ չեմ կարող ի սրտէ.
Զէ՛, այն չէ՛ քաղցր իմ լեզու,
Որ սիրով գիս կողջունէ։

Իմ մայրենի քաղցր լեզու ևլն.

Լեզու համակ սիրաշարժ,
Քանի ճոխ, պերճ ու պայծառ.
Մինչ կը հնչես դուն քեզի,
Սրտերն ամեն գողացար։

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-15 06:06 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Հնչէ՛, հնչէ՛ յաւիտեան,
Վեհ դիւցազանց պերճ երգ դու.
Թօթուէ՛ փոշիդ, խոր մութէն
Ե՛լ երեւան, պերճ երգ դու։

Իմ մայրենի քաղցր լեզու ևլն.

Յաւերժական սուրբ Գրոց մէջ,
Կեա՛ց միշտ նորէն ու նորէն.
Կշռեալ անոյշ քու տողերդ,
Թող ամեն սիրտ արծարծեն։

Շնորհ ունել Արարչէն,
Կամ պէտք ըլլայ աղօթել,
Շրթունքս սրտէ բորբոքած,
Կաղաղակէ անարգել։

Իմ մայրենի քաղցր լեզու ևլն։

* * *

ՈՂԲ ԱՆԻ ՔԱՂԱՔԻՆ

Անի քաղաքս նստեր կուլամ,
Չկայ ասող, մի՛ լա, մի՛ լա.
Կասեն թէ չէ՞ թող նստիմ լամ,
Ա՜խ, ե՞րբ լսեմ, մի՛ լա, մի՛ լա։

Շատ ցաւերով կայրիմ, տապիմ,
Չկայ մէկ մարդ հաւատարիմ.
Որ խղճալուոյս գայ մօտենայ,
Գոնեա ասէ, մի՛ լա, մի՛ լա։

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-15 06:07 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Ա՛յ Հայ տղայ, խղճա՛ ինծի,
Տե՛ս քո Անին թէ ի՞նչպէս է.
Հերիք ես լամ, դու չը գթաս,
Չէ՞ քո Անին շատ ափսոս է։

Ախ ու վախով օրերս անցան,
Լալով աչերս կուրացան.
Որբ մնալն ինձ վիճակեցաւ,
Բախտս բնաւ զիս մոռացաւ։

Կորուսեր եմ թագաւորներ,
Ժողովեր եմ գլխուս բուեր.
Որ միշտ կերգեն, «Անին անցա՛ւ,
Անին անտէր աւերեցաւ»։

Ա՛յ Հայ տղայ, ելն.

Անին եմ շատ մարդաբնակ,
Մնացեր եմ դառն աւերակ.
Իմ լացն, իմ կոծ, իմ աղաղակ,
Անտէր որբոցն նմանակ։

Երբեմն էի շատ աննման,
Հայոց քաղաք թագ՝ւորական.
Այժմ աւեր հիմնայատակ,
Նստեալ կուլամ ես միայնակ։

Ա՛յ Հայ տղայ, ելն.

Եկար, տեսար, դարձար կերթաս,
Լալով կասես, «Բարեաւ մնաս».
Աստուած սիրես զիս չը մոռնաս,
Մասիս սարին երբ մօտենաս։

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-15 06:07 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Ասա՛ իմ քաջ Արարատին,
Նստեր կուլայ քո խեղճ Անին,
Կասէ, ե՞րբ գաս աւետիք տաս,
Թէ՝ իմ Անի, հերիք է լաս։

Ա՛յ Հայ տղայ, ելլն.

—Ողբերգութիւնդ հերի՛ք, Անի,
Թշուառացեալ դու լաս քանի՞.
Օր մը գթած Աչն Անեղին,
Մարդասիրեալ առ քեզ հայի։

Գան ժողովին Հայք միաբան,
Գեղեցկանաս շատ աննման.
Հա՛պա, մի՛ լար, սիրուն Անի,
Անի, Անի, իմ ջան Անի։

* * *

ԵՐԳ ՀԱՑՐԵՆԵԱՑ

Հերի՛ք, որդեակք, այսքան տարուան տառապանք,
Հերի՛ք դաժան անգութ Թուրքին ոտքն ինկանք.
Քանի խոնարհ գլուխ տուինք գայլերին,
Այնչափ ծանր բեռներ դրին մեր վզին։

Հերի՛ք, ելլենք ցոյց տանք թէ մենք հարազատ,
Հին քաջերին արիւնից ենք ազատ.
Թէեւ չունինք ոչ թուր, ոչ սուր, ոչ նիզակ,
Մեր բահերն էլ կանեն նոցա չան սատակ։

Նրանցն է մեր կոյս աղջիկներ, հարսունքը,
Նրանցն է մեր ճատկի քրտանց արդիւնքը.

Generated on 2016-06-15 06:12 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY

Նոցա սուրի ծայրն է կարծես մեր հոգին,
Նորանց գամբռ մեզնից չատ է թանկագին։

Հերի՛ք, ելլենք ցոյց տանք ևլն.

Ի՞նչով են նրանք մեզ տիրելու արժանի,
Նրանք մարդ չեն, այլ գազան են վայրենի.
Մերն է ձիրքը, մերն է ուսումն ու հանճար.
Մերն է հողը՝ մենք ենք նրան տէր արդար։

Հերի՛ք, ելլենք ցոյց տանք ևլն.

Մենք եղբայրներ ունինք հեռու տեղերում,
Որոնք մեր վրան լռիկ արցունք են թափում.
Ձեն խնայեր թեռ ու թիկունք կու հասնին,
Շուտով կուգան, կը միանան սուրբ գործին։

Հերի՛ք, ելլենք ցոյց տանք ևլն.

ՔԱՄԱՌ—ՔԱԹԻՊԱ

ՄԱՐՍԷՑՑԷԶԻ ՀԱՑԵՐԷՆԸ

·1·

Ցառա՛ջ, Հայե՛ր, Հայրենիքի
Ազատութեան ժամն է հասեր.
Ձէ՞ք տեսներ, բռնաւորն մեզի
Դէմ արնօտ դրօշ է պարզեր։ (կրկ.)

Ձէ՞ք լսեր դեռ Հայաստանցի
Ժողովուրդի հառաչանքներ.

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-15 06:13 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Քիւրդեր, Թիւրքեր Հայ գիւղերի
Մէջ կը մորթեն մեր եղբայրներ։

Զէնքեր առնե՛նք, Հայե՛ր,
Շուտով կազմենք գունդեր,

Քալե՛նք յառա՛ջ, թո՛ղ թիւրք արիւն
Ծծեն Հայոց դաշտեր։

2.

Ի՞նչ կուզեն այդ ցած ու վայրագ
Քիւրդեր, Թիւրքեր, մատնիչ Հայեր.
Ո՞ւմ համար են այս անարգանք,
Ո՞ւմ համար այդ հին չթայներ։ (կրկ.)

Մեզ համար են, Հայե՛ր, ա՛հ, մեզ
Կարհամարհեն, դեռ համբերե՞նք.
Կուզեն որ մեզ դերիի պէս
Իրար ծախեն. ի՞նչ կեցեր ենք։

Զէնքեր առնե՛նք, Հայե՛ր,
Շուտով կազմենք գունդեր,

Քալե՛նք յառա՛ջ, թո՛ղ թիւրք արիւն
Ծծեն Հայոց դաշտեր։

3.

Սոսկացէ՛ք, ո՛վ բռնաւորներ,
Եւ մատնիչներ Հայաստանի.
Սոսկացէ՛ք, զի ժամն է հասեր
Որ վրէժն առնենք ձեր գործերի։ (կրկ.)

Ամեն Հայ ձեզ դէմ պիտ՝ կռուի.
Մեռնողին տեղ մեր հայրենիք

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-15 06:13 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Նոր զաւակներ մեզ պէս կը ծնի,
Եւ չենք հատնիր մինչեւ մեռնինք։

Զէնքեր առնե՛նք, Հայե՛ր,
Շուտով կազմենք գունդեր,
Քալե՛նք յառա՛ջ, թո՛ղ թիւրք արիւն
Ծծեն Հայոց դաշտեր։

4.

Կռուին մէջ մեր մեծ եղբայրներ
Թէ մեռնին, մենք հոն կը մտնենք.
Կերթանք գտնել անոնց հետքեր
Ուր քաջաբար մեռնիլ կուզենք։ (կրկ.)

Մեր եղբայրներ երբ մեռած են,
Մենք ալ կերթանք մեռնիլ անմահ.
Այսպիսի դառն կեանք մեզ պէտք չեն,
Մենք ուխտած ենք վրէ՛ժ կամ մահ։

Զէնքեր առնե՛նք, Հայե՛ր,
Շուտով կազմենք գունդեր,
Քալե՛նք յառա՛ջ, թո՛ղ թիւրք արիւն
Ծծեն Հայոց դաշտեր։

5.

Ո՛վ դու սուրբ սէր Հայրենիքի,
Վեր վերցուր մեր թոյլ բազուկներ.
Ազատութի՛ւն մեր պաշտելի,
Զօրացո՛ւր քո հայ պաշտպաններ։ (կրկ.)

Թո՛ղ յաղթութիւն լսէ քո ձայն
Եւ վազէ գայ մեր դրօշի տակ.

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-15 06:13 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Թո՛ղ բռնութիւն մահմետական
Տեանէ քո փառք մեր յաղթանակ։

Զէնքեր առնե՛նք, Հայեր,
Շուտով կազմենք գունդեր,

Քալե՛ն՝ք յառա՛ջ, թո՛ղ թիւրք արիւն
Ծծեն Հայոց դաշտեր։

1888, Նիւ Եօրք Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

ԻՄ ԿՏԱԿԸ

Ես կը մեռնիմ, ո՛վ ընկերներ, ալ յոյս չկայ ապրելու,
Մահու քրտինք պատեց ճակատս հոգիս պատրաստ մեկ-
նելու.
Ա՛խ, կուզէի ապրիլ քիչ մ՚ալ, երթալ հասնել Հայրենիք,
Հոն գոհ սրտով մեռնիլ, գրկել իմ հարց ոսկերք իմ նախ-
նիք։

Բաղդին սակայն ձեռքերն այսօր զիս կը բաժնեն
ի կենաց,
Կեանք որ յանտի մատաղ տիոց նուիրեցի Հայրենեաց.
Սուրբ Հայրենիք, ներէ՛ որդւոյդ որ քոյդ այսօր կարօ-
տով
Ննջէ ի տար յօտար աշխարհ, հեռի քեզմէ ո՛չ սրտով։

Մնայ բարեա՛ւ իմ Հայաստան, մնայ բարեաւ Հայ-
րենիք,
Ողջամբ մնան Հայ զաւակներ, ողջմամբ մեր տուն, սի-
րելիք.
Ողջամբ մնաք, սիրուն ընկերք, նժդե՛հ սրտեր, մ՚ար-
տասուէք,
Ես կը մեռնիմ, մի՛ մոռնաք զիս, իմ յիշատակն յարգ-
եցէք։

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-15 06:13 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Հայ պանդուխտնե՛ր, արդ կը մեռնիմ քաղցր Հայրենեաց կարօտով,
Ո՛չ հայր, ո՛չ մայր, ո՛չ քոյր, եղբարք ներկայ են հոս մահճիս քով.
Բայց այս պատկեր տխուր մահուս ձեր մտաց մէջ պահեցէք,
Եւ գիտնալով յարգն հայրենեաց շուտ Հայաստան վազեցէք։

Երբոր մարմինս անշնչանայ, ամփոփեցէք զայն ի հող,
Շիրմիս վրայ տապանագիր դրէք միայն երկու տող.
Ըսէք թէ հոս ննջէ մի Հայ որ կարօտով իւր երկրին՝
Իւր Հայրենեաց, իւր սիրելեաց փչեց դշուն իւր յետին։

Երբ զիս դնէք ի գերեզման, Հայաստանէն ափ մը հող,
Լցէք վրաս գէթ հայրենի հոտ մը բուրէ շիրմէս թող.
Հայ եղեմէն կաթ մը ցողիկ, Հայ աշխարհէն փունջ մը վարդ,
Թող իմ անշուք գերեզմանին, փառք պաճուճանք լինին զարդ։

Օր մը գուցէ Հայաստանէն սոխակն Հայու հոտ առած,
Վազէ, անցնի Մեծն Ովկիան՝ գտնէ տապանն իմ սառած.
Տաք արտասուօք թանայ զերեսն իմ ցամաքեալ տապանին,
Գուցէ յայնժամ իմ ոսկորներն հողին ներքեւ կը հանգչին։

Նիւ Եօրք, 86 Հ. ԷԿԻՆԵԱՆ



Generated on 2016-06-15 06:13 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY

ՍԻՐԷ ՀԱՑԸ

Սիրէ Հայը թէ ըլլայ
Աղքատ՝ տնանկ անկարող,
Հագուստները հին ու մին
Դուռնէ ի դուռ մուրացող։

Անունն է Հայ, պարտէ քեզ
Սիրել զնա Հայու պէս։

Սիրէ Հայը թէ ըլլայ
Հարուստ, փարթամ, մեծատուն,
Ունենայ պէյ, էֆէնտի,
Կամ ամիրա պատուանուն։

Անունն է Հայ, ևլն.

Սիրէ Հայը թէ ըլլայ
Հայր սուրբ, տէրտէր, վարդապետ
Վրան փիլոն, ծոցը խաչ
Կաթողիկոս, Հայրապետ։

Անունն է Հայ, ևլն.

Սիրէ Հայը թէ ըլլայ
Բողոքական, այլ կրօն,
Ըստ քո կարծեաց սնապաշտ
Հերետիկոս, անկրօն։

Անունն է Հայ, ևլն.

Գ. ՇՄԱՒՈՆԵԱՆ

Generated on 2016-06-15 06:25 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY

ՀԱՑԵՐՈՒՍ ԹՈՒՔԸ

Դու խելօք, հաշուով վաճառական ես,
Միւլք, փող ու ապրանք, կասեն շատ ունես.
Բայց թէ փողէդ չահ չունի Հայաստան,
Թըքել ենք քու ալ, փողիդ ալ վրան։

Քաջ ես, լսել ենք, ինքդ մեծաւոր,
Անուն յաղթողի ունիս փառաւոր.
Բայց թէ թրէդ չահ չունի Հայաստան,
Թըքել ենք քու ալ, թրիդ ալ վրան։

Ի վերուստ քանքար քեզի տուած է,
Հեղինակ անունդ աշխարհ փռուած է.
Բայց թէ գրչէդ չահ չունի Հայաստան,
Թըքել ենք քու ալ, գրչիդ ալ վրան։

Հեռատես մտքով դուն զարդարեցար,
Հզօր իշխանի սիրելին դարձար.
Բայց թէ մտքէդ չահ չունի Հայաստան,
Թըքել ենք քու ալ, մտքիդ ալ վրան։

Բանուկ ու ճարտար դուն ունիս ձեռքեր,
Շատ կը յօրինես թանգագին բաներ,
Բայց թէ ձեռքէդ չահ չունի Հայաստան,
Թըքել ենք քու ալ, ձեռքիդ ալ վրան։

Երկինք շնորհեցին քեզ լեզու ճարտար,
Քարոզչի ստացար հռչակ ու հանճար.
Բայց թէ լեզուէդ չահ չունի Հայաստան,
Թըքել ենք քու ալ, լեզուիդ ալ վրան։

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-15 06:25 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Մեծ ուսում առիր, եղար գիտնական,
Գովքովըդ լցուած է մարդոց բերան.
Թէ ուսումէդ շահ չունի Հայաստան,
Թըքել ենք քու ալ, ուսմանդ ալ վրան։

ՔԱՄԱՌ–ՔԱԹԻՊԱ

ՊԱՆԴՈՒԽՏ ԱՌ ԱՄՊՆ

Ա՛մպ... դէպ ի ո՞ւր այդքան ըշտապ,
Ի՞նչ կը վազես բուռն ի տագնապ...
Արդեօք առեր տանի՞ս պատգամ,
Երկրիս մէկ կողմը տարաժամ։

Ա՛մպ... քո երես տխուր է սեւ,
Ասա՛, վրէ՞ժ մ'ունիս ներքեւ.
Թէ՝ տրտմութիւն մը վշտահար,
Ճերմակ դէմքիդ ածէ խաւար։

Արդեօք երկնից բընիկդ ի դեհ,
Հով մը հասաւ վարե՞ց նըժդեհ.
Եւ դու՝ ցաւով քո հայրենեաց,
Ի՛նձ պէս գնաս աչո՞ք ի լաց։

Ի՛նձ պէս՝ որ լոկ եւ ի յերեր,
Միայն զցա՛ւս ունիմ յընկեր.
Եւ հայրենեաց իմ կարօտով՝
Հալի՛մ, մաշիմ ընդ հող ու ծով...։

Ա՛մպ... Թէ լցված դու սիրտ ունիս՝
Ցօղ և անձրեւ հեղուս, հանգչիս.

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-15 06:25 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Թէ գոռ լցուած ցասմանդ է չափ՝
Բորոտ և շանթ թափես սարսափ։

Ի՞մ ալ լցված վշտոք է սիրտ,
Մանրեալ ճակատս է դառնաքիրտ.
Բայց ո՞ւմ աչքիս գետեր զեղում,
Պանդխտիս ցաւ թափեմ ես ու՞մ։

Ա՜մպ, ամպ... քան զիս շա՜տ երջանիկ,
Տեղ մը չունիս քեզի բնիկ.
Հիւսիս և կամ հարաւ վազես՝
Երկինք բոլոր քեզ ասպարէզ։

Իսկ ես՝ որչափ առնում մի քայլ՝
Թափե՜մ արցունք, գի քայլ մըն այլ
Ի հայրենեաց իմ հեռանամ....
Քայլ մ'ալ ի մա՛հ յառաջ գնամ։

Խ. ԵՊԻՍԿ. ՆԱՐ-ՊԷԳ

ԻՆՁ ՀԱՄԱՐ ՉԷ՛

Ինձ համար չէ՛ գարնան գալը,
Ինձ համար չէ՛ ծառի ծաղկիլը.
Ուրախութեան սըրտի գրգիռը,
Ո՛չ մի բերկրանք չեն ինձ համար։

Ինձ համար չէ՛ կենաց բաղդը,
Ինձ համար չէ՛ երջանկութիւնը.
Եւ մրայոն կուսի աչքերը,
Նոցա արցունք չե՛ն ինձ համար։

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-15 06:25 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Ինձ համար չէ՛ փայլուն լուսնի,
Անտառ ու սար լուսաւորելը.
Գարնան վարդի երգչի տաղերը,
Սոխակ ու վարդ չե՛ն ինձ համար։

Ինձ համար չէ՛ բարեկամաց,
Մէկտեղ սիրով տօն կատարելը.
Զատիկ օրուայ ուրախ ասելը,
«Քրիստոս յարեաւ» չէ՛ ինձ համար։

Ինձ համար չէ՛ ծնողաց լացը,
Ինձ համար չէ՛ աղջկայ տխրիլը.
Գերեզմանիս վրայ արտասուիլը,
Բարեկամաց՝ չէ ինձ համար։

Բայց ինձ համար կուգայ ժամը,
Կերթամ թշնամեաց պատերազմը.
Եւ մահառիթ սպաննիչ գնտակը,
Անդ պատրաստած է ինձ համար։

Ռ. Տ. — Գ. ՊԱՏԿԱՆԵԱՆ

ԶԵՓԻՒՌ ՄԱՆԿԱՆՑ

Դու փափկաթեւ մանկիկ զեփիւռ,
Աղբերց վրայէն լուսակարկաջ.
Անուշ հոտով ծաղկանց ըսփիւռ,
Ի՞նչպէս թռչիս ինձ ընդ առաջ։

Ու խունկ ու զով ընծայելով,
Ձիս ողջունես հեզիկ շնչով։

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-15 06:25 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Ո՛հ, կը սիրեմ զքեզ հողմիկ,
Երբ կը փութաս ինձի գալու.
Ի պար ի թռիչ ի սոյլ մեղմիկ,
Այրած ճատկիս ինձ այցելու։

Ծաղիկ հոգւոյս քեւ զովացած,
Ծիլ ծիլ բացուի ի լոյս կենաց։

Սլացիր փափկիկ դու սուրհանդակ,
Լուր տո՛ւր հովտին ու ծործորին.
Ու անտառաց բարձրադիտակ,
Ուր երամով սոխակք թառին։

Թէ մտերիմն իւրեանց եկաւ,
Բիւր զմայլմանց յիշատակաւ։

Ո՛հ, կորուսած իմ հաճոյքներ,
Հոս վերստին գտնեմ զձեզ.
Ծառոց շքով էք ծածկուէր,
Ու փրփրով առուակին հեզ։

Ահա կայտռէք ի յայս ծըմակ,
Ի յայս թփուտ հովանոցակ։

Հոս դառն հոգեր մէկիկ մէկիկ,
Ճատկէս ի բաց հեռանային.
Եւ հոյլք ժամուց գեղապարիկ,
Սիրտս թեթեւ օրօրէին։

Եւ բնութիւն՝ մայր որդեսէր,
Քնքուշ գրկաց մէջ մեզ գգուեր։

Հոս ճեմէին երեկոյեան,
Ի զով ստուեր պար մի կուսից։

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-15 06:25 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Մաղեր հովուն բազմաբուրեան,
Սիրտք ընծայուած հեշտ վայելից։

Շող լուսնակին, կոյսն ու ծաղիկ,
Ձիրար շոյեն սիրատարփիկ։

Մտերմութի՛ւն, սէր կրակ ու բոց
Ի՞նչ անուշ էք յայս տեսարան.
Ուր դալարիք ձեզ հանգստոց,
Ի՛անհուն դաշտեր զբօսարան։

Մտերմութիւն, ինձ երանի,
Թէ հոս ծոցէդ հոգիս թռանի։

Դու փափկաթեւ մանկիկ զեփիւռ,
Աղբերց վրայէն քաղցրակարկաջ.
Անուշ հոտով ծաղկանց ըսփիւռ,
Թռի՛ր, թռի՛ր ինձ ընդ առաջ։

Ու խունկ և զով ընծայելով,
Իմ շուրջ պատէ հեզիկ շնչով։

Ռ. Տ. — Գ. ՊԱՏԿԱՆԵԱՆ

ՈՒՐ ՀԱՑ՝ ՁԻՔ ՎԱՑ

Արկածք Հայոց ժամանակին ընդ անիւ,
Փչրին տակաւ մինչդեռ սիրոյ համբուրիւ.
Ուխտեմք ի սէր եղբօր՝ զկեանս դնել գրաւ,
Օ՛ն անդր ի մէնջ այր ընկերին լարել դաւ։

Սրացաւ ի մէնջ բաղդն անհամբոյր,
Արդ նոր բաղդիս քաղցր է համբոյր.
Եղբայր զեղբայր գգուէ սիրով,
Ճոխին աղքատին մատչի գթով։

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-15 06:26 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Էանց գիշեր՝ արդ առաւօտ,
Ի ցօղ ժըպտի Մասեաց արօտ.
Եւ վառ ի վառ շողշողելով,
Լոյսն արեգին ծըփայ ի ծով։

Հա՛պա մանկունք
Վեհ քաջազունք,
Ի գլուխ պսակ
Ի յաղթանակ,
Առեալ նուագս
Արագս արագս,
Օ՛ն փութասցուք,
Օ՛ն երգեսցուք.

Սէր և գութ
Մեր պսակ,
Առ մեր բաղդ
Հրաւիրակ,
Ցնծասցեն
Որք լսեն,
Թէ՛ «ուր Հայ,
Զի՛ք անդ վայ»։

Ե. ՄԷԼԻՔԵԱՆ

ԱՂԱՍԻ ԵՒ ԸՆԿԵՐՔ ԻՒՐ

Այն որ ծանօթ է պատմութեան Ազգին,
Ճանաչէ Վահան, Մուշեղ, Գարեգին.
Նոքա գնացին, Տէր ետ մեզ կրկին,
Սէգ Կարօն, Մուսէն և քաջն Աղասին։

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-15 06:31 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Ա Ղ Ե Ր Ս

Սրի՛ Աստուած հարցն մերոց,
Որ ապաւէնդ ես նեղելոց.
Հա՛ս օգնութիւն ծառայից քոց,
Լե՛ր օգնական ազգիս Հայոց։

Միջնորդութեամբ սրբոյ Խաչին,
Եւ անարատ սուրբ Մնողին.
Ցիշեա՛ զհեղումն արեան Փրկչին,
Ե՛լ ի խնդիր փոքու հոգին։

Զի գիտացաք մեք հաւաստեաւ,
Որչափ մեղաց մերոց լըցաւ.
Ուստի և Տէրդ մեր բարկացաւ,
Առ ի խրատել զմեզ զարթեաւ։

Արդ անկանիմք առաջի քո,
Գոչեմք մեղա Տեառնդ մերոյ,
Անցո՛ ի մէնջ զցասումն քո,
Վասն անսպառ գթութեան քո։

ՍԻՄԷՕՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ

ՀՈՎԻԿ ՀԱՑՐԵՆԻ

Ո՞ւր ես Հայրենեաց իմ Հովի՛կ անուշ...
Գարունն է եկեր ծաղկամբ իւր քնքուշ,
Արեգ կը ժպտի բնութեան առջեւ,
Ա՜խ, Հայո՛ց Հովիկ, չտա՞ս մեզ բարեւ...

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-15 06:32 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Օտար երկնի տակ, զո՛ւրկ մեր աստղերէս,
Երբ գարուն փայլի՝ ա՛խ կարտասուե՛մ ես...
Գանդխտին համար արեւ փայլ չունի՛...
Ո՛ւր ես, ա՛հ ո՛ւր ես հովի՛կ հայրենի։

Գարուն՝ յորոյ ծոց չըշողար ծաղիկ
Որ բուսած լինի ի Հայ Եդեմիկ,
Գարուն չէ՛ Հայուն, ձմե՛ռ կերեւի...
Ո՞ւր ես, ա՛խ ո՞ւր ես հովի՛կ հայրենի։

Ո՞ւր ես, քեզ կարօ՛տ եմք հովի՛կ Մասեաց,
Կարօ՛տ քեզ հըծծի՛ւն Արմաւրեան սօսեաց.
Մոռցա՞ր թէ մենք քեզ կըսպասենք ի սուգ...
Ո՞ւր ես, ա՛խ ո՞ւր ես Հայրենեաց իմ սիւգ։

Ահա բնութիւն հեշտ հրաւէր կարդայ
Ցօնել յաղթութեան նորա զոտնկայ.
Հալեցան սառոյցք, զարթեր են ծաղկունք,
Ո՞ւր էք Հայրենեաց իմ սո՛յլք անուշունք։

Հովի՛կ, ա՛խ յերկար ոգւոց ձմերուն
Եկո՛ւր մեզ բերել զՀայոց գարուն.
Եկո՛ւր արթնցնել մեր վեհ պարծանքներ...
Հովի՛կ հայրենի, մոռցա՞ր դու զՀայեր։

Մոռցա՞ր մեր աչեր, մեր սրտեր մոռցա՞ր,
Ինչո՞ւ չես խառնիր մեր յողբ եւ յաշխար.
Ինչո՞ւ մեր քնար հեծէ յարտասուք
Եւ դու չես թրթռեր զայն ո՛վ Հայոց սիւք։

Ա՛խ, մեր Հայրենեաց բե՛ր աւերներէն
Փոշեակ մը մեր պերճ Հարց ոսկրներէն.
Բե՛ր նոցա հառաչ, հըծծէ՛ մերին հետ,
Ո՛վ Հայաստանեայց հովի՛կ կենսաւէտ։

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-15 06:32 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Բե՛ր Հայաստանի գէթ մէ՛կ յիշատակ,
Ցափանց Երասխայ հասցո՛ւր մէկ կայլակ.
Խառնին մեր հարց հետ արտասունք և ծիծաղ,
Ո՞ւր ես հայրենի սիւք կենսախաղաղ։

Ո՛հ, գլորէ՛ զՀայուն դու ճակատ և ծոց,
Արծարծէ՛ ի նա հայրենավառ բոց.
Հասի՛ր մխիթար զգացմանց ազգասէր...
Ո՞ւր ես հարց ծրծեալ հովի՛կ կենսաբեր։

Ո՞ւր ես... Հայ բամբռան չընչէ՛ զօրութիւն,
Գողթան քերթողաց բե՛ր սոյլ և զաւիւն.
Հայոց սրտերուն ազդէ՛ նոր խրախոյս,
Հովի՛կ հայրենի արթնցո՛ւր մեր յոյս.....

Խ. ԵՊԻՍԿ. ՆԱՐ-ԳԷՍ

ՎԱՐԴԱՆ

Իմ հայրենեաց հոգի Վարդան,
Հոգիս հոգւոյդ եղնի ղուրպան.
Որ Տղմուտի ափերի քով
Վաթսուն հազար կտրիճներով
Զարկիր, զարկվար, ինկար քաջ քաջ
Պարսիկ փռած ի ձախ ու յաջ։

Իմ հայրենեաց արեւ Վարդան,
Արեւս արեւ՝դ եղնի ղուրպան։

Աւետարան ու Խաչն առիր,
Տարիր երկինք բարձրացուցիր.
Եւ դու ալ խետ թողիր գացիր,
Անուշ արեւդ հողին տուիր,

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-15 06:32 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Որ հայրենեաց չողայ արեւ,
Շաւարշանի դաշտին վերեւ։

Իմ հայրենեաց արեւ Վարդան, ելն.

Արիւնդ կարմիր կարմիր թափվաւ,
Դաշտն ու ծաղիկ ներկուեցաւ.
Լուսնակն եկաւ ամպի տակից
Պաղ պաղ թափեց ցողիկն յաչից,
Որ հայրենեաց վարդեր բացուին,
Պըլպուլն երգէ դրախտի սարին։

Իմ հայրենեաց արեւ Վարդան, ելն.

Ս. Հ. ՖԷԼԷԿԵԱՆ

ՀԱՌԱՋԱՆՔ ԱՐՄԷՆՈՒՀԻՈՑՆ Ի ՀԱՑԱՍՏԱՆ

Երբ կը լսեմ Հայաստանիս անունն, թնդայ սիրտս ուժգին,
Երբ կը յիշեմ իր տառապանք, արտասուօք աչքս կը թրջին.
Անոր նման լքուած թշուառ կա՞յ հայրենիք մ՚ալ արդեօք,
Որուն ձայնին լսո՛ղ չկայ, կուլայ կողբայ դառն ցաւովք։

Ելէ՛ք, Վարդա՛ն, Տիգրա՛ն, Արա՛մ, տեսէ՛ք ձեր մայրն միանգամ,
Թո՛ղ իր ողբերն արթնցունեն ձեզ ձեր շիրմաց մէջ անգամ.
Տեսէ՛ք, ինչպէս վտարանդի կը թափառի տուն Հայկայ,
Ի ամեն կողմէն կը հալածուի, կը հարուածուի անխնայ։

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-15 07:31 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Ա՛հ, Հայաստա՛ն, դու սիրուն մայր, մինչ ե՛րբ այսպէս քու որդիք,
Քեզնէ հեռու պիտ՝ հառաչեն. իսկ դո՛ւք, մինչ ե՛րբ թափառիք.
Մինչ ե՛րբ և ես մայրակարօտ Արմէնուհիս քու սուրբ գիրկ,
Չի գամ պիտի որ արտասուօքս թրջեմ ձեռքերդ քու փափկիկ։

Թէ կրնայի թռչիլ երթալ գլխիկս դնել իմ մօր ծոց,
Ուրախութեան արտասունքով հոն հանգչեցունել սրտիս բոց.
Գէթ մէկ անգամ փայփայանքով գըգուիլ անկէ, տալ համբոյր,
Ալ թո՛ղ զիս զոհ ընէր այնտեղ թշնամւոյն սուր սայրասուր։

Եկէ՛ք, եղբա՛րք և սիրուն քո՛րք, ձեռք ձեռքի տանք ու գործենք,
Այդ թշնամին զմեզ թշուառ ըրաւ, բաժնեց մեր մօրմէն,
Մեր թշնամին տգիտութիւնն է, ուրիշ տեղ չը փնտռենք.
Գէտք է որ զայն սիրով, ուսմամբ յաղթենք վանենք մեր մէջէն։

Ա՛խ, Հա՛յ եղբարք, հայկա՛զն քոյրեր, մինչ ե՛րբ այսպէս անտարբեր,
Թողուք որ գան որոմ ցանել աշխատանքի մեր արտեր.
Է՛հ, ա՞ն ատեն պիտ՝ արթննաք երբ ամեն բան թշնամին,
Քանդէ, ցրուէ, տայ հովին որ յիշատակաց չմնայ մին։

Արմէնուհի՛, ա՛լ յուսահատ ճղքէ սիրտդ որ դուրս թռչի,
Խեղդուած տխուր հառաչքիդ ձայն, ամեն կողմեր թող հնչի.

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-15 07:32 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Երթայ հասնի մինչ Հայաստան, լսէ քու մայրդ և գթայ,
Թերեւս գքեզ մխիթարէ զի օտարէն յոյս չը կայ։

Ա՛խ, այս ցաւով վախնամ թէ ես պիտի մտնեմ գերեզման.
Արձագանք մ՝ալ տուողչի կայ երբ կը պոռամ Հայաստան.
Ա՛խ, ամեն կողմ լռութիւն է, կարծես մահն է թագաւորեր,
Մեռելոց.ու աւերակաց մէջ ալ ես բու եմ դարձեր։

Ա՛խ, Հայաստանս, սիրտս ու հոգիս քեզ նուիրեմ, ընդունէ,
Թէ կարելի, թո՛ղ ես մեռնիմ ու Հայաստանս ոտք ելնէ.
Անոր սիրոյն բանտն ալ դրուիմ, պալատ է ան ինձ համար,
Ոտքերս ձեռքերս շղթան զարնեն, երջանկութիւն է ան ալ։

Թէ մինչեւ իսկ աքսորուիմ, զիս թափառական ընէ բաղդ,
Հայաստանիս սիրոյն համար ամեն տեղ ինձ կըլլան դըրախտ,
Նպատակիս հասնի՛մ միայն, թո՛ղ զիս հանեն կախաղան,
Կախաղանէն ալ խեղդուող ձայնս պիտի կանչէ ՀԱՅԱՍ... ՏԱ՛Ն։

Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

ԱՐԱՄ — ԵՐԳ

Մեր քաջ Հայոց զօրութեան,
Վեր կացէ՛ք ասաց Արամ.

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-15 08:23 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Առաջեաւ բացէ՛ք նշան,
Գնանք Հայ լեզուն տարածենք։

Ո՛հ Արամ, Արամ, Արամ։

Նիւքար զստրուկն Ասորին,
Բարբառ կոչէ առաջին.
Գլուխն յաշտարակ մխեցէ՛ք,
Որ յերկնից սորուի Հայերէն։

Ո՛հ Արամ, Արամ, Արամ։

Յորդան տո՛ւք, օ՛ն, զօրք յորդան,
Դէպ ի կողմն Արեւմտեան.
Պայապիս Քաղեայ Տիտան,
Դի՛ք դի տապաստ ի դամբան։

Ո՛հ Արամ, Արամ, Արամ։

Յորդան տո՛ւք, օ՛ն զօրք, յորդան,
Տեարք լայնալիճ աղեղան.
Քնքուշախօս ամբոխին,
Տալ զլեզու հայկական։

Ո՛հ Արամ, Արամ, Արամ։

Ո՛վ չը գիտէ Հայերէն,
Ո՛չ ճանաչէ նա զՈր էն.
Որ բանիւ Հայոց արար,
Այս մեծ աշխարհ մեզ համար։

Ո՛հ Արամ, Արամ, Արամ։

Ի ծովէ մինչեւ ի ծով,
Թո՛ղ խօսին Հայ բառերով.

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-15 08:26 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Ներհակողին նիզակով,
Ցուցէ՛ք, ո՛հ, ասաց Արամ։

Ո՛հ Արամ, Արամ, Արամ։

* * *

ԳՈՂԹՆԻ ՔՆԱՐՔ

Թէ Հայրենեաց պսակադիր,
Գողթնի քնարք լռեր են.
Երկնից թող գան անմահ հոգիք,
Հայոց քաջեր պսակել։

Մասեաց գագաթն թող գան բազմին,
Երկնից գունտ գունտ հրեշտակներ.
Աստուած իջեր ի Հայաստան,
Հայոց արիւնն հոտոտել։

Փախէք ամպեր Շաւարշանէն,
Ալ մի ցողէք ձեր ցողեր.
Շաւարշանը ոռոգուած է,
Հայոց քաջաց արիւնէն։

Եւ կը ծլին և կը ծնին,
Աս դաշտին մէջ ոչ խոտ վարդ.
Այլ Վարդանայ ինկած երկիր,
Պիտի ծաղկի սուրբ հաւատ։

Քանդակագործ քաջ Եղիշէն,
Գրիչ ի ձեռն գայ յԱրտազ.
Զափէ, ձեւէ, գրէ, դրօշմէ,
Կեանք, մահ, հաւատք Վարդանայ։

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-15 08:26 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Ո՛հ Վարդանայ անուան արժան,
Մասիս կանգնի մահարձան.
Մենաստաններ խաչն ի գմբէթ,
Աւետարան սուրբ հաւատ։

Մագէ արեւ քոյդ ճառագայթ,
Խաղտեաց լեռնէն, մութ խորշէն.
Այն տեղ ինկաւ քաջ Հմայեակ,
Այն տեղ պառկեր նահատակ։

Լուսին, լուսին, աչօքդ անքուն,
Պահէ Հայոց ոսկորներ.
Եւ Մայիսի զուարդ ցօղով,
Ցօղէ անոնց չիրիմներ։

Արծուիք, բազէք Հայաստանի,
Եւ արագիլ ամրան հիւր.
Դուք հսկեցէք այս աշխարհին,
Ժառանգեցէք Հայոց տուն։

Մոխիրներու վրայ նստէք,
Աւերակներ չինէք բուն.
Եւ ծիծեռնակ գայ ու երթայ։
Մինչեւ Հայոց գայ գարուն։

Գ. Վ. ՍՐՎԱՆՁՏԵԱՆՑ

ԱԶԳԱՏԵԱՑՔ

Ո՛չ ձեզ, ոչ, չիք, չի՛ք յաջողուած,
Ո՛վ ժանտք, առ ձեզ գոչէ Աստուած,
Որ զՀայրենեացդ ուրանայք սէր,
Եւ զնորուն խնդրէք աւեր.

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-15 08:27 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Երկինք զձեզ դատապարտեն
Եւ Հայրենիք խոտեն մերժեն։

Ելէ՛ք ի մէնջ ի բա՛ց գնայք,
Անէ՛ծք ոյց չեն ճշմարիտ Հայք.
Զի՞ կայք, ի մէնջ ի բա՛ց ի բա՛ց գնայք,
Անէ՛ծք ոյց չեն ճշմարիտ Հայք։ (կրկ).

Ի ձեր ճակատ նսեմաստուեր
Զդատակնիք տանիք դուք ձեր.
Ի ձէնջ՝ ո՛վ դուք որդիք Քամայ,
Ամենայն ազգ գարշի սոսկայ.
Ասեն. Դա զծնող իւր անարգաւ,
Վա՛տ, Հայրենեացն է մատընտու։

Ելէ՛ք ի մէնջ ի բա՛ց գնայք, ևլն.

Օ՛ն անդր... ընդ մեզ չի՛ք ձեր բաժին,
Նաւար ձեզ ակն ունի յետին.
Մեր Հայկն է հայր, Գրիգոր՝ Վահան,
Ձեր հեղինակ՝ Սիւնեացն իշխան.
Զմեօք աստղ Հայկին յերկնուստ ցոլայ,
Ձեզ՝ չանթ պսակ Մեհրուժանայ։

Ելէ՛ք ի մէնջ ի բա՛ց գնայք, ևլն.

Ի բա՛ց, մի՛ 'ձէնջ կարծեն օտարք
Հայքս իբր զձեզ իցեմք անարդ.
Ո՛չ բողոքեա՛լ յերկինս արդար
Թէ չէ՛ք դուք Հայք, չէք մեր եղբայր.
Այլ յանդ մեր սուրբ՝ սերմն որոման,
Գայլք ժանտ ի հոտ անդ Գրիգորեան։

Ելէ՛ք ի մէնջ ի բա՛ց գնայք, ևլն.

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-15 08:27 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Դուք ծաղր յաղէտս արձակէք մեր...
Այլ մեք այնչափ հզօրս եմք դեռ.
Զի առ ստանձնել բեռն զվշտաց
Զունիմք պէտ վա՛տ ձերոց բազկաց.
Այլ հայկաբար ընդ դարս այսքան
Անչինչ տանիմք կնիք Ազգութեան։

Ելէ՛ք ի մէնչ ի բա՛ց գնայք, ելն.

Ո՛հ, խիստ քան զբնաւ աղէտքս այս մեր
Դուք էք, ո՛վ ժանտք, Հայո՛ց աւեր.
Դուք քան զոսոխս մեր չարագոյն,
Գազա՛ն՝ որ կեայք յԱզգին արիւն.
Զաղէտ, զոսոխ տանիմք կրեմք,
Այլ ձեզ՝ ոչ, ձեզ ո՛չ հանդուրժեմք։

Ելէ՛ք ի մէնչ ի բա՛ց գնայք, ելն.

Զի՛ ձեզ, անմիտք, զի՞ զուր մրցիք,
Ո՞վ դուք և ո՞վ են Հայրենիք....
Դա յաղթական դարուց կաղնի,
Դուք չոր տերեւքդ հոսեալ յերկրի.
Զայդ փոթորիկք շարժեցին ոչ,
Դուք դոյզն ի սիւք կոծիք դողդոջ։

Ելէ՛ք ի մէնչ ի բա՛ց գնայք, ելն.

Ելէ՛ք.... Մասեաց սուրբ հովանի,
Մի՛ զձեօք անկցի, չէ՛ք արժանի.
Մի՛ զմեր առնուք արեւ, անձրեւ,
Հայո՛ցս է դա յերկնից պարգեւ.
Ի սահմանաց սուրբ՝ եդեմայ,
Ելէ՛ք ընդ հօր ձեր Սատանայ։

Ելէ՛ք ի մէնչ ի բա՛ց գնայք, ելն.

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-15 08:27 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Ելէ՛ք, մի՛ զհարց մեր սուրբ զԱնուն
Առնուլ, և մի՛ զայնր Օրհնութիւն.
Թողէ՛ք զմայր զոր ծաղր առնուք,
Թողէ՛ք զաւերսն իւր և զքուք.
Աւերք նորա են մեր պարծանք,
Ամօթ մեր դո՛ւք էք, ո՛վ վիժանք։

Ելէ՛ք ի մէնջ ի բա՛ց գնայք, ելն.

Անէ՛ծք ի գլուխդ, անէ՛ծք ի սիրտ,
Անէ՛ծք յաղգիդ դէմ հեղեալ քիրտ,
Անէ՛ծք ի գործ ձեր և իրան,
Ցամօթ և ցաւ կեցջիք ծըփան.
Եւ վաղազրաւք յերկիր օտար
Տապանքդ ի փո՛ւշ ծածկեսցին չար....։

Ելէ՛ք ի մէնջ ի բա՛ց գնայք, ելն.

Այս է բաժին ձեր այս վերջայք
Որոց չիցեն ճշմարիտ Հայք.
Ա՛յս է բաժին ձեր ա՛յս վերջայք,
Անէ՛ծք ոյց չէք ճշմարիտ Հայք.
Անէ՛ծք ոյց չեն ճշմարիտ Հայք։

ԽՈՐԽՈՌՈՒՆԻՆ. (Խ. Ե. Ն.)

Շ Ղ Թ Ա Ց

Ազատութեան քաջ զինուորը, պատանին,
Մութ բանտի մէջ մինակ նստած է հիմայ,
Եւ չարժելով անիծում է շղթային,
Որ ճնշում է ձեռն ու ոտը անխնայ.

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-15 08:27 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

«Քաջ պատանի, ասաց շղթան, ո՛հ, շարժի՛ր,
Շարժի՛ր, փչրի՛ր ինձ, միայն մի անիծիր.

Շարժի՛ր, շարժի՛ր, շառաչիւնս անէծք է,
Կայծակի պէս՝ բռնաւորին կը զարկէ»։

«Գիտեմ, դու ինձ հիմա էլ չես ճանաչում.
Ես իբրեւ սուր փայլում էի քո ձեռքին,
Ազատութեան պատերազմի դաշտերում.
Հաւատարիմ ծառայելով սուրբ գործին.
Աւա՜ղ, հիմա այս ի՞նչ տեղ ենք մենք, ա՛խ, ո՞ւր,
Անբա՜ղդ տղայ, և ես նոյնպէս անբա՜ղդ սուր։

Շարժի՛ր, շարժի՛ր, շառաչիւնս անէծք է, ելն.

«Աւա՜ղ, ինձնից, փայլուն սրից կուեցին
Կոպիտ շղթայ և մի գործիք բռնութեան,
Ազատութեան պաշտպանին, իմ աջակցին,
Ինքըս ահա՛ շղթայում եմ յաւիտեան.
Այս ժանգը, որ շուրջ պատում է ինձ հիմա,
Իմ ամօթի և բարկութեան գոյնն է նա։

Շարժի՛ր, շարժի՛ր, շառաչիւնս անէծք է, ելն.

(Թարգ.) Գ. ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆՑ

ԱՌԱՋԱԴՐՈՒԹԻՒՆ

Թէ իմ ալեւոր հերքս սեւնային,
Այժս ինձ հետ գար կտրիճ դառնայի.
Նժոյգ ձի հեծած, պեխերս ոլորած,
Ձեռքս թուր առած ես դաշտ կերթայի։

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-15 08:28 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Բայց եթէ մի օր, մի ժամ, մի բոպէ,
Աստուած լինէի մեր հողագնդին.
Ի՞նչ սուր սլաքներ պիտի չող տայի,
Մեր արիւնարբու թշնամեաց գլնդին.

Նենգ, սուր, քուրթ մոլի, պարսիկ ոխերիմ,
Դարաւոր ոսոխ դու յոյն կրօնամոլ.
Գիտացէ՛ք որ իմ երկայրի սրից,
Անվնաս չէր պըրծնիլ ո՛չ մի ձեր որդին.

ՔԱԱՌ-ՔԱԹԻՊԱ

ՁԱՑՆ ԲԱՐԲԱՌՈՑ ՑԱՆԱՊԱՏԻ

Աստուա՛ծ վկայ որ՝ մենք կը յաղթէինք,
Թէ մէկ անձնուրաց մարդ ունենայինք.
Օրէ օր թուրքը կելլէ մեր տեղէն,
Տեղս մարդ չի մնաց զատ ծրծի տըղէն.
«Հայը զէնք չունի», կասէ Օսմանլին,
Անտէր թողել է նա մեր հայրենին....
Աստուած վկայ որ՝ մենք կը յաղթէինք,
Թէ մէկ անձնուրաց մարդ ունենայինք։

Մի՞թէ ազգային պարծանքը չարժէր —
Ամեն Հայ մէկ մէկ ոսկի ընծայէր.
Երկուսը՝ մէկ թուր, երեքը՝ հրացան, —
Որ մոլի Տաճկին անէինք ցիր ցան....
Լոկ այն, որ կուտաք խումի ու թղթի,
Հա՛յք, ձեզ կը հասցնէր ազգային բաղդի,
Աստուած վկայ որ՝ մենք կը յաղթէինք,
Թէ մէկ անձնուրաց մարդ ունենայինք։

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-15 08:28 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Ո՞ր կաթողիկոս գրեց մէկ կոնդակ,
Ո՞ր եպիսկոպոս ցրուեց հրաւիրակ.
Ո՞ր գիտնականը ձայնը բարձրացուց,
Ո՞ր զօրականը թուր ու զէնք վերցուց.
Ո՛վ Հայ ազգասէր՝ ո՞ւր ես, ո՞ր ծակն ես,
Ազգային զգացմունք՝ մի՞թէ դեռ խակ ես.
Ատուած վկայ որ՝ մենք կը յաղթէինք,
Եթէ անձնուրաց մարդ ունենայինք։

Ա՛խ, անդարձ կանցնի լաւ ժամանակը,
Անփոփոխ կը մնայ մեր դառ վիճակը.
Սլավոնի ձեռքէն թափթըփած չղթան
Քեզ պինդ կը կապէ, խեղճի՛կ Հայաստան...
Բայց լա՛ւ յիշեցէք, սառնասիրտ Հայեր,
Որ փրկութիւնը ձեզնէ շատ մօտ էր...
Եւ ես միշտ կասեմ՝ «Մենք կը յաղթէինք,
Թէ մէկ անձնուրաց մարդ ունենայինք»։

ՔԱՄԱՌ—ՔԱԹԻՊԱ

Ի ԴԻՄԱՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌ ԱԶԳԱՅԻՆ ՅՈՐԴՈՐԵՑՈՒՑԻՉՍ

Ես չունիմ յոյս՝ նորոգութեան,
Ընդէ՞ր տքնիք միտք, ձեռք, փետուրք.
Նայելով ազգիս բնութեան,
Դեռ մէջս շատ՝ կը խաղան սուրք։

Հայք իմ թողեալ՝ Իւրեանց պէտքը,
Ի զուր վաստակին տգէտքը.
Կոտորեցին կարապետքը,
Թշնամեաց եղեն կերակուրք։

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-15 08:28 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Հայք ոխ բառը ընտրեցին,
Լաւ հողում տնկեալ ջրեցին.
Վերջապէս անուն դրեցին,
Կոչեցին հեծութեան աւուրք։

Ո՞նց անեմ այն ազգից գանգատ,
Որոյ արմատն է ի՛ բնէ վատ.
Ջեղեն նրան երբէք խրատ,
Կապանք, չղթայք, բանտք և անուրք։

Պակաս գոլով նոցա սէրն,
Մոռացան նախնեաց գործերն,
Թագաւորաց անուններն,
Կարծեն թէ են սնոտի լուրք։

Ո՞ւր է, ո՞ւր մնաց Տիգրանը,
Որ բարձրացոյց Հայաստանը.
Աւերելով Յունաստանը,
Եթող ազգին անթիւ ամուրք։

Արդեօք յիշե՞ն նոքա զՏրդատ,
Որ խլեաց թշնամոյն զարմատ.
Հայոց եթող անդորր հաստատ,
Նրանց մօտ թէ նա, թէ մէկ թուրք։

Հպարտութեամբ գոռոզացան,
Ընդդէմ թշնամեաց թուլացան.
Տէրութեան շահը իմացան,
Բայց չունեցան եռանդն և տուրք։

Հայք միմեանց ոսոխ գոլով,
Անպատվեցան թքով, մրով.
Սէյեա՛դ դատարկ սագի փետրով,
Անին չի լինիլ Պրանտենբուրգ։

Պ. ՄԱԴԱԹԵԱՆՑ

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-15 08:28 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ՀՍԿԱՑՆ ՀԱՑՈՑ ՏՈՐՔ

Սե՛ւ ծով...չէ՛, միշտ փոթորկածուփդ ալիքներ
Չէ, միշտ զՀայ նկուն գերի չեն տեսեր...
Տեսե՛ր, տեսե՛ր են Հայն ազատ գոռալով
Քե՛զ անգամ, քե՛զ օրէնս տալ՝ անզո՛ւսպ ծով։

Տեսեր դու շա՛տ անգամ Հայոց զէնքն ու թուր
Ըզթըշնամեաց արիւն ի քոյդ լըւեալ ջուր,
Եւ շատ անգամ Հայոց յաղթող երգ գոչիւն
Խառնըւեցաւ յալեացդ ահեղ մռնչիւն։

Քո պարեխից վերայ՝ զերդ ժայռ ի ժայռի՝
Տեսեր երբեմն Հսկայն Հայոց վիթխարի։
Զոր երբ նաւազն հեռուանց դիտէր մըրմռագին՝
Փախչէ՛ր սոսկմամբ, կարծէր ծովուցն է Ոգին։

Հայոց Հսկայն երբ թունդ ի դաշտ իջանէր՝
Ի դիւցական դումանց երկիր տատանէր.
Եւ մահացուաց ծըփէր ամէն սիրտ յերեր՝
Արդեօք հիմո՞ւնք երկրի կոծին տարուբեր։

Երբ նա գոչէր՝ կարծես թէ շա՛նթք են յորոտ,
Եւ արձագանք տային դղորդ օդ ընդ օդ,
Արծուիք ի թռի՛չսըն թափէին պակուցմամբ,
Առիւծն ու վագր անշնչացան սարսափմամբ։

Եթէ յանկարծ՝ աչս ածելով բոցակէզ՝
Հսկայն Հայոց կանգնէր հասակն երկնադէզ,
Մասիս, Կաւկաս պիշ պիշ հային նախանձորդ՝
Զի՞նչ այս շարժուն լեռ մեզ ընդդէմ ել ոխորդ։

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-15 08:28 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Մէգ, հանդուրժէ ոչ խուրթ ոչ պատ ոչ պատուար,
Իբր զփոշի փչրէ զամէն դիր եւ տար.
Ելէ արմատով կաղնիս, ջաղխէ առաթուր,
Թոպէ, քանթէ, դիզէ բլուրս ի բլուր։

Ինք՝ մէն միայն՝ կելնէ ընդդէմ բիւր գնդից,
Ինք՝ արհաւի՛րք է համախումբ հսկայից.
Աչ իւր հուժկու ա՛ինչափ նետից տայ տարափ՝
Որչափ բանակք ամէն չբաւեն ի թօթափ։

Անցաւ ընդոստ՝ յԵրասխ, յԵփրատ, լեռնէ լեռ,
Զարկաւ ջնջեց բոլոր Հայոց ոսոխներ.
Կայծակնացայտ դարձաւ յափունս Սեւ ծովուն,
Տարածեցաւ յապառաժից սարս ի քուն։

Արթնցա՛ւ... նաւուց տեսաւ գումարտակ,
Որ գայր սուրայր թափել յերկիրն ասպատակ.
Արձանացաւ Հսկայն Հայոց և գոռա՛ց,
Զինչ կարկտաբեր ամպրոպ ի գլուխս անդ Մասեաց։

Երբ Հսկային մռնչիւն նաւք լսեցին՝
Սարսափեցան, կարծեն տեսնել մահերնին.
Առագաստից գոգ պարզեցին ուռուցիկ,
Ըշտապ, խուճապ իբրեւ ի սեաւ փոթորիկ։

Կատաղեցաւ Տորք, դիզան հերք զերդ նետեր,
Ցապառաժից յարձակեցաւ ի կողեր.
Քանդեց գրկեց զբրլբրաձեւ մի խարակ,
Թափ անդ տրուաւ ու չեչտ պարսեց զինչ գնդակ։

Շուի՛նդ ի շառաչ պատառեցաւ ծով Պոնտոս,
Փեռեկտեցան անդընտոց վիհք լայնափոս.
Անհողմ անամպ՝ ծրփին կոհակք լեռնապէս,
Ինչպէս յամառն ի փոթորկայ անդ հանդէս։

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-16 05:35 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Ճարճատին կայմք, ջաղխի ցընդի նաւաց գունդ,
Զէնք և զինուոր սուզին թափին գլոր յանդունդ.
Գնալ գուժել և վիրապացն այն խորոց
Զոյժ ահաւո՛ր բազկի Հսկային մեծ Հայոց։—

Զէ՛, Սե՛ւ ծով, չէ, երերածուփդ ալիքներ
Ոչ միշտ զՀայ նկուն գերի չեն տեսեր...
Գոռա՛ Սեւ ծով, գոռա՛, ծըփա՛, մի՛ լռեր,
Մինչեւ ի մռունչ քո արթննա՛ն իմ Հայեր։

Խ. ԵՊԻՍԿ. ՆԱՐ-ՊԷՑ

ԱՌԱՆՁՆՈՒԹԻՒՆ

Այլ չէր սփոփում պայծառ առաւօտ
Վրդոված հոգուս ցաւեր կրակոտ.
Աւերակի մօտ, կանաչ ծառի տակ,
Մտքի մէջ կորած էի բովանդակ։

Զէին պակասում վշտերս յոլով,
Հոգիս ու սիրտս միշտ խռով էր խռով.
Սգաւորի պէս, անխօս լուռ ու մունջ,
Զգումէի շատ ներքուստ իմ մրմունջ։

Բարձր սարի տակ, փայլուն ու կապուտ
Մի գետ փրփրադէզ վազում էր շուտ շուտ.
Լողում էր նորա վրայ մի նաւակ,
Զկնորսն երգում էր իւր քաղցր նուագ։

Գետի միւս կողմում այգիներ, արօտ,
Փողփողում էին թփերով ցօղոտ.

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-16 05:35 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Բնութեան նուրբ գեղով ծածանում մունջ մունջ
Կոյս ծաղիկներով յասմիկի փունջ փունջ։

Թըխաչք աղջիկներ, լուացք չալակին,
Վազում գնում էին ափերով գետին.
Այն տեղ մի ջրաղաց պըտտում էր արագ,
Ցօղեր մարգարտեայ շաղ տալով բարակ։

Կար այն տեղ հընուց աւեր աշտարակ,
Իսկ նորա մօտին խուց մի փոքրաբակ.
Կազմ ու զինավառ մի զինուոր բըրդոտ
Երթում՝ գալիս էր, կանգնում խըցի մօտ։

Խաղ զինուորական առնում էր փոյթ փոյթ,
Ուսից ուս գընում հրացանը շոյտ շոյտ.
Երբեմն պարզում էր, երբեմն ուղղում,
Մերթ արձակում էր, մերթ նուրբ նկատում։

Այս բնական ու պարզ համեստ տեսարան
Ջըկարաց տանել վէրքերիս դարման.
Ցաւիս բժիշկը այն տեղ չպատահեց,
Սիրտս և հոգիս այրեց, խորովեց։

Ե.

ՍՈՒԳ ՋՈՒՂԱՑԵՑԻՈՑ

Ափսո՛ս քեզ Հայոց խեղճիկ ժողովուրդ,
Ցիրուցան ելաք անմեղ անխորհուրդ,
Գերի գնաման աք դէպ ի Խորասան,
Քաղցած ու ծարաւ, տըկլոր թշուառական։

Խարիւր ու խազար ցաւի դիմացաք,
Ձեր քաղցրիկ երկրէն ոտք դուրս չըդըրաք,

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-16 05:36 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Թիմի ձեր խոր մոր գերեզման թողաք,
Տներն ու ժամերն ուրիշի տուաք։

Էս սիրուն դաշտերն, մեծ մեծ քաղքներն,
Քաղցրիկ ջրերն, ձեր չէն գեղերն,
Ո՞ւմն աք թողման, դուք որ գնաման աք,
Էսպէ՞ս կու լինի որ մոռանում աք։

Վախում ամ էնպէս մաքերնուցդ ընկնի,
Ինչքան որ ողջ աք մաքերնուդ չընկնի.
Պարի ձեր որդուց, թոռանց պատմեցէ՛ք,
Էսպէս խայրենիք քանդած թողեցիք։

Մասիսի անունն, Նոյայ տապանի,
Արարատ դաշտի, սուրբ Էջմիածնի,
Մեր Խոր Վիրապի, սուրբ Գեղարդ, Մուղնի,
Զմոռանաք մինչ ի օրն դատաստանի։

Աչքըս կուրանար, չըլիքս կոտրուէր,
Խեղճ Հայաստան, քեզ էսպէս չի տեսնէր,
Թէ մեռած էի, ինձ երանի՛ էր,
Քան թէ կենդանի՝ աչքըս բաց տեսնէր։

Ս. ՎԱՐԴԱՊԵՏ ՋՈՒՂԱՑԵՑԻ

ԻՂՁ ՊԱՆԴԽՏԻՆ

Թողէ՛ք զիս անէծք, ոճիրք մշտատեւ,
Վճիռք անողոք բաղդին անարեւ.
Թողէ՛ք որ փչրեմ չղթայք իմ ոտից,
Ցոր դարք աստուածոց հեծեն վշտալից։

Զի զիս մայրական կարօտ տանջէ յար,
Թողէ՛ք որ երթամ հասնիմ յԱւարայր։

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-16 05:36 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Թողէ՛ք զիս օտար ափունք մի անգամ,
Թողէ՛ք որ սար ձոր անցընիմ ու գամ.
Վազեմ թեւաբաց, դեռ աչերս ի լոյս,
Տեսնեմ ամպամած արեւն իմ հոգւոյս։

Զի զիս մայրական կարօտ տանջէ յար,
Թողէ՛ք որ երթամ մտնեմ յԱւարայր։

Թողէ՛ք զիս, անգութ աստղեր ու լուսին,
Ծաղիկ ու զեփիւռ արցունք պանդխտին.
Թողէ՛ք որ ծածկիմ նոճեաց շուքին տակ,
Ուր Վարդան հանգչի, ու փառաց վտակ։

Զի զիս մայրական կարօտ տանջէ յար,
Թողէ՛ք որ երթամ նստիմ յԱւարայր։

Թողէ՛ք որ գրիչս առնեմ ու քնար,
Սրտիկս ու հոգիս լարեմ վշտահար.
Երգեմ ո՛հ երգեմ հառաջանքս ու սէր,
յԱշխարհն Աստուծոյ, յերկիրս իմ աւեր։

Զի զիս մայրական կարօտ տանջէ յար,
Թողէ՛ք որ երթամ ու լամ յԱւարայր։

Թողէ՛ք, մէն մազերս, շուրջ ածեմ կարօտ,
Տեսնեմ Եդեմիս կենացն առաւօտ.
Տամ անդ սիրահար շնչիկս յետին,
Զոր Հայուն բաժակ դրած է երկին։

Բա՛ւ զիս մայրական կարօտ տանջէ յար,
Թողէ՛ք ալ թողէ՛ք, մեռնիմ յԱւարայր։

Ս. Հ. ՖԷԼԷԿԵԱՆ



Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-16 05:37 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ՈՒՂԵՐՁ ԱՌ ՍՈՒԼԹԱՆ ՀԱՄԻՏ Բ.
ԹԱԳԱՒՈՐ ՏԱՃԿԱՑ
Ի ԴԻՄԱՑ 36 ԴԱՒԱՃԱՆ ԷՖԷՆՏԻՆԵՐՈՒՆ

Շնորհակալութիւն վեհափառ Սուլթան,
Որ դու քար ու քանդ արիր Հայաստան.
Օրը հազարով Հայեր մորթեցիր,
Հայոց չէն գեղեր ամայացուցիր։

Փա՛ռք և պարծանք քեզ, վեհափառ Համիթ,
Որ հնազանդելով պաշտած Ղուրանիդ.
Մեր Աւետարան դու կոխկրտեցիր
Ու զազիր աղբով խաչ նկարեցիր։

Գոհութի՛ւն և փառք, մեծդ Փատիշահ,
Որ Հայ ջնջելում գտար դու քեզ շահ.
Հէն Զէրքէզները ու գող Քուրտերը,
Դարձան սրտակից քու ընկերները։

Մռայլ բանտերէն հազար Հայ բերան
Կօրհնեն անունդ, վեհափառ Սուլթան.
Որ Տօնացուցում տեղ չի թողուցիր,
Բիւր նահատակաց անուամբ լցուցիր։

Բնաւ չի մոռնալ քեզ, վեհդ Սուլթան,
Քեռ երջանկացած աւեր Հայաստան.
Քու մեծ անունն ու սիրագործութիւն
Յաւերժ կը յիշէ Հայոց Պատմութիւն։

ԳԱՄԱՌ — ՔԱԹԻՊԱ

Generated on 2016-06-16 05:37 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY

ԱՐՏԱՍՈՒՔ ՀԱՑ ՄԱՆԿԱՆ
Ի ՄԱՀ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ ՎԱՐԴԱՆԱՑ
ԴԻՒՑԱԶՆԵՐԳՈՒԹԻՒՆ

Լացէ՛ք պատանիք և կուսանք Հայոց,
Սու՛գ առնու Մասիս և Հայոց լեռներ.
Զի ահա մահուան անգութ գերանդի,
Որբացեալ թողու զաշխարհ Հայրենի....

Հայոց աշխարհիս քաջ բազկաւ որդին,
Փռուած է Մասեաց շուքերուն ներքեւ.
Շնչասպառ լանջացն հառաջանք յետին,
Գոչէ նա Աստուած, կրօնք ու Հայրենիք։

Իր սրտահառաջ ձայնից զուգակցին,
Ահագնատեսիլ դրօշակակիրներ,
Սպիտակազգեաց չորս դին դեգերին,
Գերեզմաններէն հազար դիւցազունք....

Եւ արիւն լուայ մարմնոյն առընթեր,
Սեւ քօղն երեսին լուռ մունջ շուարած.
Զեռն ի ծնօթ Ղեւոնդ գաղտնի կարտասուէր,
Կը ճմլի Յովսէփ ցաւօք տրտմազգաց։

Արեւն ու լուսին ամպի տակ փակուած,
Լուսոյ ճակատին ի մութ են ծածկեր.
Մասեաց արձագանգք կոծեն տրտմագին,
Սիրուն Հայաստան սեւեր է հագած։

Հրեշտակն Հայրենեաց տրտում թախծագին
Եկած է այսօր Հայոց գերեզման.
Արիւն արցունքով տապաններ ցողէ,
Վարդանայ բերնէն խօսք մը կսպասէ։

ԱԲՐԱՀԱՄ Յ. ԱՅՎԱԶԵԱՆ

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-16 05:37 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ԵՍ ԿԸ ՍԻՐԵՄ

Ես կը սիրեմ խաղաղ գիշեր վճիտ լուսնի փայլին տակ,
Ծառի մը քով, առուի մ'եզերք նստիլ խորհիլ միս մինակ.
Ես կը սիրեմ սիրուհւոյս հետ երգել նաեւ, քաղցրադէմ
Վարդենիի տնկին մօտիկ ո՛հ ի սրտէ կը սիրեմ։

Ես կը սիրեմ լսել ստէպ նէրա երգերն ե՛ղանակ,
Ընկերացած հովի, ջրի, թռչնոց ձայնին ներդաշնակ.
Ես կը սիրեմ սեղմել սրտիս զայն՝ իմ հրեշտակ գանձ անգին,
Անբիծ ճատկէն քաղել համբոյր ո՛հ կը սիրեմ կաթոգին։

Ես կը սիրեմ Մայիսի մէջ ամէն առտու խիստ կանուխ,
Արեգակի գալէն առաջ արթուն լինիլ, սրտաբուղխ
Նախ աղօթքներ մաղթել Տիրոջ այն պարգեւին համար մեծ
Զոր իբր ընկեր և պահապան կեանքիս հրեշտակ պարգեւեց։

Ես կը սիրեմ յետոյ մեկնիլ սիրուհւոյս հետ ճէմ ի ճէմ,
Ինջնելապարտէզ, սոխակին հետ նստել վարդի տունկին դէմ
Երգել, հսկել զայդ կարմրագոյն փափուկ ծաղիկ զոր կոյսին
Հանգոյն անմեղ՝ մահկանացուաց գրաւէ, դիւդէ սիրտ, հոգին։

Ես կը սիրեմ ազատ ապրիլ իմ երկրիս մէջ Հայրենի,
Լինիլ բարի քաղաքացի, կտրիճ զինուոր անուանի.
Ես կը սիրեմ իմ զաւակաց ուսուցանել ամէն օր
Իմ ազգութիւն, իմ սուրբ կրօն և իմ լեզուն դ արեւոր։

Ես վերջապէս շատ կը սիրեմ մեռնելէ վերջ մի անուն
Բարի ձգել ի յիշատակ իմ զաւակաց, ամէնուն,
Որ տապանիս վրայ յաճախ տաք արտասուք գան թափեն
Հայոց կուսանք և օրիորդք ծաղկունք նուէր ինձ բերեն։

Հ. ԷԿԻՆԵԱՆ

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-16 05:37 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ՀԱՑ ԵՒ ՀԱՑՈՒԹԻՒՆ

Ո՞վ է Հայը. մի՞թէ նա է, որ խօսում է Հայ լեզուով,
Եւ կամ՝ որի մականունը յանգում է «եան» մասնիկով.
Որ ուտում է ամենայն օր ճաշին տոլմա ու փըլաւ,
Կամ պարծանօք միշտ հագնում է Հայի գըդակ ու հալաւ։

Ո՞վ է Հայը. մի՞թէ նա է, որ գնում է Հայի ժամ,
Ու տարէնը հաղորդվում է խիստ սակաւից՝ չորս անգամ.
Որ կեանքումը պաս չի կերել ծոմ էլ պահում է նոյնպէս,
Յօրանջելիս խաչ է կնքում բաց բերանն ու երես։

Ո՞վ է Հայը. մի՞թէ նա է, որ տեսնելիս տէրտէրին
«Օրհնեա ի տէր» պատրաստ ունի ամեն րոպէ իր բերնին,
Որի համար մեծ ամօթ է, նաև մեղք է մահացու,
Թէ Զատիկի թաթախմանը չուտէ թերխաշ կարմիր ձու։

Զէ, սի՛րելիս, ազգութիւնը չէ՛ արտաքին արարմունք
Հայ ծնելդ անգամ չի տալ քեզ հայութեան իրաւունք.
«Ով» և կամ«եան» մականունիդ վերջի վանկի մասնիկը,
Կարմիր ձուով կամ թէ անձու կատարում ես Զատիկը։

Քալլա–փաչա կամ թէ բօրշ է ամեն օրուայ կերածդ,
Սեռտուկ, պայլտս կամ թէ չուխայ է վրայի հագածդ—
Ողջը մին է. ծեսով չես տալ ազգիդ ինաս կամ օգուտ,
Տեղը մնայ ազգութիւնը, այդ նաև վարձ չէ՛ հոգուդ։

Թէ դու Հայ ես՝ հայութիւնդ պիտի հարգես անպատ-
ճառ,
Հայաստանը պիտի լինի յուսոյ աստղ քեզ համար.
Օտարինը դու մի՛ ատիլ, մի՛ էլ սիրիլ կուրօրէն,
Բայց քու Հայի օգուտները միշտ վե՛ր դասէ ամենէն։

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-16 05:37 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Արուեստ, ուսում, շրջեղարուեստ տարածէ՛ Հայ ազգի մէջ,
Բայց բռնութեամբ միշտ հեռացո՛ւր նորա մէջէն կրօնի վէճ.
Քեզ ի՞նչ շահ է, թէ դու կասես՝ հոգին բղխելէ Հօրից,
Կամ թէ Որդին Հոգւով սրբով անսերմ ծընունդ է Մօրից...

Թո՛ղ, սի՛րելի, այդ խնդիրքը, աչքդ դարձո՛ւր դէպ հարաւ,
Բիւր բիւր հոգիք դու կը տեսնես կորած դորա պատճառաւ
Բայց մինչ այսօր այդ խնդիրքը մնացել է անվճիռ,
Թոյլ խելքո՞վդ աշխատում ես քակել անքակ այդ կնճիռ։

Սիրէ՛ ազգդ ո՛չ լոկ խօսքով, սիրէ՛ ինչպէս քու անձը,
Նորա օգտին, թէ պէտք լինի, զոհէ բոլոր քու գանձը.
Մի՛ խնայիլ կեանքդ անգամ, արիւնդ բե՛ր նորան զոհ,
Ո՛չ այն յուսով, որ քու ազգը իսկոյն լինի քեզի գոհ։

Իստակ սէրը չի պահանջում ամենեւին տրիտուր,
Թէ տուածը յետ առնուի՝ դորան կասեն առուտուր.
Բայց վա՛յ նոցա որք անզգայ են իւր ազգի վիճակին,
Հազա՛ր անէծք նոցա վերայ, երնե՛կ չան պէս սատակին։

Թէ դու Հայ ես՝ գիտե՞ս արդեօք ո՞վ էր ազգիդ նախահայր,
Ո՞ր տեղ, ո՞ր կողմ նա ընտրել էր ազգին համար Հայ աշխարհ.
Քանի՞ տարի անկախ մնաց Հայը օտար ազգերից,
Ի՞նչ էր պատճառ, որ նա ընկաւ իր առաջուայ փառքերից։

Ո՞ւր ցրուեցաւ քու խեղճ Հայը, ունի՞ այժմ օգնական,
Կա՞յ մի հնար, միջոց կամ յոյս նորա կրկին նորոգման.

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-16 05:38 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Թէ կայ հնար՝ դու պատրաստ ես անձդ ազգիդ զոհ անել,
Խիստ կըտրատանք, սաստիկ տանջանք, սով ու ծարաւ միշտ տանել։

Դու պատրաստ ես թողնել կայքդ, ծնողք, եղբարք սիրական,
Սիրելւոյդ տեղ կրծքիդ սեղմել միշտ մահառիթ հրացան.
Դու պատրաստ ես անվախ երթալ թշնամիի սուրի դէմ,
Սարսափելի մահդ տեսնել դու կարո՞ղ ես ծաղրադէմ։

Այդ ժամանակ քեզ Հայ կասեմ.....
.....
Բայց թէ փորդ տօլմաներից, կամ փըլաւից տըռաքի,
Հաւատացի՛ր՝ ուտելովդ օգուտ բերիլ չես ազգի։

ԳԱՄԱՌ—ԲԱԹԻՊԱ

Ի ԳԵՐԵԶՄԱՆՍ

ՊԱՆԴՈՒԽՏ ՀԱՅՈՑ

Զմեռն հասեր, և ես երկիր մ՚ընկած օտար,
Զեզ կը մտածեմ, պանդուխտ եղբա՛րք իմ ցրտահար.
Բուք կը տեղայ, ծածկեց բոլոր լեռն ու ձորեր,
Արդեօք և ձե՞զ, պանդո՛ւխտ Հայոց գերեզմաններ։

Զորս հալածանք անագորոյն մեր թշնամեաց,
Հուրն ու երկաթ վարեցին դո՛ւրս ի Հայրենեաց.
Եւ կամ բաղդին մրըրիկ հասաւ զձեզ խլե՛ց,
Ինչպէս թաթառ՝ ծառն ի յարտէն իւր բացընկէց։

Որ քարշ եկած անապատներ ու սե՛ւ սարեր,
Ի՞ Տապանէն դուրս նետված խե՛ղճ աղաւնիներ.

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-16 05:38 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Ձեզ չըգտաք ո՛չ դադար ո՛չ մէկ հովանի,
Բայց՝ երբ դրիք գլուխդ ի բարձ ցո՛ւրտ խաչաքարի։

Ո՛հ ձեր արիւն, այդ բոցախառն Հայո՛ւ արիւն,
Զոր Հայաստան վառեց սրտիցդ ի բաբախիւն.
Ո՞վ կարծէր, ո՞վ՝ թէ ի պիղծ տիղմ օտա՛ր երկրի
Սառնամանեաց մէջ թափվելով պիտի մարի.....

Այն հառաջանք՝ զոր մռնչէիք ի սրտից ձեր,
Իբրու զորոտ ի սեւ ամպոց, ո՛վ հէգ Հայեր.
Երբ դողդոջուն ձեռքով որդւոյն ձեր մէկհատիկ
Ըզհողն օտար ի գերեզմա՛ն կը փորէիք.....

Այն քան զաղբիւր առատ հոսած ձեր արցունքներ,
Հայո՛ց մայրեր՝ երբ զքնքուշ ձեր աղջիկներ
Արիւնռուչտ ձեռք մը կը խլէ՛ր ձեր սուրբ ծոցէն,
Իբր զկոկոն վարդի կորզած վարդենիէն....

Այն յուսահա՛տ ձեր կողկողանք հա՛րսն ու փեսայ,
Երբ ձեր զայնլոյծ սրտերուդ կապ՝ սուրն անխնայ
Կտրէր նետէր մէկդ ի հիւսիս մէկդ ալ հարաւ,
Զինչ զոյգ շուշան և վարդ խզած արիւնթաթաւ....

Այն ճիչք անմեղ խեղճ տղայոյն ո՛րբ մնացած,
Որու չորս կողմ կոհակաց պէս աղէտք դիզված.
Ու մայրենի չունէ՛ր իրեն պարիսպ ծոցոյն,
Ինչպէս մէկ ճագ մը կորուսած իւր մօրը բոյն։

Այն կուսական ծաւի կամ սեւ սեւ աչուկներ
Որ մարգրտի պէս թափէին սուրբ կաթիլներ,
Երբ զազիր շունչ մը չրթերնուն վարդի՛ց վրան
Կանցնէ՛ր՝ ինչպէս ծաղկանց ընդ թերթ խորշակ ամրան։

Այն անդադար հառաչախաղն ո՛ղբք ու լացեր,
Որով զօտար հող թրջէիք, պանդո՛ւխտ Հայեր.

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-16 05:38 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Ու ցանկալի Հայրենիքէդ հեռու՝ անհաս,
Նախ քան զմահ մեռայք ընկած պտո՛ւղք տհաս։

Այն ցան և ցիր դէզ դէզ Հայոց խե՛ղճ ոսկրներ,
Որ անծանօթք՝ չը ճանչցըված լըցիք խորշեր,
Ու չեղա՛ւ մէկն որ չըկոխէ, պագնէ զձեր հող,
Ու մէկ չեղա՛ւ որ ձեր վերայ թափէ հայ ցո՛ղ....

Ո՛վ հարք և մարք, իմ եղբայրնե՛ր, անո՛ւշ քոյրեր,
Ահա և ես ձեզ պէս օտա՛ր անկիւն մ՚ընկեր.
Ձեզ պէս և ե՛ս Հայաստանէն դուրս՝ անժառանգ,
Ու չունի՛մ յոյս որ իմ լըսվի հոն արձագանգ։

Բայց ձեր արցունք՝ կողողէ ի՛մ ալ աչվընե՛րս,
Ձեր հառաչանք՝ կը տոչորէ դեղնած չըրթներս.
Ի՛մ ալ ճակատ զձեր մահուան թափթըփէ քիրտ,
Ձեր սրտերուն կըզգայ զհուր և խե՛ղճ այս սիրտ։

Ո՛հ, լըսեցէ՛ք խոր հողերէդ խղդուկ զայս ձայն,
Հայե՛ր, ո՛ւր ալ ընկած լինիք հէգ, լռելեայն.
Ո՛հ, այս եղբո՛ր ձայնն է որ ձեզ զամէ՛ն կողբայ,
Եղբօրդ հառա՛չ է որ զՀայոդ անվրէժ՝ լա՛յ...։

Ո՛չ.—մոռցված չէ՛ք, յո՛ր և անկիւն մեռայք երկրիս.
Ձեզ մեք Եղբայրս, և Հայաստան՝ գիտէ Որդիս.
Ո՛չ.—ձեր արցունք չէ՛ զուր թափված հայրե՛ր, մայրե՛ր.
Ձեր սրբութեան վարդ չէ՛ խամրեր Հայո՛ց Կոյսեր...։

* * *

Ա՛խ, այս կրակ սրտէս բղխած կրակ արցունք
Հասնի ամէ՛ն մէկուդ, պանդո՛ւխտք իմ Հայկազունք.
Հալեցնէ՛ գերեզմանիդ ձիւնն ու սառոյց,
Ու միշտ սփռի ձեզ նոր գարուն կենսայարոյց։

Խ. ԵՊԻՍԿ. ՆԱՐ-ՊԷՑ

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-16 05:38 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ԼԱ ՄԱՐՍԷԾԼԵԷԶ

Արիք, որդիք դուք Հայրենեաց,
Հասեալ է արդ մեզ օր փառաց.
Դրօշ բռնութեան յարիւն թափաւ,
Կանգնի ընդդէմ մեր դիմագրաւ,

Լուա՞յք ի դաշտս պատերազմաց,
Զահեղ գոչիւն վայրագ զօրաց
Գան խողխողել ի գիրկս ձեր
Զորդիս, կանայս ձեր ի սուսեր։

Հա՛պ՝ օ՛ն ի զէն, քաղաքացիք,
Կազմել զգունդ քաջամարտիկ.
Օ՛ն դիմեսցուք տալ ի յագուրդ
Դաշտաց մերոց զարիւն անսուրբ։

Զի՞նչ կամի այդ հրոսակ գերեաց,
Մատնիչ, դաւող թագաւորաց.
Ո՞ւմ այդ անուր ւ՝ անարգ չղթայ,
Ո՞ւմ ի վաղուց պատրաստեալ կայ։

Զի՞նչ, նախատի՛նք մեզ, Գաղիացիք,
Ցո՞րպիսի յոյզս վառիլ պարտիմք.
Մատնել զմեզ վատք յանդըգին
Ի գերութիւն անդ ի նախկին։

Հա՛պ՝ օն ի զէն, քաղաքացիք, ելն.

Զի՛նչ, ժըտիցի՞ն այդ վաշտք օտար
Լինել երկրիս հրամանատար.
Զի՛նչ, այն վարձկան փաղանդ անսաստ
Զգոռ մեր մարտիկս արկցե՞ն տապաստ։

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-21 12:31 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Այլ աղէ՛, Տէր, ձեռք ըստրկաց
Արկցե՞ն զմեօք զլուծ չարեաց.
Եւ տիրապետք անարդք անդրէն
Լիցի՞ն բաղդից մեր տնօրէն։

Հա՛պ՝ օ՛ն ի զէն, քաղաքացիք, ելն.

Դողացէ՛ք բռունք և դուք դրուժանք,
Կուսակցութեանց մեծ անարգանք.
Զի ձեր խորհուրդք հայրենասպան
Վարձս ընկալին գիւրեանց արժան։

Համակ՝ զինի ընդդէմ ձեր ի մարտ,
Թէ դիւցազունք մեր անկցին արդ,
Վեր կենցաղէ զայլս երկիր
Մղել ճակատ վրէժխընդիր։

Հա՛պ՝ օ՛ն ի զէն, քաղաքացիք, ելն.

Նուիրական սէր Հայրենեաց,
Օգնեա՛ ի վրէժ՝ մեր կուռ բազկաց.
Ազատութիւն, մեզ կաթոգին,
Ընդ քո պաշտպանս մարտի՛ր ուժգին։

Արդ՝ յաղթութիւն ընդ մեր դրօշու
Հասցէ՛ ի ձայն քո քաջազդու.
Եւ թշնամիք քո ոգեսպառք
Տեսցեն զմեր փառս, քո զյաղթանակ։

Հա՛պ՝ օն ի զէն, քաղաքացիք, ելն.

(Թարգ.) Պ. Խ. ԹԷՐԶԵԱՆ

Generated on 2016-06-21 12:31 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY

ՀԱՅԻ ԳԱՆԳԱՏԸ

Մեզի մոռցաւ Հայոց ազգը,
Չի լսիր մեր պաղատանքը.
Տեսնել չուզէ մեր տանջանքը.
Ապա որի՞ն մենք գանգըտինք։

Ա՛ստուած, սրտով որ բարի ես,
Մենք վար, Դուն վեր — շատ հեռի ես,
Այժմ ալ խոշոր գործերի ես.
Ապա որի՞ն մենք գանգըտինք։

Ցոյնը մեզի ասլը կատէ,
Նէմցէն մեզնէ կրօնքով զատ է,
Ֆրանկի բանը, կասեն, վատ է.
Ապա որի՞ն մենք գանգըտինք։

Թուրքին միտքը դէպի Պալքան,
Իսպառ մոռցաւ նա Հայաստան,
Նրան պէտք է լոկ մեր փարան.
Ապա որի՞ն մենք գանգտինք։

Մեր տեղը քաջ կտրիճներ կայ,
Պէտք որ եղաւ՝ ստակ ալ կուգայ,
Մենակ՝ ճամբայ ցուցնող չիկայ.
Ապա որի՞ն մենք գանգըտինք։

Հայի դաշտե՛ր, արեա՛ն դաշտեր,
Շուտ կուլ տըւիք Հայի քաջեր,
Թէ որ ձեզմէ մէկը ելլէր,
Մեր գանգատին վերջ կը դնէր։

ԳԱՄԱՌ–ՔԱԹԻՊԱ

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-21 12:32 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Generated on 2016-06-21 12:32 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from
HARVARD UNIVERSITY



ՀԱՑՐԻԿ

Generated on 2016-06-21 12:32 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from
HARVARD UNIVERSITY

ՀԱՅՐԻԿ ՃԱՆ

Գարունն է եկել գեղեցկատեսիլ,
Կարօտ եմ տեսքիդ, Հայրիկ-ճան,
Շուտ արա հասի՛ր։

Մեր սիրտն ու հոգին քո գլխին զուրպան,
Հրեշտակդ Հայ ազգին, Հայրիկ-ճան,
Դարձիր դէպ ի Վան։

Տարակայ սրտերն դու մորմոքեցիր,
Երբ քաղցր Հայրենիքդ, Հայրիկ-ճան,
Թողուցիր գացիր։

Վասպուրականի երիտասարդներ,
Եւ օրիորդներ, Հայրիկ-ճան,
Սեւեր են հագել։

Վոսփորի վայելքն գիտեմ սիրել չես,
Վարագայ Վանքին, Հայրիկ-ճան,
Կարօտ կը քաշես։

Գալիլեան աստեղց բուրաստան ծաղկանց,
Սիրոյ տեղի տան, Հայրիկ-ճան,
Արժիւդ Հայրենեաց։

Եւրոպ՝ճանաչեց քո բարձր արժանիք,
Ունիս մի տիտղոս, Հայրիկ-ճան,
ՀԱՅՐԵՆԵԱՑ ՀԱՅՐԻԿ

* * *

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-21 12:32 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ԳԵՐԻ ՀԱՑՈՒ ԱՂՕԹՔԸ

Գոհ ենք քեզնից, ո՛վ Բարերար,
Օրհնեալ լինի միշտ քո անուն.
Արդար արեւդ այդ լուսավառ
Թո՛ղ հետ բերէ մեզ փրկութիւն։

Ո՛հ, ուրախ օր չնորհի՛ր, Տէ՛ր,
Մեր խղճալի Հայրենիքին,
Նորա սիրուն սարեր, դաշտեր
Օրհնում են քեզ եռանդագին։

Մի՛ տար, Աստուած, որ կործանուի
Սրբակրօն Հայոց աշխարհ,
Թո՛ղ քաղցր անուն Հայաստանի
Մնայ կենդան միշտ մեզ համար։

Բա՛ց մեզ քո դուռն ողորմութեան,
Յեսու, Մովսէս մեզ ուղարկի՛ր,
Որ այս դժնեայ եգիպտոսից՝
Աւետեաց մեզ տանեն երկիր։

Ո՛հ, այն աշխարհ, ուր առաջին
Քարոզուեցաւ Աւետարան,
Փայլեց դրօշը ծիրանածին,
Կանգնեցաւ Խաչ քրիստոնէական։

Ուր նուիրական նահատակներ,
Դէմ վիշապին զինուորեցան,
Պատերազմի կանաչ դաշտեր
Նոցա արեամբ ներկուեցան։

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-21 12:32 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Ուր մեր հայրեր երանելի,
Գրիգոր, Ներսէս, Մեսրոպ, Սահակ,
Մեծարեցին անուն ազգի,
Եւ ննջեցին ծաղկապսակ

Ս. ՇԱՀԱԶԻԶԵԱՆ

ԵՂԱՆԱԿՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՆՈՒԷՐ ԱՌ ՀԱՅԿՈՒՀԻ

Գարնանայինն երբ արեւ
Այրարատայ տայ բարեւ,
Ո՞ այդ սիրուն քաղցր էակ
Իբր արմաւոյ բարունակ.
Դէմքն սպիտակ լուսանման
Վարդից կարմրով ցոլանան.
Աստեղք աչաց սեւորակ
Աղեղնաձեւ բոլորակ
Եւ ոլորուտ վարսից ծոպք
Սեաւ մետաքսեայ են խոպոպք։
Իսկ երբ փափկիկ մատերով
Ցասմիկ կանաչ ծաղկերով
Գսակ ի գլուխ իւր դնէ
Եւ սիւք զճակատն համբուրէ։

Ո՞ սա, ծաղկա՞նց Թագուհի
Կամ սիրո՞յ աստուածուհի,
Ո՛չ. սա Հայոց Օրիորդ
Սա գեղեցիկն Հայկուհի.
Ով որ զանի չէ տեսեր
Նա Սէրն ինչ է չէ գիտցեր
Նա Շնորհքն ինչ է չէ ճանչցեր։

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-21 12:32 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Ցամարայնի երբ արեգ
Ի միջօրեային գայ հրաշէկ,
Ո՞ այդ սիրուն վեհն էակ
Այտքն ի տապոյ կարմրորակ,
Աստեղք աչաց զոյգ են հրատ
Սուսեր ընդ մէջ պողովատ.
Տե՛ս, դրօշ ի ձեռն վէտ ի վէտ
Դիմէ 'նդ առաջ քաջք զհետ
Հոն՝ ուր փառաց հունձք հասուն
Տաս պարսիկք՝ մի հայկազուն.
Իսկ երբ յաղթող իւր աջով
Բարձրացնէ լի փառքով
(Մատամբ ցուցեալ զյաղթանակ)
Քաջաց թագ՝ դափնի պսակ։

Ո՞ սա, Մասեա՞ց Դիցուհի
Կամ ռազմի՞ց աստուածուհի,
Ո՛չ. սա Հայոց Օրիորդ
Սա վեհազունն Հայկուհի.
Ով որ զանի չէ տեսեր
Նա Սէրն ինչ է չէ գիտցեր
Նա Փառքն ինչ է չէ ճանչցեր

Իսկ յաշնայնի երբ բարձունք
Դեռ իբր ոսկի են փայլունք,
Ո՞ այդ սիրուն ժիր էակ
Գայ ստուերաց հետ ի ձորակ.
Օրհնեալ քայլից նորա հետ
Առատութիւն գայ իր հետ.
Դըստերց Հայոց զուարթ շար
Եւ չինականք մեր կայտառ
Գար զնովաւ առնուն շուրջ
Ուրախ են սիրտք և դէմք լուրջ
Իսկ երբ գողտրիկ իւր ձեռքով
Գսակէ իւր գլուխն հասկերով

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-21 12:33 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Ապա առեալ մի բաժակ
Մաղթէ մեզ բաղդ աջողակ։

Ո՞ սա, դաշտա՞ց Դիցուհի
Կամ այգեա՞ց աստուածուհի,
Ո՛չ. սա Հայոց Օրիորդ
Սա ժիրաժիրն Հայկուհի.
Ով որ զանի չէ տեսեր
Նա Սէրն ինչ է չէ գիտցեր
Նա կեանքն ինչ է չէ ճանչցեր։

Սառնամանեաց երբ պաստառ
Ծածկէ զլերինս ու դալար,
Ո՞ այդ սիրուն գողտր էակ
Դէմքն ընդ քօղով սեւորակ.
Տե՛ս, ի՞նչ յուշիկ են ոտքեր
Կարծես ձիւնն իսկ չեն ճմլեր.
Աչքէն մարգրիտ թափելով
Ո՞ւր, ո՞ւր թռանի նա փութով....
Տալ մերկ մանկան տաքուկ լաթ
Խեղճ կարօտին լի արծաթ.
Իսկ երբ կուրծքերն հեւալով
Ու ջինջ ձայնը դողալով
Իւր մտերիմին մօտն որ գայ
Եւ քօղքն ու սիրտն որ բանայ,

Ո՞ սա, որբո՞ց թագուհի
Կամ այրեա՞ց աստուածուհի,
Ո՛չ. սա Հայոց Օրիորդ
Սա աննմանն Հայկուհի.
Ով որ զանի չէ տեսեր
Նա Սէրն ինչ է չէ գիտցեր
Նա Գութն ինչ է չէ ճանչցեր։

Ց. ՈՍԿԱՆ

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-21 12:33 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ԱՐՏԱԻԱԶԴ ԱՌԱՋԻՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾ ԹԱԳԱՒՈՐ

Ա.

Բա՛նտ մահաստուեր, բացվէ՛ հոգւոյս իմ առջեւ...
Ես պատերէն քո չեմ սարսիր թանձր ու սեւ,
Ես խորշերէն քո չեմ խորշիր գէճ խաւար,
Ես չեմ փախչիր չղթաներէդ ժանգահար. —
Բա՛նտ մահաստուեր, բացվէ՛ հոգւոյս իմ առջեւ։

Եգիպտական ոչ զիս վաճառք ոսկեգանձ,
Ոչ արքունիք զիս հրապուրեն Պըտլոմեանց.
Այլ գամ տխուր ի Հայրենեաց իմ պանդուխտ,
Գամ ես գերի թագաւորիս ոտն ի յուխտ. —
Բա՛նտ մահաստուեր, բացվէ՛ հոգւոյս իմ առջեւ։

Հո՛ն ուր արքայն իմ կայ թշուա՛ռ Արտաւազդ,
Քաղցր է դիմել ինձ տարփանո՛ք սրտավազ.
Ես զիմ մոռնամ պանդխտութիւն և ցաւեր,
Երբ զիմ պանդուխտ տեսնեմ արքայն յիւր վշտեր. —
Բան՛տ մահաստուեր, բացվէ՛ հոգւոյս իմ առջեւ։

Բ.

Գիշեր է, և այն օթեւան ցաւոց
Կրկին խաւարի մէջ երերակոծ,
Ոչ մէկ գթալիր աստեղ դող ի դող
Կամ լուսնին անուշ սպրդի հոն շող։

Ալեքսանտրիոյ վառ ի վառ ջահեր
Կարծես յօր փոխել ջանան զգիշեր.

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-21 12:33 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Եւ ուրախալից գոչիւն ամբոխին,
Բանտին պարսպաց զերդ հողմունք բաղխին։

Լո՛ւռ էր այն բանտ, լո՛ւռ իբր գերեզման...
Բայց երբ թընդաց օդ խուժանին ի ձայն,
«Կեցցէ՛ Մարկ–Անտոն, կեցցէ թագուհին,
«Մեռցի՛ Արտաւազդ Հռոմայ հայ գերին»։

Այն ժամուն բանտին նսեմ կամարանք
Մի խուլ հեծութեան տըւին արձագանք.
«Հռոմայ հայ գերի՞ն»... վա՛յ զարկաւ ճատկին,
Եւ շառաչեցին շղթայք իւր կրկին։

Պահ մը մտայոյզ գլխով գետնայեց,
«Այո՛ Արտաւազդ, գերի՛ ես, գոչեց.
«Գերի՛ ես, վկա՛յ շղթայդ ի դաստակ,
«Գերի՛ ես, վկա՛յ ճակատդ անպսակ։

«Գերի՛.... ե՞ս գերի՛, որդի՛ս Տիգրանա՛յ,
«Որ իւր պատուանդան ունէր զԱսիայ....
«Գերի՛, ե՞ս արքայս Հայոց այն մեծաց
«Որ դողացուցին զարքայս փառազգեաց։

«Հռոմայ գերի՛, ե՛ս որ քաջապէս
«Նորա դէմ փառաց իջայ յասպարէզ,
«Եւ արծիւներովս իմով մարտագոռ
«Գերեցի նորա զԱրծուիս ահաւոր....

«Բայց ահա յաղթողս և ե՛ս դերեցայ....
«Այլ հա՛յր իմ Տիգրան, քո՛ արեւ վկայ,
«Որ զայս շղթաներ չետ ինձ վատութիւն,
«Այլ հռոմէական դաւաճանութիւն»։ —

Գոչեց, և աչվին ի կրակ բոցավառ
Վերցուց երկաթներն առ երկինս արդար,

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-21 12:33 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Եւ մռնչելով զերդ ա՛մպ երկրասաստ՝
Դողացո՛յց դբանտ առիւծն Արտաւազդ։

Գ.

Առի՛ւծդ հզօր, քա՛ջ լեր, թէպէտ ի բանտիս՝
Բայց դու մեծ ես քան զվատդ ոսոխ յարքունիս.
Թէպէտ կապված են ձեռքդ՝ Հայոց սանձակալ,
Բայց քան զկապողն այն ձեռք՝ հզօր են դարձեալ։

Մերկ է ճակատդ, անփառունակ սակայն չէ՛,
Արքայական փառքդ ի յաչաց քոց ցայտէ.
Եւ թէպէտ աչդ ի մականէն է թափուր,
Այլ ոչ եթէ և յիւր ուժոյն ամրակուռ։

Ո՛վ Տիգրանայ մեծ արժանի գո՛ռ ծնունդ,
Թէ նա զբոլո՛ր Ասիա կոխեց հանեց թունդ,
Դու օ՛ն բաղդին ե՛լ Արտաւազդ ախոյեան,
Եւ վերացի՛ր ի մահուանէդ յաղթական։

Այո՛, արքայ մը ոչ միայն ի գահու,
Այլ մե՛ծ է նա մե՛ծ և նսեմն ի մահու.
Որչափ ջանայ բաղդ քեզ ընկճել դիմակալ,
Ո՛վ քաջ, կարես յանմահութիւն խոյանալ։

Խ. ԵՊԻՍԿ. ՆԱՐ-ՊԷՑ

ՀԱՑՈՑ ԱՇԽԱՐՀԻԿ

Ա՛յ մանկտիք, եկէ՛ք շուրջ Նահապետիս,
Ականջ դի՛ք շայիր հօրդ յետքի ճայնիս.
Գլպուլն ու սարեկն երգերն են նորել,
Ինն՝ հետ տատրակին հողու հաւասարել։

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-21 12:33 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Մանկտիք, զիս Հայոց հողն ու ջուր սնուցել,
Ես այն հողն ու ջուր սրտով եմ սիրել.
Հայրենեաց հարուստ է հող, ջուրն անուշ,
Քանց օտար վարդ քաղցր է հայրենեաց փուշ։

Հայաստանի օդն է քաղցր ու բարակ,
Հովերն են անուշ, պայծառ են վտակք.
Ջուրն ու պտուղն համ տան անմահութեան,
Խոտն ոսկեզօծէ զգառներուն բերան։

Ցոսկեթել ամպոց յայգուն զովագին
Թորթոր իջանէ ցօղիկ մանրագին.
Կարմիր ճաճանչով արեւուն շաղուած
Գայ ի խաւարծիլ մանանայ կենաց։

Ո՛հ, լերունք ծաղկած, ոհ, ջուրք ծիծաղկոտ,
Ձանուշիկ հովերդ ի յիս ածէ՛ք մօտ.
Հողմունք անուշիկք, եկէ՛ք մօտ ի յիս,
Շունչս ու երգս առէ՛ք տարէ՛ք ի Մասիս։

Տարէ՛ք վերջի շունչս ի տուն տապանին,
Ու լսեցուցէ՛ք զաւկաց Թորգոմին.
Ձեզ կասեմ, մանկունք սիրունք նազելիք
Որոնց է բնական Հայոց աշխարհիկ։

Մ՚ուրանայք զերկիրդ ու զազգդ սիրուն,
Մառն՝արմատով ծառ, տունն՝ հիմամբն է տուն։

Հ. Ղ. Վ. ԱԼԼՇԱՆ

Generated on 2016-06-21 12:33 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY

ԱՂԱՍՈՒ ՄՕՐ ԵՐԳԸ

Զարթի՛ր, մանուկ իմ նազելի, բա՛ց այդ պայծառ աչերը,
Թերթերունքէդ քունը թօթուէ՛, գիրկը հանգի՛ր քու մօրը,
Բաւ քեզ որքան բարի հրեշտակք հեքաթ ասին երազում,
Այժմ արի՛ քեզ այն պատմեմ, ինչ պիտ՝տեսնես աշխարհում։

Զարթի՛ր, որդեակ, քանի՞ քընես,
Բա՛ց աչերդ այդ նախշուն,
Ուր որ մայրդ իւր բաղդ, փառքը,
Կեանք ու արեւն է տեսնում։

Դուն կը՝մեծնաս, բոյ կը քաշես — չինար բոյիդ ես ղուրբան, —
Քեզ ուժ կուտան Մասսի քաջքը, որ դու լինիս քաջ Վարդան,
Իմ մատերով մի ոսկեթել մէջքիդ գօտի եմ կարել,
Գօտիիցդ թուր կը կապեմ, այն էլ ինքս եմ սրրել։

Զարթի՛ր, որդեակ, քանի՞ քընես,
Բա՛ց աչերդ այդ նախշուն,
Ուր որ մայրդ իւր բաղդ, փառքը,
Կեանք ու արեւն է տեսնում։

Մեր բակումը ձի է կայնած՝ քեզ է մնում անհամբեր,
Զարթի՛ր, որդեակ, քանի՞ քընես, ա՛ռ քու թուրը մահաբեր,

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-21 12:45 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Քու Հայ ազգը հեծեծում է, ձեռքը, ոտքը չղթայած,
Քու եղբարքը գերութեան մէջ... քա՛ջ, միայն դո՞ւ ես քընած...։

Զարթի՛ր, որդեակ, քանի՞ քընես,
Բա՛ց աչերդ այդ նախշուն,
Ուր որ մայրդ իւր բաղդ, փառքը,
Կեանք ու արեւն է տեսնում։

Զէ, իմ որդին շուտ կը զարթի, ձին կը հեծնէ սանձակոծ.
Հայի արցունքը կը սրբէ, կը դադրացնէ լաց ու կոծ.
Հա՛յ եղբայրներ, քիչ էլ կացէ՛ք, իմ Աղասին զարթեցաւ,
Գօտին կապեց, թուրը կախեց ու իր նժոյգ ձին նստաւ։

ՔԱՄԱՌ–ՔԱԹԻՊԱ

Մ Ե Ռ Ի Ք Ա Լ Մ Ե Ռ Ի Ք

Մեռի՛ք ալ մեռի՛ք անգութ ւ՝ անողոք,
Թշնամիք, անտէր կարծէք զազգն անոք.
Զէք կարող զայն ձեզ ձեռքն ընել գործիք,
Մեռիք ալ մեռիք, (կրկ.)։

Ինչ հարկ է ապրիլ անխեղճ ւ՝ անզգայ,
Հեռացէ՛ք, բացուին դռներն Թորգոմայ.
Գլխլան մեր ասուղեր, ծաղկին մեր դափնիք,
Մեռիք ալ մեռիք,

Փառաց աղաւնին գտաւ իւր իջեւան,
Գերութեան չղթայն փրցուց Հայաստան.
Աւա՛ղ, վատ քաջերդ եղան խօլ գերիք,
Մեռիք ալ մեռիք,

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-21 12:45 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Ազատութեան դարն մեզ տուաւ արեւ,
Զեռունիդ դեռ չուք թողո՞ւք մեր վերեւ.
Մենք Հայ եմք և մարդ մերն է Հայրենիք,

Մեռիք ալ մեռիք,

Վարժ են այս ազգի պատմագրած եղեր,
Ձեր համար շարել սրտաշարժ տողեր.
Ձեզ պատկերել սեւադեմ ոգիք,

Մեռիք ալ մեռիք,

Թէ մեր փառքն ու սէր ձեր բռունք կորուսին,
Մատնի՛չք, ի՞նչ մնաց ձեզ և մեզ բաժին..
Ազգ ողորմելի թշուառ տնեցիք,

Մեռիք ալ մեռիք,

Չէ՛ք յարգեր ազգի սուրբ խօսքն ու սուրբ կամք
Չէ՛ ձերն կանգնում, այլ անկումն, անզգամք.
Վասակք, Մերուժանք, Սարգիսք, դասալիք,
Մեռիք ալ մեռիք,

* * *

ԵՐԳ ՀԱՅՐԵՆԵԱՑ

Հայրենիք սրբազան իմ սիրուն աշխարհ,
Թռչում եմ դեպի քեզ հոգովս անդադար.
Բայց աւա՜ղ այս բանտում փակուած եմ անտէր,
Պատերազմի դաշտում չեմ կռվում և ես։

Հանապազ տանջուեցայ քո ճակատագրով,
Սրտումս չղթաներիդ ձայներ կրելով....

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-21 12:45 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Չեմ կարող մոռանալ իմ ազգ հարազատ,
Ա՛խ, կամ ոչնչանալ, կամ լինիլ ազատ։

Քաջ ընկերներովս հեշտ է ինձ կռվիլ,
Սուրբ գործի համար քաղցր է մեռանիլ.
Բայց աւա՜ղ այս բանտում փակուած եմ անտես,
Պատերազմի դաշտում չեմ կռվում և ես։

Զգիտեմ ի՞նչպէս է կռիւն հրդեհվում,
Ես չունիմ ոչինչ լուր, բայց լուրն է թռչում,
Տարվում է միշտ համբաւ սպաննութեան ահեղ,
Թափվում է ազգ—արիւն, բայց ես չեմ այնտեղ։

Ա՛խ, քո ազատութիւն փոթորկի մէջ է,
Եւ վառ արշալուսով քո օր կարմրում է.
Թող այստեղ չարչարուիմ անծանօթ կոչուած,
Միայն քեզ, հայրենի՛ք, աեսնեմ ազատուած։

Ց. ՔՈՒՉՈՒԲԷԳԵԱՆՑ

ԱԻԵՏԱԲԵՐ

ԱՌ ՄԱՑՐՆ ՀԱՑԱՍՏԱՆ

Մռայլ կողեր թողէ՛ք զիս,
Զայն մի լսուի փրկարար,
Զեռք մի քակէ իմ պատանք.

Ելի՛ր, մայրիկ, բա՛ւ նիրհես,
Ցարութեան դար է այս դար։

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-21 12:45 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Պատանեակ մ'է այս առոյգ,
Վարդանի դէմքն է իւր դէմք,
Գորով ցայտէ աչերէն.

Ես Վոսփորէն թռչիմ հոս,
Ելի՛ր, մայրիկ, բա՛ւ նիրհես։

Մի ձեռքին մէջ կայ օրէնք,
Ճակտին գրուած Հայրենիք.
Իւր քայլերուն հետքն է լոյս.

Շղթաներդ թող մէկդի,
Ելի՛ր, մայրիկ, բա՛ւ նիրհես։

Խաւար թափի աչերէս.
Այն ի՞նչ այգ է լուսածին.
Այն ի՞նչ այգ է վարդածին.

Լոյսն ապագան է Հայուն,
Վարդերը՝ն յոյս են Հայուն։

Ելնեմ ապա պարեմ զուարթ.
Բերէ՛ք զարդերս պճնուիմ.
Ոսկի զարդերս բերէք ինձ.

Անոնք աւերց տակ կորան,
Ցոյսոյ վարդ մը բաւ է ինձ։

ՄԱՆԻԿ ԷԼՄԱՍԵԱՆ

ՂԱՐԻՊ ՄՇԵՑԻ

Ես Մշեցի ճամբորդ եմ հեռու տեղերէն,
Ձեզ շատ բարև բերեր եմ Հայի գեղերէն.
Ախպէրքըս ինձ ղրկեցին դէպի էս կուման.
(Մի՛ վախնաք, չուզեմ ձեր մանէթն ու թուման)

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-21 12:46 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Վարագայ Սուրբ Խաչէն բերեր եմ ձեզ լուր.
Խղճացէք Հայ ազգիս, տուէ՛ք մէյմէկ թուր։

Հայ ազգը մեր տեղը նեղ օր կը քաշէ,
Օսմանլին ու Քիւրդը կեանքերս կը մաշէ։
Օր կըլլայ՝ գերեվար կանէ մեր տղոց,
Օր կըլլայ՝ արտերըս ձգէ կրակ ու բոց.
Թէ չօգնէք՝ մենք ալ շուտ կըլանք ցիր ու ցան.
Խղճացէ՛ք Հայ ազգիս, տուէ՛ք մեզ հրացան։

Սուրբ ժամերս դարձուցին անասնոց կայանք,
Խորաններս պղծեցին, քանդեցին սուրբ վանք.
Խաչը ոտքով փշրեցին, տեղը դրին լուսնակ,
Խեղճ Հայը օրնիբուն ծաղր է ու ծանակ.
Ո՛վ աղբարք, բերեր եմ ձեզ այսպէս սեւ բոթ,—
Զուզենք մենք ձեր ոսկին, տուէ՛ք մեզ վառօդ։

Այսքան շատ տանջանքին ի՞նչպէս դիմանանք,
Մինչեւ ե՞րբ ձեր դիայ անօգ պիտ՝ մնանք.
Մեր ազգը տէր չունի Սլավոնի նման,
Բարի դուք ըլլայիք մեզի օգնական.
Հոգերնիս տրորած է ջաներս ցաւոտ,
Զուզենք մենք ձեր փարան, տուէ՛ք թնդանօթ։

Շատ տառապանք քաշեցինք դուշմանի ղէնքէն,
Շատ ալ մահ դուշմանը կերաւ մեր ձեռքէն.
Առանց ատոր աշխարհքը մեր չէ բազմամարդ,
Հիմի փուշ կըբըսնի, ուր առաջ էր վարդ.
Բայց մենք ձեր սնտուկի փողին կարօտ չենք,
Հա՛յ աղբարք, չնորհեցէք դուք մեզ մէյմէկ ղէնք։

ՔԱՄԱՌ–ՔԱԹԻՊԱ

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-21 12:46 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ԱՌ ՄԱՆԿՏԻՆ ԳՈՂԹԱՆ

Գողթան մանկտի, ահա ձեզ
Շքեղ փառաց ասպարէզ.

Օն փութացէ՛ք, խումբ կազմեցէք,
Պսակ անթառամ մնայ ձեզ։

Գիտէք ո՞յք են ձեր նախնիք, —
Բանաստեղծից էք որդիք,

Որք քնարով ոսկի լարով,
Հայրենիքին փառք բերին։

Դուք ամենից էք զրկուած,
Փառքեր ունիք, բայց կորած.

Հայ եղբայրներ, ենք մերկ, քաղցած,
Եւ Հայրենիքն աւերած։

Գիտէ՞ք զփառս ձեր նախնեաց,
Թագաւորաց, իշխանաց,

Որք նիզակօք, սուր սուսերօք,
Հայաստանին փառք բերին։

* * *

ԽՐԱԽՈՑՍ ԱՌ ՀԱՑԱՍՏԱՆ

Հայ չէ՞ք մի, մի՛ Թուլանայք, առէք ձեր վահան,
Շողշողուն ճշմարիտ սուր, մի դնէք պատեան.

Զեզի նման քաջ Հայեր զոհ եղան գացին,
Երկնից մէջ վեհ քաջութեան անուն կնքեցին։

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-21 12:46 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Զկա՞յ մի ճշմարիտ Հայ ձեզ ըլլայ ընկեր.
Երկչոտ և թուլասիրտ Հայք թող չըլլան ընկեր.

Ձեզի նման քաջ Հայեր զոհ եղան գացին,
Երկնից մէջ վեհ քաջութեան անուն կնքեցին։

Ձէ՞ք ճանչնար այն գառնուկը—անկէ սորվեցէք,
Թափեցէք ձեր արիւնը, սիրէք սիրուեցէք.

Ձեզի նման քաջ Հայեր, զոհ եղան գացին,
Երկնից մէջ վեհ քաջութեան անուն կնքեցին։

ՑՈՐԴՈՐԱԿ

Ո՛հ, Հայ եմք, Հայ եղբարներ, սիրտ սրտի կապենք,
Ձեռք՝ ձեռքի տանք, յառաջ երթանք, չուտ երկինք հասնինք։

* * *

ԻՂՁ ՊԱՆԴԽՏԻՆ

Թէ թեւ ունէի,
Ո՛հ կը թռչէի
Ազատ Մասեաց սարերն ի վեր ես ուժգին.
Անկէ ձեզ, Հայեր,
Կարդայի հրաւէր
Թ՝ եկէ՛ք, Հայեր, ըլլանք մէկ սիրտ մէկ մարմին,
Սիրեմ՛ք ընկեր զընկեր՝ սիրեմ՛ք կաթոգին։

Թէ դեռ յիմ արիւն
Ձի խառնուէր թոյն,
Դեռ երակացս մէջ աշխոյժ խաղային,
Ո՛հ, քանի՛ հրպարտ
Կանչէի ազատ
Թ՝ եկէ՛ք, Հայեր, ըլլանք մէկ սիրտ մէկ մարմին, ևլն.

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-21 12:46 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Թէ կեանք ունէի,
Ո՛հ կը լարէի
Թել քնարի բաղդին Հայոց անկենդան,
Որ նա ձեզ խօսէր,
Ձեզ պանդուխտ Հայեր,
Թ՝ եկէ՛ք, Հայեր, ըլլանք մէկ սիրտ մէկ մարմին, ևլն.

Թէ սէր ըլլայի
Կամ անմաշ հոգի,
Կը կապէի Հայոց սրտերն անմեկին,
Ցայնժամ և նոքա
Մի որդիք Հայկայ
Կըլլան ի մի անշուշտ մէկ սիրտ մէկ մարմին,
Սիրենք ընկեր գընկեր, սիրենք կաթոգին։

Ս. Ց. ՖԷԼԷԿԵԱՆ

ՈՂՋՈՅՆ ՏՈՒԷՔ

Ողջոյն տուէ՛ք իմ Հայրենեաց,
Կիսակործան տաճարներուն.
Ողջոյն տուէք աւերակայ,
Արարատեան գաւառներուն։

Ողջոյն տուէ՛ք դժբաղդ Հայուն,
Թշուառ Հայուն, չուառ Հայուն,
Ո՛հ ձեռք տուէք, ո՛հ սիրտ տուէք,
Հոգի տուէք անկեալ Հայուն։

Ողջոյն տուէ՛ք աւարայրիան,
Արիւնաներկ սուրբ վայրերուն.

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-21 12:46 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Ողջոյն տուէք տխուր լուսնի,
Որ լոյս տայ սեւ չիրիմներուն։

Ողջոյն տուէ՛ք ի հող իջած,
Արքայական պալատներուն.
Ողջոյն տուէք գետնատարած,
Սրբոց անբիծ մասունքներուն։

Ողջոյն տուէք պղտոր բոլոր,
Աղի լեղի աղբիւրներուն.
Ողջոյն տուէք ոլոր կլոր,
Մոլար վազող գետակներուն։

Ողջոյն ծաղկանց տո՛ւք խումբ ի խումբ,
Որ կան թոչնած մէջ հովտերուն,
Ուր Հայ սոխակն թումբ է ի թումբ,
Կեանք կը խնդրէ դեռ վատերուն։

Ողջոյն տուէ՛ք Հայ Մուսային,
Որ լայ փառքս իւր Հայրենին.
Ողջոյն տուէք իմ քնարին,
Որ Հայկայ տանս է ողբերգուն։

* * *

Է Գ Ո Ի Ց

Ինձ մի՛ տանջիլ, մի՛ չարչարիլ, սիրական,
Լոկ խոստմունքդ իմ սրտին չեն բաւական.
Բոց աչքերդ ու շուրթներդ վարդանման,
Երջանկութիւն խոստանում են յաւիտեան։

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-21 12:46 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Քեզ տեսնելիս, ա՜խ, մոլորում է միտքս,
Ուժգին ուժգին թափ է տալիս վառ սիրտս.
Մէկ ջերմաջերմ, մէկ սառ վազում է քիրտքս,
Զօրութիւնս հատաւ ինձնից, սիրա՛կան։

Էգուց, էգուց լքսում եմ քու բերանից,
Ցոյսքս հատաւ, հատաւ էսքան խաբուելից.
Քունս փախաւ, փախաւ իսպառ ինձանից,
Դե՞ւ ես դու չար, թէ հրեշտակ ե՞ս աննման։

Էլ մի՛ խաբիլ ու մի՛ խաբուիլ, անձկալիս,
Էգուցները միշտ նման չեն յետ գալիս.
Վա՛յ թէ էգուց աղի արցունք թափելիս,
Դու ինձ ճանփես դէպի մըթին գերեզման։

ՔԱՄԱՌ–ՔԱԹԻՊԱ

ԹԷ ՏԱՑԻՆ ԻՆԾԻ

Թէ տային ինծի
Թագ և աղամանդ գաւազան,
Քեզ զայն ձօնէի՝
Թագուհեաց դըշխո՛յ Հայաստան։

Թէ տային ինծի
Ծիրանի շողշող պատմուճան,
Քո յուս ձըգէի՝
Ո՛վ իմ մայր թշուառ Հայաստան։

Թէ տային ինծի
Հուր, բոց իմ աւուրց պարմանեան,
Քեզ պարգեւէի՝
Զաւիւն իմ և խանդ, Հայաստան։

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-21 12:46 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Թէ տային ինծի
Դարուց հոյլ ի հոյլ չըրջան,
Սիրով քեզ տայի՝
Իմ կեանքն ու հոգին, Հայաստան։

Թէ տային ինծի
Սիրտ և սէր կուսի չուշան,
Ես քեզ ընտրէի՝
Սրտիս միակ սէր, Հայաստան։

Թէ տային ինծի
Պսակ յիմ ճակատ մարգարտեան,
Զաչքիդ ընտրէի
Արտասուաց մի չիթ, Հայաստան։

Թէ տային ինծի
Գոռ ազատութիւն անսահման,
Ես վերընտրէի՝
Քո վեհ գերութիւն, Հայաստան։

Թէ տային ինծի
Հայրենիք՝ չքեղ Եւրոպան,
Ես քեզ խնդրէի՝
Բոլոր ցաւերովդ, Հայաստան։

Թէ տային ինծի
Սրտիս իմ ընտրել օթեւան,
Զաւե՛րսդ ասէի
Ինձ արքայութիւն, Հայաստան։

Թէ տային ինծի
Հրեշտակի քնար բոցեղեան,
Ես քեզ կերգէի
Բոլոր իմ չընչով, Հայաստան։

Խ. ԵՊԻՍԿ. ՆԱՐ-ՊԷՑ

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-21 12:46 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ԱՐՏԱՒԱԶԴ Ի ՎԻՀՆ ՄԱՍԵԱՑ

Գարունն էր կենացս դեռ,
Երկինք ինձ նայեր հաչտ.
Ինծի համար ձոր, լեռ,
Կ'ծաղկէր դալար դաշտ։

Թագն էր զարդ իմ վարսիս,
Քաջաց մէջ էի պերճ.
Շուտ զիս զրկեց Մասիս,
Փառքիս վաղ հասաւ վերջ։

Հեծայ ի սեաւ իմ վեհ,
Անցայ լուրջ մարգերէ,
Որսալ ի Գինայ դեհ,
Ցիռ և պարարտ երէ։

Ողջոյն լերինք ու ձոր,
Ողջոյն տուին ծառեր.
Անշունչ նիւթերն բոլոր,
Լեզու էին առեր։

Բաբէ՛, յանկարծ կասեաց,
Ոտք իմ աչխոյժ սեւոյս.
Կալան զիս քաջք Մասեաց,
Տարան ի վիհն անլոյս։

Փախաւ, թռաւ արեւս,
Ողբա՛ զիս, Սաթինիկ.
Ա՛ռ իմ վերջին բարեւս,
Աղնիւ իմ Հայրենիք։

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-21 12:47 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Ինչո՞ւ բոլոր մարդիկ
Ինծի դէմ են ելեր.
Ինչո՞ւ այսպէս սաստիկ
Կ'գոռան մրճեր, սալեր։

Անզերծ եմ իմ կապէս,
Ի զուր ազգս կը խորհի.
Կրնա՞յ հէք մ'ինծի պէս,
Վախճան տալ աշխարհի։

Անէծք կը կապեն զիս,
Շընիկս, զուր կը մաշես
Ակռադ, զանուր վրզիս
Կապեց հայրս Արտաշէս։

Խիստ, խիստ են հօր մ'անէծք,
Դառն են և ահագին.
Անով կըլլան, ո՛ մեծք,
Ոչինչ փառք ձեր թագին։

Ն. ԶՕՀՐԱՊԵԱՆ

ՍՈՒԻՆԱՄԱՐԶՔ

Զիք գնդակ, վառօթ, փամփուշտըդ հատաւ,
Հրացանդ ալ գուցէ կարգէ դուրս ելաւ.
Բայց բնաւ մի վհատիր, չըլլայ երկնչիս.
Հաւատքդ թող լինի, չի պիտի ընկճիս.
Լեր դու ունկնդիր պետիդ հրամանին,
Սուինք ի կա՛զմ, զգո՛յշ, փողն հնչէ ուժգին։

Օ՛ն ուրեմն, յառաջ գոչէ բարձրաձայն,
Կեցցէ՛ Հայ գինուորն, կեցցէ՛ Հայաստան.
Թող թնդայ դաշտն, դողա թշնամին,
Ահ ու սարսափ տայ նոցա բանակին։

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-21 12:47 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Տեսնե՞ս սա գծուած, վախկոտ սինլքոր,
Որ քեզմէ փախչի արագ, գլխիկոր.
Տուր հարուած մ'ուժգին, սրվոր կռնակին,
Գայ հոգին բերանն, տապալի գետին։

Այժմ ընդոստ դէպ յաջառ քայլ մ'կամ երկու
Լե՛ր ճարպիկ, հանէ ճիչ մը ահարկու.
Օ՛ն յաջմէ վանէ, ապա յանկարծ մխէ խոր,
Ուր լինի հոգ չէ՝ քիթ, բերան կամ փոր։

Դա՛րձ ընդոստ դէպ ձախ, զգո՛յշ պատրաստ կաց,
Կատղած գազան մի քեզ հասնի սրնթաց.
Հա՛ր մէկ մի սրտին մէկ մ'ալ ուղեղին,
Արեամբ վրիժու թող հողք հեղեղին։

Այժմ վանէ յոտից և մխէ փուքով,
Դարձ յետս երեսդ, տուր հարուած մ'ալ կոթով.
Դրօշմէ լաւ, ընկնի նա յետս հեւալով,
(Մազ մնաց գլուխդ պիտի կտրեր սրով)։

Այժմ առ քայլս յառաջադէմ շտապաւ,
Զի դիմաւորես վայրագ Քիւրդն ճիարշաւ.
Գլխից վանէ՛, ապա մխէ՛ ուղիղ կամ կոր,
Մարդու կողին, ճիու փորին խոր խոր։

Բայց զի՞արդ կանգ առնուս, յապաղիս ապշած
Յաղթութեան ոգին գլուխդ է՞ զարկած.
Զե՞ս լսեր եղբարցդ օգնութեան ձայնին.
Քրդերի մի խումբ հասած է վրանին.
Դարձ յետս յանկարծ, օ՛ն անդր շտապաւ,
Յաջմէ, ձախմէ վանէ, հա՛ր ու մխէ՛ լաւ.
Թող գլորին գետին և աստ անդ ցրուին,
Եւ հող քար ու ժայռ արիւնով ներկուին.
Մինչեւ չի մնայ հատ մի Քուրդ ու մուրդ,
Լինին ամենն ալ լաւ մի ջարդ ու բուրդ.

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-21 12:47 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Գոչէ դու յայնժամ, կրկին բարձրաձայն,
Կեցցէ՛ Հայ զինուորն, կեցցէ՛ Հայաստան։

Պիտ՝ անդրադարձէ ձայնն իբր պատասխան
Գիտէ՞ք ուսկի։ — ի Մայր Հայաստան։

«Կեցցե՛ս, Հայ զինուոր, տարիր յաղթանակն,
Պարտքդ կատարեցիր, վայլէ քեզ պսակն։
Տոչորեալ չրթանցս համբոյրներ հրակէզ,
Պիտ՝ բուժեն վերքերդ, կրկին կեանք տան քեզ,
Ե՛կ գրկեմ անգամ մ՝փարեմ քեզ սրտիս,
Եւ կոչեմ իմ քաջ, արժանի որդիս»։

Գ. ԳԱՍՊԱՐԵԱՆ

Ի ԳԱՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ ՏՐԴԱՏԱՑ

Ցա՛զատն ի վեր ի Մասիս,
Արի՛ք, որդիք Հայկեան,
Ցրուեալքդ ի մի խումբ պարու,
Քառից հողմոց փող ազդու՝
Ցաստուածախրախոյս ձայն։

Նախնի կամար բազմերփեան,
Ահա պատի զնովաւ։
Ամպրոպայոզ մրրրկաց,
Հաշտարան պատերազմաց,
Տարփալին ցոլացաւ։

Զայն որոտաց՝ ձայն ահեղ՝
Խորանաձեւ յարկէն։
—Արիագունդ տուն Հայկայ,
Զտառապեալ գահիդ արքայ
Վերականգնեմ անդրէն։

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-21 12:47 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Երդուեալ յաղեղն երկնածիր,
Բարձի գբաղդ ձեր ի մէտս.
Թաթ ձեր յեթեր սլացաւ,
Հակառակորդն սուզաւ.
Վայր ի սանդարամետս։

Դիւցազանց պար Թորգոմեան,
Տխրազգեաց յեղիսեանս,
Ըզլրթագոյն դիմաց մէգ,
Յաստեղաց բոց վառին շէկ,
Յաւետեաց հրաւիրանս։

Արդ իմ արի սպառազէնք,
Տուք կայթս հրսկայաքայլ.
Դաշտք ի պղինձ բոցասցին,
Լերինք ի նշոյլ շլլասցին.
Ջոկատիցդ ի զեռալ։

Ահա ձեզ Հայկ երկնաճեմ,
Հայր ձերում բանակի.
Ասպարափակ հովանեաւ,
Զձեօք ի բարձանց փարեցաւ,
Անթափանց նիզակի։—

Խումբ պար առեալ զարքայիւ,
Զօրավարք Արամայ,
Բոլորեցէ՛ք համերամ,
Պսակ փառաց անթառամ.
Կեցցէ՛ Տրդատ արքայ։

Հ. Ա. Վ. ԲԱԳՐԱՏՈՒՆԻ

Generated on 2016-06-21 12:47 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY

ՉԱՑՆ ՀԱՑՐԵՆԵԱՑ

Օտար ափունք ցրուած ի սփիւռ,
Ո՛վ սիրասուն իմ զաւակունքս,
Ձեր Հայրենիք տրտում տխուր,
Ձեզ կը դիտէ արցունք յաչկունս։

Իմ տաճարներս սէր կը կանգնէ,
Իմ նախատինքս արիւն սրբէ։

Ո՛հ այս քանի՛ տարի անցաւ,
Ուխտեցիք ինձ սէր, յոյս և կեանք.
Ամուլ մրցում, հեռ վիշտ և ցաւ,
Աչս իմ բաժին, աչս է ձեր ջանք։

Իմ տաճարներս սէր կը կանգնէ,
Իմ նախատինքս արիւն սրբէ։

Հընո՛ց՝ ո՛վ դուք որ օտարին,
Փառաց պատուոյ էք խնկարկու.
Անմահութեան դրոշմ, սէր ազգին,
Նախնեաց քրտինք ծախած չըքոյ։

Իմ տաճարներս դուք չէք կանգներ,
Իմ նախատինքս դուք չէք սրբեր։

Կանցնին այսպէս անթիւ օրեր,
Ես յաւերակս նստած յերեր,
Իբրեւ այրի հրոյ մատնուած,
Կոյս ոյր օժիտն է անարգուած։

Գոչեմ, տաճարս ո՞վ կը կանգնէ,
Իմ նախատինքս ո՞վ կը սրբէ։

Ե. ՄՈՒՐԱՏԵԱՆ

Generated on 2016-06-21 13:13 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY

Ա Ռ Հ Ա Ց Ա Ս Տ Ա Ն

Ա՛խ, Հայաստան, Հայաստան,
Ընդէ՞ր կորուսեր տէրըդ.
Եղեր այլոց ապաստան,
Թառամեց վարդ պատկերըդ։

Ո՛չ քեզ պէս բարեպաշտ կար,
Ո՛չ վանքերիդ պէս վանքեր.
Ո՛չ դաշտերիդ պէս դաշտ կար,
Ո՛չ հանքերիդ պէս հանքեր։

Հողըդ պտղաբեր՝ ազնիւ,
Քարերդ ողջ ակունք են.
Գետերիդ լիքըն անթիւ,
Կարմրախայտ ձըկունք են։

Լերինքըդ ծաղիկ հագած,
Իբր հարսնացեալ օրիորդ.
Եղջերուքըդ վաստակած,
Ի՞նչ շահ որ չունիս որսորդ։

Այգեացըդ ամեն մէկըն,
Էր դրախտ Եդեմական.
Բայց անբաղդութեան տէրըն,
Խլեաց լարըդ կենսական։

Թո՛ղ թշնամիքըն բերկրին,
Մեր աչաց արտասունքով.
Ցուսամ՝ երկար չի մնան
Նրանք էլ ուրախ հոգւով։

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-21 13:13 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Աստուած ամենագէտ է,
Անսահման արդարադատ.
Անաչառութեամբ գիտէ,
Լաւին լաւ տալ, վատին վատ։

Ես եմ Սէյեաթի կինը,
Մատաթեան տոհմի Ոսկին.
Հայրենեաց կաթոգինը,
Հաւատացէ՛ք իմ խօսքին։

ՏԻԿԻՆ ՈՍԿԻ ՄԱՏԱԹԵԱՆՑ

ԳԵՐԵԶՄԱՆ ՊԱՆԴԽՏԻՆ

Ա.

Գարնան առտու մ՚էր մեղրակաթ երբ փչեց
Զեփիւռն անուշ, սոխակին հետ զիս քշեց,
Ի լուր թռչնոց դայլայլիկին, երգերու,
Ի տես բնութեան, ծաղիկներու, վարդերու։

Խումբեր տեսայ ճամբուս վրայ տխրագին,
Փունջեր առած, թարմ ծաղիկներ կ՚երթային.
Սիրեցելոց գերեզմանին յուխտ՚ւ ի տես.
Այդ խումբերուն ընկերացայ նաև ես։

Մեռեալներու սուրբ քաղքին մէջ անխտիր,
Դալարներով չրջապատեալ ցան ու ցիր,
Գերեզմաններ տեսայ անշուք, փառաւոր,
Հարուստներու և աղքատաց բիւրաւոր։

Հոն անճնիւր ոք զիւր սիրելոյն գերեզման
Գտնէր, և հոն վարդեր թափէր ցիր ու ցան.

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-21 13:14 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Ծունգի գալով հոն կը թողուր՝ և գիւր փունջ,
Արցունք, աղօթք ու հառաչանք և մրմունջ։

Տեսայ մի հոն աչաց անուես ցուրտ տապան,
Ոչ ոք մի փունջ կամ կաթ մ՚արցունք տայր ներքան։
Երբ մօտեցայ ես այն չիրմին ակնկոր,
Արձանագիրս այս կարդացի անսովոր.

«Հոս կը ննջէ մի խեղճ պանդուխտ որ կեանքին մէջ չունեցաւ,»
«Օր մը հանգիստ, բոպէ մ՚ուրախ, այլ միշտ հոգեր վիշտ ու ցաւ.»
«Գուցէ իւր նինջ այս հողի տակ կրնայ լինիլ անխրոով,»
«Եթէ անցորդք հաճին դնել վարդ մ՚այս ցամքած չիրմին քով։»

Բ

Այլ ոք չ՚եկաւ ուշ դնել այդ տողերուն.
Ոչ ոք տուաւ այդ տապանի հողերուն,
Ի յիշատակ փունջ մը ծաղիկ կամ մի վարդ,
Հէգ պանդխտի գերեզմանին կամ ի զարդ։

Զէ՛, ոք չ՚եկաւ արևակէզ այդ չիրմին,
Կաթիլ մ՚արցունք գէթ նուիրել նժդեհին.
Երկնից աչքերն երբեմն ղրկեն արտասուք,
Պանդուխտներու ցամքած չիրմին սեւասուգ։

Արձանացեալ հոն կանգնեցայ ակնկոր,
Հառաչանքներ դուրս ժայթքեցին սրտէս խոր.
Սև գերեզմանն այդ նժդեհին հէգ անտէր,
Կարծես սրտիս մէջ գաղտնիքներ էր գտեռ։

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-21 13:14 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Եթե չունէի ինձ հետ փունջեր ոչ ծաղիկ,
Որ այդ անտէր շիրմին տայի մունջ լռիկ.
Իմ արտասուաց կաթիլներն ալ էին քիչ,
Թրջել հէգի գերեզմանին կափարիչ։

Սև խորհուրդներ մտածութիւնք անիմաց,
Խռովէին հանդարտութիւն իմ մտաց.
Մօտենալով մէյ մ՚ալ շիրմին այդ անոք,
Վերընթերցայ արձանագիրն անձկանօք։

«Հոս կը ննջէ մի խեղճ պանդուխտ որ կեանքին
մէջ չ՚ունեցաւ,»
«Օր մը հանգիստ, բոպէ մ՚ուրախ, այլ միշտ հո-
գեր վիշտ ու ցաւ,»
Գուցէ իւր նինջ այս հողի տակ կրնայ լինիլ ան-
խըռով,»
«Եթէ անցորդք հաճին դնել փունջ մ՚այս ցամ-
քած շիրմին քով։»

Գ

Բայց պահ մը վերջ մանկիկ մ՚եկաւ սիրանոյշ,
Վարդ ծաղիկներ, փունջեր բերած, զոր քնքոյշ
Իւր ձեռքերով հէգ պանդխտի տապանին
Դրաւ, և հոն ծունգի եկաւ տխրագին։

Ծռեց գլուխն իր հերարձակ, ոսկեգոյն
Մազերն այտից վրայ ինկան վարդագոյն.
Ճակատն առաւ ձեռքերուն մէջ աղօթեց,
Խեղճ նժդեհի շիրմին վրայ արտասուեց։

Արտասունքներն իւր աչքերէն սև դիւթիչ,
Թափթփեցան՝ զայդ թրջելով կափարիչ

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-21 13:14 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Գերեզմանին որոյ ներքեւ կայր փակեալ,
Հոր սիրելւոյն իւր ոսկորներ ցամաքեալ։

«Տէ՛ր, կոչեցի, հէգ պանդխտին այդ դատեր,
Ինդրեմ լսէ իւր սրտաբուղխ աղօթքներ.
Մընէր անտես աչացն արտօսր մանկական,
Որք թափթփին զերթ մարգարիտ պատուական։

Ըսի եթէ ես ալ այսպէս խեղճ օտար,
Մեռնիմ հեռի Հայրենիքէս տար յաշխարհ,
Թող բարեկամք ու իմ սիրուն ընկերներ
Իմ ալ չիրմիս վրայ գրեն այս տողեր.

«Թէ հոս ննջէ պանդուխտ մի Հայ որ կեանքին մէջ
չունեցաւ»
«Օր մը հանգիստ, բոպէ մ՝ուրախ, այլ միշտ հո-
գեր, վիշտ ու ցաւ.»
«Գուցէ իւր նինջ այս հողի տակ կրնայ լինիլ ան-
խռով»
«Եթէ անցորդք հաճին դնել վարդ մ՝այս անտէր
չիրմին քով։»

Հ. ԷԿԻՆԵԱՆ

ԵՐԳ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ

Հայեր, մինչև ե՞րբ արտասուենք,
Լանք յուսահատ, յիշենք, հեծենք.
Կնոջ անկ է ողբալ, կոծել,
Մեզի՝ քրտինք, արիւն թափել։

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-21 13:14 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Կուզեն՞ք փրկութիւն,
—Սիրենք գիտութիւն
Սիրենք միութիւն
Ու ազատութիւն.
Սիրենք Հայութիւն,
Սահմանադրութիւն.

Միթէ ողբով կանգնի՞ն, Հայեր,
Մեր բազմազգի աւերակներ.
Արի կենա՛նք, գործե՛նք փութով,
Լո՛յս ծաւալենք ջերմ եռանդով։

Կ՚ուզեն՞ք փրկութիւն, ևն։

Թող մեր աչեր հուր արձակեն,
Ու մեր լանջեր թընթան, տրոփեն,
Երակաց մէջ, փոխան արեան,
Հայրենասէր բոցք ընթանան.

Կ՚ուզե՞նք փրկութիւն, ևն։

Անցա՛ն, անցա՛ն սուգի դարեր,
Սէր, յոյս ու լոյս խայտան յեթեր.
Օ՛ն, շարժեցէ՛ք, ճակա՛տք արի,
Զարթի՛ք, առի՛ւծք Հայաստանի։

Կ՚ուզե նք փրկութիւն, ևն։

Մ. Զ.

Generated on 2016-06-21 13:14 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY

ՀԱՑՐԵՆԱՍԷՐ ԶԻՆՈՒՈՐԻ ՄԸ ԵՌԱՆԴԸ

ԶԻՆՈՒՈՐԸ

Ահա մարտին փողը հնչէ,
Զիս պատերազմ կ'հրաւիրէ.
Երթամ նետուիմ բոցերու մէջ,
Զի իմ փառքս միայն այս է։

Կեանքս ու արիւնըս անձկայրեաց,
Զոհեմ, թափեմ վասն հայրենեաց.
Զարնեմ, ջարդեմ վատ թշնամին,
Թող մարմինս բերուի մեռած։

ԿԻՆԸ

Օ՛ն ընդ յառաջ երթ անվեհեր,
Տուր թշնամւոյն վէրս կարևեր։

ԶԻՆՈՒՈՐԸ

Թշնամին մեկ կը մօտենայ
Քաջ արանցս դէմ կ' յոխորտայ.
Վայրագ գազանն արիւնարբու,
Մեր հայրենեաց մահ կ'սպառնայ։
Օ՛ն ընդ յառաջ դիմենք անխռով,
Ցրուենք վանենք սուիններով.
Ռումբ և կայծակ տեղանք գլխուն,
Փախչի իսպառ վատն ամօթով։

ԿԻՆԸ

Գնա՛ քաջդ իմ վեհ անվրդով,
Վատ թշնամին վանէ փութով։

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-21 13:14 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ԶԻՆՈՒՈՐԸ

Զինուոր եմք մեք երկիւղ չունիմք.
Վասն հայրենեաց միշտ կ' զոհուինք.
Արիւն և կեանք չենք խնայեր,
Ազատութեան համար կ' մեռնիմք։
Հուր կը ցայտէ մեր աչքերէն,
Արիւն հոսի մեր սրտերէն.
Երբ սուր չողայ մեր ձեռքին մէջ,
Կը սարսին անոր չողչողումէն։

ԿԻՆԸ

Հայրենիք է մեր պահապան,
Ազատութեան անխոց վահան։

ԶԻՆՈՒՈՐԸ

Մեք հայրենեաց նահատակ եմք,
Թշնամւոյ դէմ կը խիզախեմք.
Պատերազմի երբ փողն հնչէ,
Սուր 'ի ձեռին հոն կ' վազեմք։
Վ՛այ անոր որ կ' խրոխտայ,
Ազատ քաջաց կուրծք կը բանայ.
Շանթաձիգ մեր գնտակներէն,
Կ' սատկի չան պէս անխնայ։

ԿԻՆԸ

Վ՛այ վատին այն որ իբր երէ,
Առիւծ քաջաց դէմ խիզախէ։

ԶԻՆՈՒՈՐԸ

Մնացիր բարեաւ, քաղցրիկ սէրդ իմ,
Ձիս կը կոչէ հայրենիք իմ,

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-21 13:15 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Պատերազմի դաշտին վրայ·
Ցիշէ գիս միշտ թէ իսկ մեռնիմ։
Ազատութիւն է մեր դրօշը,
Հայրենիք է մեր կրօնքը·
Մեռնիմք ղոհուիմք ամենքնիս ալ,
Թող փրկուի մեր վեհ Ազգը։

Ի ՄԻԱՍԻՆ

Հապ օն յառաջ ի գէն ի վրէժ,
Հայրենիք մեր կեցցէ յաւէրժ։

Թ. ՆԱԼԵԱՆ

ՊԱՐԵՐԳ

Ո՛Հ ի՛նչ անուշ ի՛նչ գեղեցիկ,
Մեր այրենեաց զեփիւռիկ·
Շնչէ զուարթ մեր սրտերուն,
Տալով աչխոյժ զօրութիւն։

Առ ինքն կոչէ զմեզ Հայեր,
Գգուելյիւր ծոց ծնելասէր·
Պար խմբելով երթանք լեռ ձոր,
Համբոյր սիրոյ տալ մեր մօր։

Հոն պարզ վճիտ և գեղեցիկ,
Մեր Հայրենեացը աստղիկ
Հորիզոնէն արդ բարձրացած,
Կուտայ հայոցս յոյս փառաց։

Անոր ուղղենք արդ մեր աչեր,
Անոր վառուինք, ո՛վ Հայեր·
Պար խմբելով երթանք լեռ ձոր,
Համբոյր սիրոյ տալ մեր մօր։

Ս. Պ. Պ. ՓԱՓԱԶԵԱՆ

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-21 13:15 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ԽՐԱԽՈՑՍ

Ի ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԻՒՆ

Ժամ է, Հայե՛ր, արիք ձեր բաղդն ողջունել,
Լուսոյ դարուն վերածնութեան դրօշու տակ.
Հայրենիք ձեր հրաւէր կարդայ գալ խմբել,
Ուր ապագան ձեր գրուա՛ծ կայ փառունակ։

Բաց են ասպարէզք ազատ քայլերու,
Եւ երկինք լցող ըզգաստ ուխտերու.
Մի ապա ճարակ մատնէք կոյր մրրցմանց,
Քիրտն, արտասուք և տենչ ձեր Հայ դիւցազանց։

Ցառա՛ջ, յառա՛ջ,
Մեծ է ձեր կոչում.
Քաջի ծնունդ քաջեր,
Մասեաց սարերէն։
Ալեւոր դարեր,
Լուռ ձեզ կը դիտեն.
Քայլերու շարժում,
Ցառա՛ջ, յառ՛աջ։

Մայր ձեր սիրուն, մայր դարերու Հայաստան,
Ձեր է կարօտ, ձեր ժիր 'ւ ազատ ջանքերու.
Անոր լուսոյն խամրած դարաստ միաբան,
Ելէք պըճնել, Հա՛յեր, ժամ է քրտնելու։

Ձեր ճակտին ցօղով ջինջ պիտի ցոլան,
Սիւն, կոթող փոչոտ լուսոյ Հայութեան.
Բա՛ւ է ձեր զոհեր, բա՛ւ ալ միացէք,
Դար նոր ձեզ բանան Աստուած և օրէնք։

Generated on 2016-06-21 13:15 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY

Ցառա՛ջ, յառա՛ջ,
Մեծ է ձեր կոչումը.
Քաջի ծնունդ քաջեր,
Մասեաց սարերէն։
Ալեւոր դարեր,
Լուռ ձեզ կը դիտեն.
Քայլերու շարժում,
Ցառա՛ջ, յառ՛աջ։

ՄԱՐՇ

Մնացեր բարեա՛ւ սէր իմ սէր,
Հրաւէր մարտին որոտաց.
Թէ չեմ քաջաց ես ընկեր,
Զըկայ բաժին ինձ փառաց։

Մ'ի լար հոգւոյս իմ հատոր,
Գուցէ դառնամ ոհ մի' լար.
Թ'անկայց մարտին ես ի գոռ,
Տեսցուք յերկինս մեք զիրեար։

Եղբայրադաւ չէ նախանձ,
Որ բորբոքեալ յիս վառի.
Ի սուրբ հողոյ Հայկազանց,
Բառնամ զ լուծ օտարի։

Մ. ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ



Generated on 2016-06-21 13:15 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY

Ի ՍԳԱԼԻ ՄԱՀ
ԶԷՑԹՈՒՆՑԻ
ՊԱՏԱՆԻՈՑ

ԵՐԳ

Դու զո՞վ խնդրես մայր իմ անուշ,
Ե՛կ, մի՛ դողար, մօտեցիր հոս.
Անլաց աչօք դիտէ զորդիդ,
Ու իւր վէրքերն արիւնահոս։

Թըրքաց մայրերն թող լան, ու դուն
Ուրախ լուրեր տար ի Զէյթուն։

Ի՛նչպէս երբեմն օրրանիս մէջ,
Կակուղ ձեռամբ փայփայելով.
Մանկիկ մարմնոյս հանգիստ տայիր,
Իբրև հրեշտակ նուագելով։

Զիս հանգչեցուր ի հող, ու դուն
Ուրախ լուրեր տար ի Զէյթուն։

«Նորեկ որդւոյս կենաց արեւ,
Զեզի համար փայլի, Հայե՛ր.»
Այսպէս յայնժամ դու երգէիր,
Օրօրոցիս նստեալ քովեր։

Անոնց համար չիջաւ, և դուն
Ուրախ լուրեր տար ի Զէյթունն։

Կարմիր կայլակք ցայտեն վէրքէս,
Սակայն, մա՛յր իմ, նայէ՛ չ՚որս դիս.

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-21 13:15 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Զարիւնրռուչտ Ֆիւրտերն տե՛ս,
Հազարներով փռուած գետին։

Կերաւ զանոնք սուր մեր, ու դուն
Ուրախ լուրեր տար ի Զէյթուն։

Ինչպէս վիշապ մրոնչելով,
Ցանկարծ մեր վրայ յարձակեցան.
Ցնցեց Զէյթուն գլուխն ժայռոտ,
Իւր վհից մէջ թօթափեցան։

Կարմիր ներկաւ քորք մեր, ու դուն
Ուրախ լուրեր տար ի Զէյթուն։

Ու ծափ զարկին մեր հարց ըստուերք,
Զի չէ մեռած Հայոցս կրակ.
Ու ցնծացին այնչափ զոհեր,
Զի լուծաւ վրէժ յարեան վտակ։

Խնդաց Մասիս, մայր իմ, և դո՛ւն
Ուրախ լուրեր տար ի Զէյթուն։

Վերջին համբոյր տամ քեզ, մայրի՛կ,
Հատուցանես զայն սիրուհւոյս.
Վերջին անգամ դրկեմ մեր հող,
Որ արդ կիջնեմ ի ծոցն անլոյս։

Խաչ մի տնկէ վրրաս, ու դ՛ուն
Ուրախ լուրեր տար ի Զէյթուն։

Մ. ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-21 13:16 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ԹԱՂՈՒՄՆ

ԶԷՑԹՈՒՆՑԻ ՊԱՏԱՆԻՈՑՆ

ՊԱՐ ԶԷՑԹՈՒՆՑԻՈՑ

Ոչ փող զարկինք ոչ արձագանք լեռնասոյզ,
Սարէ ի սար չարաշըչուկ տարին լուր.
Ու չերգեցինք ողբոց երգեր սրտասոյզ,
Երբ պատանուոյն բացինք մըռայլ փոսին դուռ։

Գիշերական մունչ ըստուերներ շուրջ կային,
Երբոր սըրով բըրով զհող փորեցինք.
Լուսին միայն դողդող շողար մեր գլխին,
Սուգ էր պատեր ըզդաշտ բըլուր և երկինք։

Պէտք չէր դագաղ, և ոչ ճերմակ պատանքներ,
Որով գոցուէր ազատորդի Զէյթունցին.
Նա յե՛տ մարտին կարծես հոգնած կու հանգչէր,
Ու վերարկուն կարմիր, բաւ էր իւր անձին։

Անձայն ու կարճ ննջեցելոց մի զրուցեց,
Մեր քաջ Տէրտէրն, զինուոր Հայոց 'ւ Աստուծոյ.
Գովեց զմահն և զքաջութիւն իւր օրհնեց,
Թոյլ չի տուաւ հառաչ մ'ու ճիկ հանելոյ։

Բայց երբ գըլուխն 'ի բարձ դըրինք հողաշէն,
Տեսանք զգեղ ճակտին ու վէրքըն պայծառ.
Ո՛վ պատանեակ ըսինք ամենքս մէկ բերնէն,
Վասն հայրենեաց մեռար, դու շա՞տ ապրեցար։

Գընա՛ զրուցէ Հայկազարմից մեծ ոգւոց,
Որ կան այս տեղ ազատ ու քաջ դեռ Հայեր.

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-21 13:16 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Որոնք իբիւր պատերազմաց թէպէտ խոց,
Մէջ ամպրոպած ի ժայռ կանգուն են կեցեր։

Մէյ մ՚ալ քամի յանկարծ փըչեց ցրտաշունչ,
Լուսնին շողերն եկաւ գոցեց մըթին ամպ.
Ու մեր սարերն զերդ ուրուականք անմըռունչ,
Սեւ գլուխնին տնկած դիտեն ապշութեամբ.

Յայնժամ ցուրտ ցուրտ հողմ լեցուցինք իւր վրան,
Խաչ մի դըրինք, ինչպէս իւր մօր պատուեր էտ.
Ոչ այլ չըգեղ արձանագիր ոչ տապան,
Զինքըն մինակ թողուցինք իւր փառքին հետ։

Մ. ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ

ԵՐԳ ՄԱՀՈՒԱՆ

Ահա մօտեցաւ մահուան ժամերըս,
Ալ չեմ իմանար բոլոր ցաւերս.
Կը զատուիմ քեզմէ սիրուն ծաղիկս,
Բայց դադրում չունին իմ խեղճ աչերս։

Ինչպէս 'տի զատուիմ սաստիկ է սէրս,
Բայց օգուտ չ'ունի Աստուած է Տէրս։

Համբերէ քիչ մը ո՛վ մահ սոսկալի,
Զիս մի մեղքանար սիրտն իմ ցաւալի.
Համբերէ քիչ մը որ սէրըս առնեմ,
Եւ այնուհետև հանգիստ քուն ընեմ։

Ինչպէս 'տի զատուիմ սաստիկ է սէրս.
Բայց օգուտ չունի Աստուած է Տէրս։

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-22 09:51 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Երբ կը մտածեմ, մէկ երկու ժամէն
Հողեր ու որդեր զիս պիտի ծածկեն.
Ամէն կողմերս ծակեն ծակծկեն,
Իմ մատղաշ մարմինս մատաղ 'տի անեն։

Ինչպէս 'տի զատուիմ սաստիկ է սէրս,
Բայց օգուտ չունի Աստուած է Տէրս։

Ցուրտ գ'երեզմանին երբոր մօտենաս,
Չ'ըլլայ որ երբէք սառսուռ մը զգաս.
Քաղցր ժպիտով մը երբ անունս տաս,
Անշուշտ այն ատեն զիս պիտի խղճաս։

Կը զատուիմ քեզնէ սիրուն ծաղիկս,
Բայց դադրում չունի իմ խեղճ աչերս։

Վ Ր Է Ժ

Եկէք, Հաերյ, ուխտ ընեմք հոս միութեամբ,
Զուխ Կէտուկի կիրճերն երթալ քաջութեամբ.
Լուծել վրէժ սուրբ Հերոսաց մեր ազգին,
Ջարդել Թուրքերն՝ մեր ոխերիմ թշնամին։

Ելէ'ք, բաւ է, Հայե՛ր, դառնանք Հայրենիք
Կռուինք Թրքի դէմ իբրև մարդ, և մեռնինք.
Սուրբ նահատակ ըլլանք որպէս մեր Հայրեր
Ազատելով մեր անպաշտպան եղբայրներ։

Օն', քաջ Հայեր, սուր ի ձեռին շուտ ընդ փոյթ,
Դէպ Զուխ Կէտուկ երթանք, ստոր և անգութ
Տկար Թուրքն ջախջախելով, հոն իյնող
Մեր նոր քաջաց կանգնել արձան մեծ կոթող։

Ա. Ս. ՍԱՍՈՒՆ

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-22 10:03 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ԵՐԳ

ԻԶՈՐՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐՁ

ԱԶԳԱՑԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ

1864 ՄԱՅԻՍ 24

Հրճուին երկինք, խայտայ երկիր անթերի,
Եւ Հայկազանցս դէմք կը ժպտին գեղանի.
Զի Տարեդարձ մեր փրկութեան նոր հասեր,
Դարձեալ հանգոյն Արուսեկին լուսաբեր։

Զոր նորոգուին մեր սրտեր,
Կրկին ի յոյս և ի սէր։

Ազգասիրաց վսեմ ճակտին քրտնաթոր,
Այսօր Մասեաց հրեշտակն յաշխոյժս նորանոր.
Քառեակ պսակ մ'ալ գայ հիւսել ծաղկափայլ,
Զոր եթերին կազմեն մասունք բարեփառ։

Զոր խրախուսին մեր սրտեր,
Կրկին հոգի անվեհեր։

Զայն հինաւուրց Քինախնդրին ալ ընդ հա՛տ.
Հնչեն փոխան բարբառքն Հայկեան ներնդհատ.
Օրէնք արդար և Միութի՛ւն երջանիկ,
Զոր «մայր բարեաց՝» գրեն անչուշտ անջինջ գիրք։

Զոր կը ցնծան մեր սրտեր,
Կրկին ի խինդ անեպեր։

Հա՛պ օ՛ն որդիք Հայկեան յայս պերճ ասպարէզ,
Եկէք տօնել սերկեանս չքեղ մեծ հանդէս.
Նուիրական ըլլայ մեզ օրս յարաժամ,
Ուր միութեան ճանչցանք ոգին 'ւ Ազգութեան։

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-22 10:03 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Եւ յոր լցան մեր սրտեր,
Կրկին ի լոյս անմտուեր։

Թող հնչէ ազատ,
Մ'ուտ վեհն Այրարատ.
Ընդ նմին երգեն,
Դաշտ, լերինք ամեն.
Թէ բաղդն Հայերուն,
Դեռ ողջ է անքուն.
Եւ մեք անդադար,
Զարնենք Հայկեան քնար.
Որչափ ապրի Հայն,
Կեցցէ՛ Միութիւն.
Ու փառքն աննման,
Սահմանադրութի՛ւն։

ԽՕՍՔ
ՍԱՀԱԿ Ա. ԽԱՆՃԵԱՆԻ

ԵՂԱՆԱԿ
ԲԱՐԹՈՂ Մ. ԹԱԹԱՐԵԱՆԻ

ՎԱՆԵՑԻՈՑ ԱՂՕԹՔՆ

Տէ՛ր, ողորմե՛ա Հայոց ազգին,
Տուր զօրութիւն մեր թոյլ բազկին,
Հալածէ՛ դու անգութ Տաճկին.
Տէր ողորմե՛ա, Տէր ողորմե՛ա։

Շնորհե՛ա մեզ մէկ քաջ զօրավար,
Ժողուել Հային համագումար,
Մարտնչեցնել կրօնի համար.
Տէր ողորմե՛ա, Տէր ողորմե՛ա։

Թո՛ղ դադրի՝ մեր գերութիւնը,
Ցառնէ Հայի ազգութիւնը,

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-22 10:03 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Վերջանայ մեր հեգ·ութիւնը,
Տէր ողորմե՛ա, Տէր ողորմե՛ա։

Ցիշե՛ա զմեզ, Տէր, այս անգամը,
Ունայն չանցնի պատեհ ժամը,
Հայքս ալ ազգաց լանք անդամը.
Տէ՛ր ողորմե՛ա, Տէր ողորմե՛ա։

Տէ՛ր, թէ այժմ ալ չես ողորմիլ,
Ա՛լ հայիս մէկ բան չի օգնիլ,
Մեզ կը մնայ ջուրը ընկնիլ.
Տէր ողորմե՛ա, Տէր ողորմե՛ա։

Ապա՝ թըշուառ եղբայր Հայեր,
Ձեռքերս առնունք մէմէկ սուսեր,
Դրօշակ բանանք, փըշենք փողեր,
Տէրըն խըղճաց ի վերայ մեր։

ԳԱՄԱՌ—ՔԱԹԻՊԱ

ԵՐԳ ՄԱՐՏԻ

Քաղցր հայրենեաց ազատութեանը համար,
Եւ լուսասփիւռ սուրբ հաւատոյս վեհափառ,

Այս երկու վեհ առթիւս ահա
Թէ ինձ մեռնիլ արժան չըլլայ,
Կեանքն ինձ ալ ի՞նչ կը ծառայէ
Երբ գերութիւնըն յիս տեւէ։

Ո՛վ սուսերդ իմ վաղակաւոր սայրասուր,
Եւ դու հրացանդ որ կը ժայթքես բոց և հուր,

Դուք թըշնամին խորտակեցէ՛ք
Եւ գրըռնաւորն նուաճեցէ՛ք.

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-22 10:03 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Կեցջի՛ք միշտ իմ հրացան սուսեր,
Ձեօք Հայրենեացս կանգնին աւեր։

Ո՛վ սուսերդ իմ երբ տեսնեմ քեզ շողշողաս,
Եւ դու հրացանդ իմ սեւադէմ՝ որոտաս,

Վատ թշնամւոյն իրանն փըռուի,
«Աւա՜ղ» կանչէ՝ 'ւ այնպէս մեռնի.
Ապրին միշտ մեր հէք Հայրենիք,
Կեցցեն միշտ մեր վեհ Հայրենիք։

(Թարգմ. ի Ցուն.) Մ. Ց. ՏԱՄԱՏԵԱՆ

Ց Ա Ղ Թ Ա Ն Ա Կ

ԱԶԱՏՈՒԹԵԱՆ

Մինչդեռ գիշերոյ խաղաղ թագուհին,
Ցարծաթեայ կառացն ժպտէր զուարթագին.
Ի բարձանց երկնից սիրոյ հրեշտակներ,
Մեզ կը սփռէին դափնեայ պսակներ։

Բանդուռնքն երգէին զվեհն ազատութիւն,
Որ մեզի բերէր փրկութեան ողջոյն.
Պճնէին ծաղկամբք դամբանքն լըռին,
Ո՛ւր Հայ դիւցազանց ոսկերքն հանգչին։

Երկինքէն ժպտին պըսպըղուն աստղեր,
Երբ կը ծածանին Հայոց դրօշակներ.
Ազատ Մասիսի լերանց ծայրերէն,
Հայրենահրաւէր ձայներ կը հնչեն։

Դժոխոց դռներըն խորտակելով,
Վարդան և Մեսրովպ ի վեր վազելով.

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-22 10:04 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Կանգնեն յաղթանակ պերճ Ազատութեան,
Վերանորոգեն փառքեր Հայութեան։

Ո՜հ, ինչպէս հրճուին Հայոց զաւակներ,
Մինչդեռ կը տեսնեն նախնեաց հին փառքեր.
Լուռ կրնա՞ մնալ մեր սիրուն քնար,
Մինչդեռ աստղն Հայկայ շողայ լուսավառ։

Ա. Ց. ԱՑՎԱՋԵԱՆ

ԵՐԳ

Հեռու եմ քեզմէ՝ օտար երկրի մէջ
Եղած եմ պանդուխտ, սիրուն Հայրենիք.
Ի լեռ և ի դաշտ կ'ընեմ ել և էջ,
Քեզ չեմ մոռնար ես, սիրուն Հայրենիք։

Ճարտար գրիչ մը չեմ Մելտոնի պէս,
Որ դրախի մը նմանցնեմ քեզ.
Ոչ ալ Եիոնկի պէս ճարտարարուեստ եմ,
Որ գովաբանեմ սիրուն Հայրենիք։

Տէլէմաքայ պէս քաշեմ արկածներ,
Կը պատահին ինձ ճախորդ դիպուածներ.
Քեզ մոռնա՞լու եմ, երբէք չեմ կարծեր,
Մնած եմ քո մէջ, սիրուն Հայրենիք։

Կ'երևակայեմ մտքիս մէջ միշտ քեզ,
Զէթէ ցորեկներ այլ գիշերն ի բուն,
Երբ մտաբերեմ կամ ըլլամ ի քուն.
Երազներս ես դու, սիրուն Հայրենիք։

Դաշտերդ ծաղիկով, լեռներդ շուշանով,
Լեցուն ես միշտ դու անուշ հոտերով.

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-22 10:04 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Թէ որ ես հասնիմ խառն հոտերուդ,
Կը հոտուըտամ քեզ, սիրուն Հայրենիք։

Երբ կուգայ գարուն՝ կը բացուին վարդեր,
Խմբակ կը կազմեն երիտասարդներ.
Գար առեալ ցնծան քո օրիորդներ,
Երգելով բերկրիմ, սիրուն Հայրենիք։

Որպէս պատգամին Մովսէսին Սինայ,
Ի քեզ յայտնեցաւ տառն Մեսրոպայ,
Ի պարծանս տան Արամայ, Հայկայ.
Գարծանք ես Հայոց, սիրուն Հայրենիք։

Զարդարուած պարտէզդ բարի միրգերով,
Առ ափն Եփրատայ պատուական դիրքով.
Քեզ գովաբանել կուզեմ նոր երգով,
Քարբերդ քաղաքն իմ, սիրուն Հայրենիք։

* * *

ԱՌ ՀԱՑՐԵՆԱՆՈՒԷՐՆ

ԽՐԻՄԵԱՆ ՊԱՏՐԻԱՐՔԿ. ՊՕԼՍՈՅ

ՈՂՋՈՅՆ

Թէ ի հրացան գրոչ մահաբեր,
Այլք ողջունեն իւրեանց տէրեր.
Կամ ի գոռիւն թնդանօթաց,
Ահեղ ողջոյն տան իշխանաց.
Մենք մեր սրտից ի բաբախին,
Խոնարհ այլ ջերմ տամք քեզ ողջոյն.
Եւ թէ չունիմք դրոշ արեան,
Զեզ ձիթենիք ու մեր նշան։

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-22 10:04 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Օ՛ն, Հայրիկին ընդ յառաջ,
Երթամք, Հայ՛եր, քաջալանջ.
Հերիք կոհակք անջատեն,
Զափրն որդւոց հօր լաստէն.
Պատռեմք Վոսփորն քաղցր ի ձայն,
«Ողջ՛ոյն քեզ, ո՛ Խրիմեան»։

Հրեշտակդ յուսոյ, թըռի՛ր առ մեզ,
Շա՛տ թառեցար, բո՛ւ սրտակէզ,
Համր ի նոճիս աւերակաց. . .
Թէ բարեկամ ես ամայեաց.
Մեր սիրտք ալեն աւեր, թափուր,
Լի՛ց դու զա՛ւոնք՝ ոգւոյդ ի հո՛ւր. . . .
Բոցովդ աչաց՝ սառն հրդեհես,
Անըզգայից սիրտն ե՛կ, վառես. . . ։

Օ՛ն, Հայրիկին, ընդ առաջ,
Դիմեմք, Հայեր, քաջալանջ.
Հերի՛ք կոհակք անջատեն,
Զափրն որդւոց հօր լաստէն. . .
Պատռեմք Վոսփորն քաղցր ի ձայն,
«Ողջ՛ոյն քեզ, ո՛ Խրիմեան»։

Քաղցր Աստուծոյ մ՚անուշ պատգամ,
Դո՛ւ, խաչակիր խաղաղութեան.
Շանթից փոխան՝ մեղր հոսէ մեզ,
Հեզութեամբդ, ո՛հ, բարձրաց՛ո զմեզ . . .
Եւ մութի մէջ, Հայաստանցին,
Թէ կորնչի հեծեծագին.
Հասցուր անոր՝ ջահ լուսաւոր,
Զե՞ս մի լուսոյ դու վեհ գինուոր . . . ։

Օ՛ն, Հայրիկին ընդ առաջ,
Վազենք, Հայեր, քաջալանջ.

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-22 10:04 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Հերիք կոհակք անջատեն,
Զափրն որդւոց հօր լաստէն . . .
Պատռեմք Վոսփորն քաղցր ի ձայն,
«Ողջոյն քեզ, ո՛ Խրիմեան»։

Բաղդն այս անգամ բանայ զաչեր,
Մրթին արժէքն հանէ ի վեր . . .
Եւ թէ թաւշէ տայ քեզ գահոյս,
Լոռուտ զաւէրս ածէ ի յուշ.
Եւ գաւազան թէ տայ ոսկի,
Դու նոյն հովիւն ես պարզ 'ւ արի.
Որ ջաղխեցիր ի ցուպդ անփուտ՝
Գայլս վայրի, և զանարգ Քուրտ . . . ։

Օ՛ն, Հայրիկին ընդ առաջ,
Թռչիմք, Հայե՛ր, քաջալանջ.
Հերի՛ք կոհակք անջատեն,
Զափրն որդւոց հօր լաստէն . . .
Պատռեմք Վոսփորն քաղցր ի ձայն,
«Ողջոյն քեզ, ո՛ Խրիմեան»։

Մարդ, որ հզօր է ի պատժել,
Զի՞ անզօր է ի վարձատրել . . .
Երկու տերեւք, մինչ մեծ արք կեան,
Քար մ'երբ մեռնին, — ա՛յս իր վարձան.
Այլ լոկ այս չէ, Հայրի՛կ, քո վարձ,
Դէմ սլաքաց, վատ նախանձուն,
Դէմ գընդակաց, կոյր խաւարի,
Մեր սիրտ ասպար քեզ կանգնեսցի . . .

Օ՛ն, Հայրիկին մեք առաջ,
Սփռեմք մեր վիշտ, իղձ, հառաչ.

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-22 10:04 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Մեր երակաց գտիէ թինդ,
Ճանչէ սրտից խոց ու խինդ . . .
Պատռեմք Վոսփորն քաղցր ի ձայն,
«Ողջոյն քեզ, ո՛ Խըրիմեան»։

ՄԻՆԱՍ — ՉԵՐԱԶ

ԵՐԳ

Լըռեց՝ Ամպերը եկան ծածկեցին
Երկինքն, ու Լուսինն աչքէս խըլեցին.
Մընացի մենակ՝ հոգիս վըրդոված,
Ձեռներըս ծոցիս, գլուխս քարչ արած։
Եւ այնուհետև ամեն իրիկուն
Մընում եմ լուսնի խաղաղ ծագելուն.
Նորա տըխրամած դէմքը նայելիս՝
Ցիչում եմ Թշուառ վիճակը ազգիս։
Ա՛խ, ցոլ՛ա, փայլէ՛ տխրադէմ Լուսին,
Գուցէ՛ քու փայլից փայլ տաս և Հային,
Պատմէ՛ չատերուն Վարդանի մահը,
Կամ ինչպէս կորաւ Հայ ազգի գահը,
Կամ ինչ վեհ սիրով սիրում էր Վարդան
Մայրենի հողը — աշխարհն Հայաստան։

ԱՑԾԵԱՄԻՆ ԵՐԳԸ

Անհոգ ես չես գիտեր ինչ կայ քո մասին,
Պըտտում են քո խեղճ անձիդ ՇՈՒՐՋ ասին.
Գամբռներով բանակներով միասին,

Փախի՛ր, այծեամ, փախիր որսկանն է գալիս,
Զագուկներդ տխուր լալիս են լալիս։

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-22 10:04 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Որսկանը ճրագով քեզի ման կուգայ,
Կուգէ ձեռները քո արեամբ լուայ,
Ինդալի քո տեղուկ սար ու ձոր կուլայ։

Փախի՛ր, այծեամ, փախիր որսկան է գալիս,
Զագուկներդ տխուր լալիս են լալիս։

Որսկանը գութ չունի, կանէ կրակը,
Կամ քեզի կսպանէ կամ քո զաւակը.
Զուր չի անցնիլ հրացանի գնտակը.

Փախի՛ր, այծեամ, փախիր որսկանն է գալիս,
Զագուկներդ տխուր լալիս են լալիս։

Զորերը մի մտներ վտանգաւոր է,
Որսկանը ման կուգայ այն տեղ, սովոր է.
Քարայրից խփելով քեզ կը գլորէ.

Փախի՛ր, այծեամ, փախիր, որսկանն է գալիս,
Զագուկներդ տխուր լալիս են լալիս։

Դաշտումը չես ման գալ՝ թէ մտածես լաւ,
Քեզ կը վիրաւորեն, կստանաս մեծ ցաւ.
Դուրս մի ելլեր խիտ անտառից դու բնաւ.

Փախի՛ր, այծեամ, փախիր որսկանն է գալիս,
Զագուկներդ տխուր լալիս են լալիս։

ԱՇԼՂ—ՃԻՎԱՆ

ՀՐԱԺԵՇՏ

ՔԱՋԱՍԻՐՏ ԶԻՆՈՒՈՐԻՆ

Մեր հայրենեաց փափուկ հողեր,
Արեան գետակ են դարձուցեր.
Եւ այն դաշտերն ազատութեան,
Թշնամեաց սուր կը շողշողան։

Generated on 2016-06-22 10:05 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY

Բռնաւորին սեւ թեւոց տակ,
Քանի՛ դարեր հեծենք թշուա՛ռք.
Արիւն արցունք գիշերն ամեն,
Հերիք իջան մեր աչքերէն։

Քաշած աղէտքս ալ կը բաւեն,
Վրէժխնդրութեան հրաւէրք հնչեն.
Ալ չեմ կրնար շղթայից տակ,
Գերի տեսնալ իմ քորքն, եղբարք։

Այսօր ինծի թ՛ող օր մ՚ըլլայ,
Յաղթանակի և կամ մահուան.
Գերի մնալէն քաղցր է ինձ, ո՛հ,
Հանգչիլ փառօք նախնեացս ի հող։

Չի ո՞րն արդեօք իմ հայրերէն,
Հանգիստ մահուամբ լուռ ննջած են.
Այլ պատերազմ և յաղթանակ,
Միշտ թողուցին մեզ յիշատակ։

Օ՛ն, խաչանիշ դրօշով փութամ,
Հայրենավրէժ ի պատերազմ.
Վատ ազգերուն գահն կործանեմ,
Եւ յաղթական նուագս երգեմ։

Չի խրախուսեն իմ Հարց ստուերք,
Ազգիս շղթայք ալ խորտակել.
Իմ Հայրենեաց քաղցր ապագան,
Սրտիս կուտայ ոյժ քաջութեան։

Այո, հոն տեղ մահն ինձ քաղցր է
Ազատութեան երբ փողն հնչէ.
Հոն զոհուեցան շատ մեծ քաջեր,
Պարզել յեթերս ազատ դրօշներ։

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-22 10:05 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Հոն թշնամւոյն արիւններով,
Դիակաց վրայ անջինջ գրրով.
Իմ հայրենի փառքն դրոշմեմ
Եւ իմ ճակատ անոնց ցուցնեմ։

Բայց Աստուծմէ այս կը խնդրեմ,
Որ օր մ'ուրախ սրտով տեսնեմ.
Ազատութեան յաղթանակով,
Վերադարձն իմ՝ սուրբ հարցս քով։

* * *

ԽՐԱԽՈՑՍ Ի ՄԻՈՒԹԻՒՆ

Դեռ նոր Հայրենիք, դեռ նոր ազգութիւն,
Դարուս չնորհիւ պարտ և իրաւունք.
Սահման և կշիռ թոթովել գիտցանք,
Ո՛վ Հայաստանի պանդուխտ զաւակունքս։

Կրնա՞նք արդ զոհել, կրնա՞նք ամէն բան,
Անձնական կրից մատնել անխնայ.
Եւ Օտարին շահն Հզգին ՁՆասող,
Ո՞վ կրնայ խնդրել, ո՞ր այն եղեռն Հայ։

Զգոյշ, ո՛վ Հայեր, զգոյշ կենանք միշտ,
Քանզի ազգադաւ սլանան նետեր.
Մեր խոցուած սրտերն կրկին խոցելու,
Պահենք զայն ամուր սիրոյ վահանաւ։

Միութիւնն ըլլայ գրահ անվտանգ,
Եւ անհամաձայն թէ գտնուինք մեր մէջ
Այլոց միջամուտ ներենք ոչ երբէք,
Ազատ ու հաւասար, ամէնքս ալ եղբայր։

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-22 10:05 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Հեռատես, զգոյշ և գործօն անդուլ,
Ազգային կամաց հպատակ անխոս.
Այսպէս կրթուի Հայ մանկութիւնը,
Այսպէս պատրաստուի պատանեկութիւնն։

Ու երիտասարդութիւնն ըլլայ աննըկուն,
Անտէր ախոյեան Ազգին իրաւանց.
Ու թող ծերութիւնն հսկէ լրջամիտ,
Հայոց բաղդն ու Արև յուսով ողջունել։

Ս. Պ. Պ. ՓԱՓԱԶԵԱՆ

ՊԱՆԴՈՒԽՏՆ ԱՌ ԼՈՒՍԻՆ

Նուաղեալ կենաց իբրև յոյս,
Մութ և տխուր ես, ո՛ կոյս.
Ել ել լուսին, ո՛հ և դուն,
Սիրտ մի ունիս զգայուն.
Ազգ մի թշուառ Հայրենիք,
Որ քօղ առեր ես զամպիկ։

Բնութիւն գեղոյդ երաժիշտ,
Քեզ աստեղաց հոյլք նաժիշտ.
Ի՛անհուն սիրուն ժըպիտ մի,
Կարգեց դշխոյ գքեզ երկնի.
Ցօղէ նշոյլդ տխրանոյշ,
Պանդուխտ հոգւոյս ցաւոց բոյժ։

Ո՛հ, փշրեցան սիրտս ու քնար,
Ես ալ քեզի պէս զաշխարհ.
Պանդուխտ քայլով չափեցի,
Մաղկունք ծըլին սոսկ քեզի.

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-22 10:05 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Ձեկաւ գեփիւռ մ'անուշիկ,
Շոհել իմ դէմքս յուսալիք։

Հող մ'ունէի Հայրենի,
Դրախտ չքեղ աշխարհի.
Աւերակացն արդ պահպան,
Քիւրտն և անոր հրացանն.
Ցուցուր ժանտից, ո՛ Լուսին,
Զազիր ոսկերք Վասակին։

Ազգ մ'ունէի, այն Հայն էր,
Որ երկրիս վրայ տարուբեր.
Կ'երթար օտար ազգերէն,
Մուրալ լեզու և օրէն.
Լուսին, ցուցուր Դու Հայուն,
Փառքն իւր նախնեաց չիրմերուն։

Սիրտ մ'ունէի, ան կոյսն էր,
Որ իմ հոգիս էր գրաւէր.
Ծաղկէ հասակ ծաղկի դէմք,
Հուր աչքն առին չիրմաց վէմք.
Մեր պանդուխտին ալ, Լուսին,
Դու այցելու եւ չիրմին։

Ս. ՀԷՔԻՄԵԱՆ

ՀԱՑ ՄԵՌՆԻՆՔ

Ոչ եղբարք, ո՛չ, օտարներէն չըկա՛յ յոյս.
Մի՛ աչվրնիդ մի՛ դարձնէք յայս յայն կոյս.
Օտարն ըզձեզ թէև սիրէ հիւրաբար՝
Օտարն՝ ա՛հ, միշտ է օտա՛ր։

Generated on 2016-06-22 10:05 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY

Օտարը ձեր վիշտ կը դիտէ անգորով,
Ի՞նչ փոյթ որ դուք թափէք արցունք արիւնով.
Ով որ Հայ չէ՝ Հայուն ցաւեր նա չը՛զգար,

Ի՞նչ կը խաբվիք անդադա՛ր։

Մի՛ դուք ձեր յոյս մի՛ աւանդէք օտարին,
Մի՛ խոր վէրքերըդ ցուցանէք անգութին,
Արդահատ՞անըս կը յուսայք, օգնութի՞ւն,

Ձեր կը ծաղրե՛ն մերկութիւն։

Գիտեմ ձեր բեռը ծա՛նր է ծա՛նր; ո՛վ Հայեր,
Բայց կը կարծէ՞ք զայն վերցընեն օտարներ.
Թողէ՛ք զօտար, տուէ՛ք եղբայր եղբօր թեւ,

Եւ զօրացէ՛ք անդեղեւ։

Բաղդը դարձեր է ձեզի դէմ թշնամի,
Մի՛ վհատիք, ցուցուցէ՛ք սիրտ Հայեցի.
Չէ կարող բաղդ յաղթել ազգին այն քաջի

Որ բաղդին դէմ մարանչի։

Ձեր հայրերուն՝ ո՛չ շղթայք, ո՛չ սուսերներ
Զըկարացին ընկճել ո՛չ միտք, ո՛չ սրտեր.
Ինչո՞ւ ձեր սիրտ այսօր դողայ տըկար, հէք,

Ի՞նչ, այն քաջաց որդիք չէ՞ք։

Չէ՞ք դուք որդիք այն դիւցազանց աննըման՝
Որ Հայրենեաց ճենճերեցան ի սեղան . . .
Չէ՞ք դուք որդիք այն մեծ Հայոց՝ որոց կեանք

Են մարդկութե՛ան իսկ պարծանք։

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-22 10:06 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Այն վեհ կրօնից և Ազգութեան անունով,
Հայ եղբա՛ր ք ձեռք ձեռքի տուէ՛ք հուր սիրով.
Ատելութիւն, քէն՝ մերժըվի՛ն օ՛ն ի բա՛ց.

Անիծեցէ՛ք զազգատեաց. .

Ամենուդ սիրտ՝ ըզգա՛յ նոյն սէրն Հայրենեաց,
Ամենուդ միտք թըռչի յօդուտ համազգեաց.
Ու ձեր յետին եղ բօր արցունք ու ցաւ՝ միշտ

Ըզգացէ՛ք ձեր իբրեւ վիշտ։

Օտարին հաց մեզի սընունդ չէ՛ բնաւ,
Օտարին ջուր՝ ոչ, չը՛ մարեր մեր ծարաւ.
Մեզի կենաց տըւող և մեր պահապան՝

Է Աւազանն Հայկական

Այն Աւազանն՝ այն Հայութեան կընքատուն,
Ո՛հ չ՚ուրանա՛մք, ե՛ղբարք, յուսովք զաղփաղփուն..
Եւ թէ մեր շունչ պիտի մարի վերջաապէս.

Թո՛ղ մարի յայն սուրբ կրկէս։

Թո՛ղ ամենքս ալ ընդունի նոյն գերեզման,
Վասըն զի՛ նոյն էր ամենուս ալ օրրան...,
Հայ ծնանք մեք, Հա՛յ ապրինք, Հայ և մեռնինք.

Օ՛ն, Հայ մտնենք և յերկի՛նք։

ԽՈՐԷՆ ԵՊԻՍ. ՆԱՐՊԷՑ



Generated on 2016-06-22 10:19 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY

ԵՐԳ ՀԱՑ ԱՂՋԿԱՆ

Ո՞վ ես որ գաս առանձին,
Ձեռքըդ կուրծքիդ խաչապէս,
Ծունր դրած ի գետին՝
Լռիկ առ ո՞ բողոքես։

Ամբիծ ճակատդ է կնճռոտ,
Ցօնքերդ ի ծուփ ալէկոծ.
Կոյս սիրտդ ինչի՞ է կարօտ,
Որ հրաշունչ հանէ բոց.

Երթալ կուզես կըյուզիս,
Արդեօք սիրո՞վը մարդու.
Կամ սուրբ սիրովն կրօնի,
Որ Աստուածն է սրտերու։

Ես Հայ աղջիկ եմ գինուոր,
Տղմուտի մէջ մկրտուած.
Պատմուճաններս են բոսոր,
Ձէնքս խաչն է յաղթապանծ.

Ձինուոր կերթամ Հայաստան,
Օրօրոցիս օրօրով.
Ձինուոր կ'երթամ Հայաստան,
Իմ հայրենեաց կարօտով,
Ազատութեան կարօտով։

ԱՂԱՒՆԻ ՖԷԼԷԿԵԱՆ.

ԵՐԳ

Հայը բանտէն չի վախնար,
Հայը մահէն չի վախնար.
Միշտ կուզէ պատերազմիլ,
Հայկական հողին համար։

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-22 10:19 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Գացէ՛ք, ըսէ՛ք վատ Թուրքին,
Թող հեռանայ մեր հողէն.
Հայը վարժութիւն ունի,
Պատերազմը մօտեցաւ։

Հինգ հարիւր տարուան մեռեալն
Այսօր ոտքի կանգնեցաւ.
Գացէ՛ք, ըսէ՛ք վատ Թրքին,
Դատաստանը վերջացաւ։

Երիք այսչափ տառապանք,
Հերիք այսչափ գերութիւն.
Փչրենք մեր չղթաները,
Շուտով երթանք Հայաստան։

Արարատ դաշտին վրայ,
Հայու քաջ խումբ պատրաստենք.
Ձէնք, սուր ձեռքերնիս առած,
Կռուինք վասն Հայրենեաց։

Արի՛ք, Հայկազեան քաջեր,
Առէ՛ք ձեզ հետ ձեր սուրեր.
Շուտով վազեցէ՛ք Կարին,
Որ յաղթենք վատ Թուրք ցեղին։

Արիւնածարաւ Հայեր,
Ջնջեցէ՛ք Կարնոյ զօրքեր.
Հայուն վերջին ժամըն է,
Պէտք չէ՛ Թուրքին խնայել։

Ո՜հ, Հայն ալ ազատուած է,
Քանզի առիւծ կտրած է.
Պէտք է որ ջնջենք Թուրքեր,
Վերականգնենք մեր Հայեր։

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-22 10:20 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Ի ՇԱԻԱՐՇԱԿԱՆ ԴԱՇՏԻՆ

ՎՐԷԺԲ

Բա՛մբ ... որոտան բարձուստ բոմբիւնք,
յՍյրարատեան դաշտն ի վայր,
Արի արանց արիւնքն յեռանդն առատանան ի հը-
բաղայր,

Հրաւէր հայրենեաց հռչակին 'Ներհանուր,
Հոգիք Հայկազանց բորբոքին ի հուր.
Որք երկնաւորի պսակին էք կարօտ,
Որք երկրաւորին փառաց երկնայորդ։

Հա՛պ՝ օ՛ն արի արանց մանկունք,
Հայրենավրէժքդ Հայկազունք.
Հա՛պ՝ օ՛ն ի զէն գունդագունդ,
Ցեռեալ ի պար թունդ ի թունդ.
Ի զէն ի վրէժ, օ՛ն անդր յառաջ,
Ի զէն ի վրէժ, մի՛ ճախ մի՛ յաջ։

Օ՛ն անդր յառաջ,
Մի՛ ճախ մի՛ յաջ,
Օ՛ն անդր յառաջ,
Ցառա՛ջ, Ցառա՛ջ.
Հա՛պ՝ օ՛ն, յառաջ։

Հայկեան փանդռանց ոտոտընդոստ դռնչին՝ բար-
բառք մարտագոռ.
Դառնագոռոչ անդրաձայնէ Պարսիկ կերկերն ի
շեփոր։

Շարժեն հրեշտակք թիւս լուսադողդոջս
Ճիւաղք ի ճիչ սուր կայտռեն ի դժոխս.
Շռինդն չանթառաք զեթերօք փարի,
Սարսափեն սանդարք ի խօլ խաւարի։

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-22 10:20 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Հա՛պ՝ օն՛ արի արանց մանկունք, և այլն։

Մամիկոնեան սաւառնեցաւ դրօշուն յայերս գոգ
ծալ ծալ,
Ի ճակատուց ի թշնամեաց՝ սա ոչ գիտաց յու-
բաստ կալ.

Հեծեալ հրանըժոյգ վեհին Վահանայ,
Վըրէժ կանչէ արեան կարմիր Վարդանայ.
Փռնչեալ բոցաչունչ գափր ի գարշապար,
Ռազմամուտ վարդի յանժոյժ երիվար։

Հա՛պ՝ օ՛ն արի արանց մանկունք, և այլն։

Հ. Ղ. Վ. ԱԼԻՇԱՆ

ԵՐԳ

ՄԵԾԻՆ ՎԱՐԴԱՆԱՑ

Ի ԺԱՄԱՆԱԿԻ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ

ՈՐ

ԿԱՏԱՐԵՑԱՒ Ի ԴԱՇՏՆ ԱԻԱՐԱՑՐԻ

Հուր բարկութեան համայն Հայոց,
Բորբոքեալ զերդ բոց բարկաճայթ.
Ու կայծականցըս բիւր բիւրոց,
Զարթոյց ի մարտ սարս սառնապատ։

Զի՞ վարանիմք արդ ասա եղբարք,
Դատարկ ձեռամբ, դատարկ ձեռամբ.

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-22 10:20 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Ձեռամբ յԱրտազ Տղմուտ օն դրոյդ ի դրոյդ,
Ի դրոյդ թռչիմք սրանամք, սրանամք, սրանամք։

Հուր զէն ի ձեռին
Ու վրէժ ահագին
Սպասեն և կան
Քաջք Արշակունեան։

Եւ յոր երկինք հանդիսատես
Զաշխոյժ նախնեաց հեղու ի մեզ։

Հապ օ՛ն քաջք քաջաց
Ընդ Սասա՛ն կուրծս
Միսեսցուք մկունս
Ուժգին ի հարուած։

Ռ. ՍԷՏԷՖՃԵԱՆ

ԵՐԳ

Եկէք միաբանինք լուր մը լսելու,
Աքանչելի բարբառներդ ո՞ւր մնաց.

Աւա՜ղ, աւա՜ղ, ուր մնաց։

Ժամանակաւ սրեր, զէնքեր մաքրեցինք.
Ելե՛ք, ելե՛ք դաշտին վրայ զինուեցէք.

Աւ՜աղ, աւ՜աղ, զինուեցէք։

Բանտին ամուր շէնքը հիմէն քանդեցէք,
Ա՜խ Հայաստան, առիւծներդ ո՞ւր մնաց.

Աւ՜աղ, աւ՜աղ ուր մնաց։

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-22 10:20 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Լոյսն դէպ ի պատուհանը բարձրացաւ,
Դաշտին մէջի գառնուկները ո՞ւր մնաց.

Աւ՛աղ, աւ՛աղ, ո՞ւր մնաց։

Գն՛ա, եղբայր, գն՛ա ինծնից հայրենիք,
Իմ ցաւերս շատ են շատ են ես մենիկ.

Աւ՛աղ, աւ՛աղ, ես մենիկ։

Անդ հայրենիք ունիմ ես շատ գանձ և ինչք,
Գանձ իմ, եղբարք, և մըտերիմք թանկագին.

Աւ՛աղ, աւ՛աղ, թանկագին։

Տաճկաց զօրապետներ չան պէս մրմռան,
Ախ՛ Հայաստան, կտրիճներդ ո՞ւր մնաց.

Աւ՛աղ, աւ՛աղ, ո՞ւր մնաց։

Գիշեր ցորեկ տոչորում եմ բանտին մէջ,
Ախ՛ Հայաստան, մարդիկներդ ո՞ւր մնաց.

Աւ՛աղ աւ՛աղ ու՞ր մնաց։

Փայլակում էք մարգարիտի հանքին մէջ,
Թող հայ մեռնինք եղբայրներով բանտին մէջ.

Աւ՛աղ, աւ՛աղ, բանտին մէջ։



Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-22 10:20 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ՀԵՐԻՔ ԱԼ ՀԱՅԵՐ

Հերիք ալ, Հայեր, այսչափ լռութիւն,
Դատաւորներու մեր այս գերութիւն,
Մեզ ինչ վայելէ այսչափ լռութիւն.
Ազգատեաց սրտեր, հերի՛ք, ալ հերիք։

Հայե՛ր, ինչ խնդաք փրկեալ ազգի պէս,
Իշխան և ընչեղ՝ գիտուն մարդու պէս,
Մեզ ինչ վայել է ապրիլ Հայու պէս.
Դպրոց ատողներ, հերի՛ք, ալ հերիք։

Հայե՛ր, խորհեցէք ինչ վիճակ ունիք,
Կրօնք, ազգութիւն հայու սիրտ չունիք,
Մեզ ինչ վայելէ ծախսել Հայու պէս.
Եղբայր ատողներ, հերի՛ք, ալ հերիք։

Հայե՛ր, ինչ կապրիք ազատ մարդու պէս,
Ո՞ւր են թագն ու սուրն ամեն ազգի պէս,
Նայեցէ՛ք չորս դին կա՞յ ազգ ձեզի պէս.
Ամենուն գերի՛, հերի՛ք, ալ հերիք։

Հայե՛ր, խորհեցէք ինչ վիճակ ունինք,
Ո՛չ կեանք, ո՛չ պատիւ, ոչ ոի մ՚հող ունինք։
Ամենուն ձեռքը մենք ենք խաղալիք,
Ջապրած ալ մեռնինք, հերի՛ք, ալ հերիք։

* * *

Generated on 2016-06-22 10:21 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY

ԵՐԳ
ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ
ԱԶԳԱՑԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ

Եկաւ ժամանակ բարեկամ բաղդին,
Նոր գարուն բերաւ Հայաստան երկրին.
Իջաւ յԱրարատ՝ հասաւ ի Տիգրիս,
Դարձաւ դադրեցաւ կեցաւ ի Մասիս.

Եւ ձայն տուաւ անկէ Հայոց,
Ձայն մի Թորգոմայ որդւոց,
Որ մերկանան զցուրտ ձմրան վարագոյր։

Ժամ է արդ Հայեր,
Ընկեր առ ընկեր,
Տամք սիրոյ համբոյր։
Համբոյր մեր ըլլայ վկայ միութեան,
Սահմանադրութեան։

Եւ չիջելափառ Հայրենեաց խորան,
Բացաւ տխրագին զիւր քօղ ճգնութեան.
Հասին հոն Մուսայք, և Ցուսոյ հրեշտակք,
Ախորժ երգեցին խնդութեան նուագ։

Եւ սիրտ տուին անկէ Հայոց,
Սիրտ մի Թորգոմայ որդւոց,
Որ մերկանան հեռ նախանձու վարագոյր։

Ժամ է արդ Հայեր,
Ընկեր առ ընկեր,
Տամք սիրոյ համբոյր։
Համբոյր մեր ըլլայ մեր ուխտ միութեան,
Սահմանադրութեան։

Generated on 2016-06-22 10:21 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY

Ելաւ Հայաստան նոր գարնան ի տես,
Դարձաւ ի շքեղ իւր փառաց հանդէս.
Դարձիր բաղդակոծ ֆնարդ իմ հոգւոյն,
Դարձէ՛ք աւուրք կենաց, դարձէ՛ք յայգ յուսոյն։

Եւ լոյս տուէք անկէ Հայոց,
Լոյս մի Թորգոմայ որդւոց,

Որ մերկանան մութ գիշերին վարագոյր։

Ժամ է արդ Հայեր,
Ընկեր առ ընկեր,
Տամք սիրոյ համբոյր։

Համբոյր մեր ըլլայ կնիք միութեան,
Սահմանադրութեան։

Ս. Հ. ՖԷԼԷԿԵԱՆ

ԵՐԳ

Առտուն կանուխթէ ելնենք,
Քաղցր է վաստակը դաշտին.
Զուարթ կըլլանք ու կերգենք,
Դեղջուկ երգերը մերին։

Անցաւ գիշերը մութ սեաւ,
Ժպտին դաշտերը նորէն,
Պայծառ արեւ ծագեցաւ,
Կանանչ լերանց վրայէն։

Մեր տաւարներ գոմերից
Դուրս են գալիս խայտալով.
Հովիւք երգեն ցընծալով,
Խառնին առուակի ձայնով։

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-22 10:21 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Եզներ լծած արօրին,
Երթանք վարել արտերը.
Զենք փընտրռում հարուստին,
Պալատ զարդեր հանգիստը։

Ժամն է հասած վաստակոց՝
Հրաւէր կարդայ երգ թռչնոց.
Աշխատութիւնը դաշտին,
Սիրուն գանձն է աղքատին։

Թող ճոխն անդին նիրհէ խոր,
Հեշտութեանց մէջ նորանոր.
Անոր կեանքին չեմ ցանկար,
'Թէ սոխ ունիմ ամեն օր։

Աղքատին կեանքն ոսկի է,
Խաղաղ, անփոյթ ու անդորր.
Գեղջկուհւոյն երգ դայլայլ է,
Սոխակի մը տարփաւոր։

Թէ ճոխն անդին սթափի,
Պիտի լինի վշտահար.
Ես այս կեանքին չեմ ցանկար,
Վերինն է ինձ տարփալի։

* * *

ՈՂԲ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Հայաստանի աւերակներ է՞ր ամայի մնացիք,
Ճոխ և հարուստ բնակիչներ ինչ՞ու եղաք մուրացիկ,
Շքեղութիւն քո յիշելով կուլամ... բաւ է մի հանգ-
չիք.

Աւա՜ղ, աւա՜ղ, աւա՜ղ, մի հանգչիք.

Generated on 2016-06-22 10:21 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY

Ա՛խ Հայաստան, վա՛խ Հայաստան,
Պիտի կնքեմ քաղցրիկ կեանքս քո սիրուդ,
Տես հարազատ քաջ որդիքդ միշտ հեռուն,

Աւ՛աղ, աւ՛աղ, միշտ հեռուն։

Հայաստանի կտրիճ եղբարք է՞ր անտարբեր կը ննջէք,
Ելէ՛ք տեսէք Հայու վիճակ, քանի՛ աղգաց գերի են.
Ձեր քաջութեան սէրն՝ յիշելով աչքէս արցունք կը
ցայտեն,

Աւ՛աղ, աւ՛աղ, աւ՛աղ, կը ցայտեն։

Ա՛խ Հայաստան, վա՛խ Հայաստան,
Պիտի կնքեմ քաղցրիկ կեանքս քո սիրուդ.
Տե՛ս հարազատ քաջ որդիքդ միշտ հեռուն,

Աւ՛աղ, աւ՛աղ, միշտ հեռուն։

Հայաստանի այգիք, պարտէզք, վարդենիներ թառ-
մեցաք,
Անուշահոտ բուրմունք սիրուն ի՞նչու մեզմէ գլացաք.
Եդեմական պտղունք, ծաղկունք քո յիշելով կողբամ
ո՛հ,

Աւ՛աղ, աւ՛աղ, աւ՛աղ, կողբամ ո՛հ։

Ախ՛ Հայաստան, վ՛ախ Հայաստան,
Պիտի կնքեմ քաղցրիկ կեանքս քո սիրուդ,
Տես հարազատ քաջ որդիքդ միշտ հեռուն,

Աւ՛աղ, աւ՛աղ, միշտ հեռուն։

Հայաստանի չքնաղ վայրեր Հայ արեամբ են ներկուեր,
Վրէժ առնուլ կաղաղակեն մեր նախահարց չիրիմներ.
Օ՛ն, Հայ սերունդք, դիմեմք ի զէն որ չկոչուիմք
անտարբեր։

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-22 10:21 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Աւ՛աղ, աւ՛աղ, աւ՛աղ, անտարբեր։
Ախ՛ Հայաստան վ՛ախ Հայաստան,
Գիտի կնքեմ քաղցրիկ կեանքս քո սիրուդ.
Տես հարազատ քաջ որդիքըդ միշտ հեռուն.

Աւ՛աղ, աւ՛աղ միշտ հեռուն։

* * *

Ի ՎԱՀԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ

Որդիք Հայկայ, որդիք փառաց,
Զարթի՛ք կոչէ զձեզ Աստուած.
Տեսէ՛ք Մասեաց ի գլուխ ազատ,
Ըզբաղդ Հայոց նորահրատ.
Սչք ձեր ի դոյն. լուսասցին քոց,
Սիրտք վառեսցին սիրտք Հայոց։

Եւ մըխեսցին կուռ բազուկք,
Քան ի հընոց գեղարդունք,
Ցազատութեան ասպարէզ
Թափել չանթիս սաստկավրէժ։

Օ՛ն փողեցէ՛ք, ելէ՛ք ի դղորդ,
Աստուած է ձեր առաջնորդ.
Լուա՞յք, փառք ձեզ կարդան հրաւէրք..
Տեսէ՛ք անդուստ հարց ըստուերք
Անվրէժք առ ձեզ կարկառեն ձեռս.
Որդիք, խո՞ւլ հարցդ էք յաղերս։

Արի՛ք ընդ ձեզ դաշնաւոր՝
Ցրդարութիւնն է հըզօր.
Եւ զլայնալիճն առեալ Հայկ
Էջ քաջորդւոցն ի բանակ։

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-22 10:22 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Օ՜ն . . . ոյք ի Հայս մըտին զերդ Բէլ,
Ուսան սա վայր է անել.
Ըզսուր մահու ած շուրջ պահպան,
Տէր յԵդեմեանն Հայաստան.
Ասէ. Ո՛ զսոյն կոխէ սահմանս,
Մի՛ ողջ դարձցի յիւրն ի վանս.
Որ վասն Հայոց ած երկաթ՝
Ինք պընդեսցի յայն կաշկանդ.
Եւ զոր կոխել գայր անահ,
Համբուրեսցէ թոպամահ.
Արի՛ք իմ քաջք, որդիք Հայկայ,
Վրիժուց ձեր օր հասեալ կայ.
Երկինք զինեալ են՝ դատել հուրբ,
Պըղծողսն ըզձեր երկիր սուրբ։

Թէ զձեր խընդրեն արդ տէգ, աղեղ,
Տո՛ւք, թափեցէ՛ք կարկտի տեղ.
Ցասումն արդար է ձեր Հայք,
Անցեալ գոչէ, Մի՛ դըլայք.
Ազատութեան օր սա ձեր,
Նոցա՝ անտիւն հաս գիշեր։

Արի՛ք, ծաւալ տո՛ւք բարձր յայեր,
Քրիստոսապսակ ըզդրօշ ձեր.
Զէնք ուր Փրկչին նըշան կայ կուռ՝
Մի՛ ևս անկցի կոր յաթուր.
Օ՜ն զաջդ ի վեր ճըգէ՛ք յերկին՝
Երդումըն տո՛ւք ահագին.
Մի՛ ձեռքդ իջցեն՝ մի՛ սուսեր
Դարձցի հանգչել ի յաղդեր,
Ցորչափ դեռ չիթ մի վերջին՝
Մընայ յերակս ոսոխին։

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-22 10:22 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Հա՛պա իմ քաջք, օ՛ն անդր յառաջ,
Զեզ հովանի կայ սուրբ Խաչ.
Բրթեսցին յայն տէգք և փրքին,
Զոր լարեսցէ թշնամին։

Վա՛չ, ոյց հասին փառք ի վրսեմ,
Թրռչիլ գահէդ յերկնից սեմ.
Ահեակ ոտամբ գլուխս ոսոխս
Թոպել գլորել ի դրժոխս.
Մուծանել զաջն յերկնից սահման,
Ազա՛տ թողեալ զՀայաստան։

Խ. Ե. Ն.

ԵՐԳ ԷՐԶՐՈՒՄԻ

Զայներ հնչեց Էրզրումի Հայոց լեռներէն,
Թունդ թունդ ելան Հայի սրտեր զէնքի չաչիւնէն։

Հայ գիւղացին դարուց ի վեր սուր զէնք չըտեսած,
Զգեց խոփն, սուր, հրացան, բահը ձեռք առաւ։

Քնքուշ կեանքը ծանր է թըռում Հայ օրիորդին,
Զէնքը ձեռին յորդորում է Հայոց քաջերին։

Հայ տիկինը ստիպում է ամուսնոյն գնալ,
Պատերազմի դաշտին վերայ վէրք տալ ու՝ստանալ։

Հայ ծերուկը ցուպը ձեռին լալով խնդրում է,
Հայրենիքի ազատութիւն տեսնել ու մեռնիլ։

Անմիութիւն տունը քանդող Հայոց խեղճ ազգին,
Հրաժարեցաւ տեղի տուաւ միութեան ձայնին։

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-22 10:22 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Լսեց Թուրքը ու սառեցաւ արիւնը խեղճին,
Չէր երազել Հային տեսնել, նա այդ վիճակի ն։

Եւրոպայէն լուրը հասաւ Հայ գեղջկի շարժման,
Ուրախական ողջոյն տուաւ Հայրենասիրի։

Ցնծա, մայր մեր ով Հայաստան, որդիքդ միացան,
Ութը տարուան սուգ ու թախիծ մեզնից վերացան։

Ուրախացաւ մայր Հայաստան ելաւ կանգնեցաւ,
Հինգ դարերի սուգ տառապանք մի քիչ մեղմացաւ։

* * *

ՀԱՑՐ ՄԵՐ ՈՐ ԾԵՐԿԻՆՍ

Ո՛վ Հայր մեր, Հայր որ ես յերկին,
Սուրբ եղիցի անուն քոյին,
Եկեսցէ մեզ, Աստուած հրգօր,
Արքայութիւն քո երկնաւոր,
Եղիցին կամք քո խընկելի,
Որպէս յերկինս և ա՛ստ յերկրի։

Ըզհաց հոգւոյն մեր և մարմնոյ,
Տո՛ւր և այսօր չընորհիւ քո,
Եւ թող մեզ թող ըզմեր պարտիս,
Որպէս և մեք թողումք յաստիս,
Ամենեցուն որ մեզ մեղան,
Կամ մընացին մեզ պարտապան։

Մի՛ թողուր զմեզ ի փորձութիւն,
Այլ հանապազ հա՛ս յօգնութիւն,

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-06-22 10:28 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Եւ յամենայն չարին մրցմանց,
Փրրկեա՛ ըզմեզ Տէր գըթութեանց,
Զի քո է միշտ արքայութիւն,
Քո փառք պատիւ և զօրութիւն։

ԽՈՐԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԱՐ—ՊԷՑ

ՀԱՑՈՑ ԳԻՆԻ

Բաժակներ առնունք, եղբա՛րք,
Լիք լիք բաժակներ գինով.
Կարմիր ու ճերմակ գինին,
Մեզ լինի անուշ համով։

Բերներնիս տանենք անվախ,
Զէ՛ դա խառնած կամ խարդախ.
Նեկտար է և ո՛չ գինի,
Խըմե՛նք, մեզ անուշ լինի։

Արաքսայ ջըրով ցօղած,
Հայոց արեւով հասած.
Հայոց աղջիկ է քաղել,
Քընքոյշ ձեռներով քամել։

Այս բերքն է Հայոց երկրին,
Հայաստան տնկած Նոյէն.
Անմահ երկնային գինին,
Նա խմեց, երբ իջաւ Սարէն։

Այս անուշ գինին խմողը,
Սրտէն թո՛ղ հանէ ոխը.
Ամենքս ալ ասենք ամէն,
Որ շատ տայ մեզի ամ էն։

ՔԱՄԱՌ—ՔԱԹԻՊԱՑ

Generated on 2016-06-22 10:28 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY

Generated on 2016-06-22 10:28 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from
HARVARD UNIVERSITY

Generated on 2016-06-22 10:28 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from
HARVARD UNIVERSITY

Generated on 2016-06-22 10:29 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from
HARVARD UNIVERSITY

Generated on 2016-06-22 10:29 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from
HARVARD UNIVERSITY

Generated on 2016-06-22 10:29 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from
HARVARD UNIVERSITY

Generated on 2016-06-22 10:29 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from
HARVARD UNIVERSITY

This book should be returned to the Library on or before the last date stamped below.

A fine is incurred by retaining it beyond the specified time.

Please return promptly.

Generated on 2016-06-22 10:29 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Digitized by Google

Original from
HARVARD UNIVERSITY

Generated on 2016-06-22 10:30 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.hx7sx9
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from
HARVARD UNIVERSITY